II, 24. *Ի քսաներորդ ամի ի կատարումն ուխտի թագաւորութեանն Արշէզի, ժողովեալ զօրք Հայոց՝ հրամանաւ նորին թագաւորեցուցին ի վերայ ինքեանց զԱրշամ որ և Արշամ, որդի Արտաշիսի եղբօր Տիգրանայ, հայր Աբգարու։ Զսա ոմանք յԱսորւոց կոչեցին Մանովազ, ըստ յոլովից սովորութեան կրկին ունելով անուանս. որպէս Հերովդէս Ագրիպաս, և որպէս Տիտոս Անտոնինոս եւ կամ Տիտոս Յուստոս։ Բայց քանզի ի նմին ամի վախճանեցաւ Արշէզ, թողլով զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Արշաւրի, որ էր փոքրիկ մանուկ եւ տղայ, ոչ ոք էր, որ օգնէր Արշամայ՝ ընդդէմ կալ Հռովմայեցւոց. խօսի ընդ նոսա ի հաշտութիւն խաղաղութեան, տալով հարկս ի Միջագետաց եւ ի կողմանց Կեսարու ի ձեռն Հերովդի։ Այս եղև սկիզբն Հայոց մասնաւոր մտանել ընդ հարկաւ Հռովմայեցւոց։ Զայսու ժամանակաւ եղև մեծ ցասումն Արշամայ ի վերայ Ենանոսի ասպետի որում թագակապի. քանզի նա արձակեաց զՀիւրկանոս Հրէից քահանայապետ, զոր գերեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ*

**Іосифъ.**

A. J. xv, 4, 3. ...Ἀρμενίας δ'ἐβασίλευσεν Ἀρταξίας ὁ πρεσβύτατος τῶν ἐκείνου παίδων, διαδρὰς ἐν τῷ τότε. Καὶ τοῦτον Ἀρχέλαος καὶ Νέρων Καῖσαρ ἐκβαλόντες Τιγράνην τὸν νεώτερον ἀδελφὸν ἐπὶ τὴν βασιλείαν κατήγαγον. Ταῦτα μὲν οὖν ἐν ὑστέρῳ.

xv, 2, 2. Ὑρκανῷ δ'ἀναχθέντι, Φραάτης ὁ τῶν Πάρθων βασιλεὺς ἐπ'αὐτὸν ἐπιεικέστερον προσηνέχθη, τὸ τῆς εὐγενείας αὐτοῦ διάσημον προπεπυσμένος. Διὰ τοῦτο δεσμῶν μὲν ἀφῆκεν, ἐν Βαβυλῶνι δὲ κατάγεσθαι παρεῖχεν, ἔνθα καὶ πλῆθος ἦν Ἰουδαίων. Οὗτοι τὸν Ὑρκανὸν ἐτίμων ὡς ἀρχιερέα καὶ βασιλέα, καὶ πᾶν τὸ μέχρις Εὐφράτου νεμόμενον Ἰουδαίων ἔθνος... (Ib. 2, 3) Τοιαῦτα κατὰ τὸ συμφέρον ὑποτεινόντων, Ὑρκανὸς πόθον εἶχεν ἀπιέναι, καὶ γράφων Ἡρώδης παρεκάλει δεῖσθαι Φραάτου καὶ τῶν ἐκεῖ Ἰουδαίων, μὴ φθονῆσαι δυνάμεως κοινὴν ἕξοντι τὴν βασιλείαν· ἄρτι γὰρ εἶναι καιρὸν αὐτῷ μὲν ἐκτῖσαι τὰς χάριτας ὧν εὖ πάθοι, καὶ τραφεὶς ὑπ' αὐτοῦ καὶ περισωθείς, ἐκείνῳ δὲ κομίζεσθαι. Τοιαῦτα γράφων Ὑρκανῷ πέμπει καὶ παρὰ τὸν Φραάτην πρεσβευτὴν Σαραμάλλαν, καὶ δῶρα πλείω... (Ib. 2, 4) Τότε μέντοι γε ἐπειδὴ παρῆν συμπεπεισμένος, ἀφέντος

**Евс.**

**Лабубна.**

c. 1. *Յամին երեք հարիւրերորդի քառասներորդի թագաւորութեանն Յունաց... յորժամ թագաւորեաց Աբգար որդի Մանովազ արքայի ի Միջագետս Ասորւոց յԵդեսիայ քաղաքի*

c. 4. *Գրեաց այնուհետև (Աբգար) թուղթ եւ տայ տանել առ Քրիստոս... զոր գրեալ էր այսպէս. „Աբգար Արշամայ [1]), առ Յիսուս բժիշկ մեծ...*

[1]) Древній армянскій перев. Ц. И. *Евсевія* (I, 13, стр. 61) имѣетъ: „*Աբգար Արշամայ, իշխան աշխարհիս առ Յիսուս փրկիչ և բարերար...:*“



b) Споръ Аршама съ Иродомъ и невольное покореніе перваго послѣднему.

**М. Хоренскій.**

*յաւուրս Տիգրանայ։ Իսկ Ենանոս պատճառի արքայի ասելով, թէ փրկանս խոստացաւ հարեւր քանքար, ակն ունելով առնուլ ի նմանէ, և յանձն էառ տալ։ Վասն որոյ ժամադրութիւն ի վերայ նորա սահմանէ Արշամ։ Եւ նորա առաքեալ զմի յեղբարց իւրոց ի հրէաստան առ Հիւրկանոս, որում անուն էր Սեներիայ, զի տացէ ինչս վասն փրկութեան իւրոյ։ Եւ երթեալ առաքեալն յԵնանոսէ, պատահէ ազատնեալ Հերովդէս զՀիւրկանոս, զի մի ինչ տացէ թագաւորութեան նորա...*

II, 25. *Յետ այսր եղև խռովութիւն ի մէջ Հերովդի արքայի Հրէաստանի եւ միոյն արքայի Արշամայ։ Քանզի Հերովդէս յետ բազում գործոց արութեանց յանդգնեցաւ լինել ի բարեգործութիւնս, շինուածս բազումս առնելով յոլով քաղաքաց, սկսեալ ի Հռովմէ մինչև ցԴամասկոս։ Խնդրեալ ի յԱրշամայ բազմութիւն արանց անարուեստից գործաւորաց, որովք զԱսորւոց զԱնտիոքայ զանանց և զանձուկ հրապարակսն ի խճերացն և ի տղմոյն լուծէ։ Զոր չառեալ յանձն Արշամայ, զօրս ժողովէ ընդդիմանալ Հերովդի. եւ ի ձեռն հրեշտակաց յղէ առ կայսրն ի Հռոմ, զի մի զնա ընդ իշխանութեամբ Հերովդի արասցէ։ Իսկ կայսրն ոչ միայն զԱրշամ չապատէ յիշխանութենէ Հերովդի, այլ և զամենայն Միջերկրայս նմա հաւատայ։ Յայնմ ժամանակի Հերովդէս զանէր Աղէքսանդրէ որդւոյ իւրոյ, որ էր ի հօրէ Տիգրանէ և ի մօրէ թագաւորութենէ Մարաց՝ ի դստերէ Գլափիրէ Կապադովկացւոց, ընդ իւրում ձեռամբ թագաւոր Միջերկրեայցն կացուցանէր, առեալ իւր ի սպասաւորութիւն տասն հազար ի Գաղատացւոց եւ ի Պոնտացւոց։ Տեսեալ զայն Արշամայ, երկրպագէ Հերովդի իբրև տեառն ամենայնի, տալով զոր խնդրէրն գործաւորս. որովք լցեալ զհրապարակս Անտիոքայ տասն հազարաւ երկայնութեամբ, յատակեալ սալայատակ կճաւսալ յատակէր, զի ոտնախարէ յերասանաց անհարթութեանն ապրեսցին առ ոչինչ վնաս առնել քաղաքին։ Բայց Արշամայ վարեալ զթագաւորութիւնն ամս քսան վախճանեցաւ։*

**Іосифъ.**

τε τοῦ Πάρθου καὶ τῶν Ἰουδαίων χρήματα παρασχομένων, ἁπάσῃ τιμῇ δεξάμενος αὐτὸν (Ἡρώδης) ἔντε τοῖς συλλόγοις τὸν πρῶτον ἔνεμε τόπον καὶ παρὰ τὰς ἑστιάσεις προκατακλίνων ἐξηπάτα, πατέρα καλῶν καὶ παντελῶς τὸ τῆς ἐπιβουλῆς ἀνύποπτον πραγματευόμενος... (Ib. 6, 1) Αὐτός τε Ἡρώδης, τὸν Ὑρκανὸν ὁρῶν μόνον ἐπ' ἀξιώματος βασιλικοῦ, συμφέρειν ᾤετο μηκέτ' ἐμποδὼν ἐᾶν, εἰ μὲν περισωθείη καὶ διαφύγοι τὸν κίνδυνον, ἀσφαλὲς ἡγούμενος πρὸς τὸ μὴ τοῖς τοιούτοις αὐτοῦ καιροῖς ἐφορμεῖν ἄνδρα τυχεῖν τῆς βασιλείας ἀξιώτερον...

B. J. I, 21, 11. Τοσαῦτα δ'οὖν κτίσας πλείστας καὶ τῶν ἔξω πόλεων τὸ μεγαλόψυχον ἐπεδείξατο. Τριπόλει μὲν γὰρ καὶ Δαμασκῷ καὶ Πτολεμαΐδι γυμνάσια, Βύβλῳ δὲ τεῖχος, ἐξέδρας τε καὶ στοὰς καὶ ναοὺς καὶ ἀγορὰς Βηρυτῷ κατασκευάσας καὶ Τύρῳ, Σιδῶνί γε μὴν καὶ Δαμασκῷ θέατρα... τὴν δὲ Ἀντιοχέων τῶν ἐν Συρίᾳ πλατεῖαν, οὖ φευκτὴν οὖσαν ὑπὸ βορβόρου κατέστρωσέ τε σταδίων εἴκοσι τὸ μῆκος οὖσαν ξεστῇ μαρμάρῳ, καὶ πρὸς τὰς ὑετῶν ἀποφυγὰς ἐκόσμησεν ἰσομήκει στοᾷ.

A. J. XVI, 1, 2. ...ὁ βασιλεὺς (Ἡρώδης)... γυναῖκας ἐν ἡλικίας γεγονόσιν ἐζεύγνυεν, Ἀριστοβούλῳ μὲν τὴν Σαλώμης θυγατέρα Βερενίκην, Ἀλεξάνδρῳ δὲ τὴν Ἀρχελάου τοῦ Καππαδόκων βασιλέως Γλαφύραν.

B. J. I, 24, 2. ...Γλαφύρα, γενεαλογοῦσα τὴν αὐτῆς εὐγένειαν... κατὰ πατέρα μὲν ἀπὸ Τημένου, κατὰ μητέρα δὲ ἀπὸ Δαρείου τοῦ Ὑστάσπεως οὖσα.

A. J. XV, 7, 3 ...Κἀκεῖνος μὲν τυγχάνει τῆς τιμῆς, Ἡρώδης δὲ γενόμενος ἐν Αἰγύπτῳ Καίσαρί τε μετὰ πλείονος συντυγχάνει τῆς παρρησίας, ὡς ἤδη φίλος καὶ μεγίστων ἠξιώθη. Τῶν δὲ γὰρ Κλεοπάτραν δορυφορούντων Γαλατῶν τετρακοσίοις αὐτὸν ἐδωρήσατο καὶ τὴν χώραν ἀπέδωκεν αὐτῷ πάλιν, ἣν δι' ἐκείνης ἀφῃρέθη· προσέθηκε δὲ καὶ τῇ βασιλείᾳ Γάδαρα καὶ Ἵππον καὶ Σαμάρειαν, ἔτι δὲ τῆς παραλίου Γάζαν καὶ Ἀνθηδόνα καὶ Ἰόπην καὶ Στράτωνος πύργον.

**Ев**

**Лб**

## c) Царствованіе Абгара. Вся Арменія становится данницею Рима. Война съ войсками Ирода.

### М. Хоренскій. II, 26, 27.

II, 26. Թագաւորէ Աբգար որդի Արշամայ ի քսաներորդ ամի Արշաւրի արքայի Պարսից։ Այս Աբգարէս կոչիւր աւագ այր՝ վասն առաւել հեզութեանն եւ իմաստութեանն. որում յետոյ եւ տիքն. զայս ոչ կարելով ուղղախօսել Յունաց եւ Ասորւոց, կոչեցին Աբգարոս։ Ի սորա երկրորդ ամի թագաւորութեանն հարկին հռոմայեցւոց բոլորովիմբ ամենայն կողմանքն Հայոց։ Քանզի հրամայեալ յԱւգոստոս կայսերէ, որպէս ասի ի Ղուկայ աւետարանին, աշխարհագիր լինել ընդ ամենայն տիեզերս. վասն որոյ և ի Հայս առաքեալ գործակալք Հռոմայեցւոց բերելով զպատկերն Աւգոստոսի կայսեր, կանգնեցին յամենայն մեհեանս։ Յայսու ժամանակաւ լինի ծնեալ Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ։ Յայնմ աւուրբք լինի խռովութիւն ի մէջ Աբգարու եւ Հերովդի։ Քանզի Հերովդի հրամայեալ զիւր պատկերն հուպ ի կայսերական պատկերն կանգնել ի մեհեանս Հայոց, զոր չառեալ յանձն Աբգարու, պատճառս ի վերայ նորա յուզէր Հերովդէս։ Առաքէ զզօրս Թրակացւոց եւ Գերմանացւոց ասպատակաւ հինից յերկիրն Պարսից՝ հրաման տուեալ ընդ աշխարհն Աբգարու անցանել։ Իսկ Աբգարու ոչ հաւանեալ, ընդդիմանայ ասելով, եթէ ընդ անապատ է հրաման կայսեր անցանել զօրացդ ի յերկիրն Պարսից։ Ընդ որ դառնացեալ Հերովդէս, անձամբ ինչ ոչ կարէր վճարել, պէս պէս ցաւոց զնա ըմբռնեալ (Ламб. сп. որդւոյն ի նմա եռացեալ), վասն որոյ ի Քրիստոս համարձակեցաւ, որպէս պատմէ Յովսէպոս. առաքէ զեղբօրորդին իւր [զՅուսիփ, какъ видно изъ заголовка], որում տուեալ էր զդուստրն իւր որ էր յառաջ կին Փերովրայ եղբօր իւրոյ։ Եւ նորա առեալ զզօրաժողովսն զօրացն, գայ հասանէ յաշխարհն Միջագետաց, պատահէ Աբգարու ի զօրանիստ գաւառին Բուգնան. եւ ճակատեալ մարտնչին, եւ

### Іосифъ.

B. J. II, 10, 1. Γαΐος δὲ Καῖσαρ ἐπὶ τοσοῦτον ἐξύβρισεν εἰς τὴν τύχην, ὥστε θεὸν μὲν αὐτὸν καὶ δοκεῖν καὶ βούλεσθαι καὶ καλεῖσθαι... Πετρώνιον γοῦν μετὰ στρατιᾶς ἐπὶ Ἱεροσολύμων ἔπεμψεν ἐγκαθιδρύσοντα τῷ ναῷ τοὺς ἀνδριάντας αὐτοῦ, προστάξας εἰ μὴ δέξαιντο Ἰουδαῖοι, τούς τε κωλύοντας ἀνελεῖν καὶ πᾶν τὸ λοιπὸν ἔθνος ἐξανδραποδίσασθαι.

A. J. XVII, 8, 3. Ἐν τεῦθεν δὲ τάφον ἡτοίμαζον τῷ βασιλεῖ (Ἡρώδῃ)... ἐπὶ δὲ τούτοις (ἦν) τὸ στρατιωτικὸν κατὰ οἰκεῖα ἔθνη... πρῶτοι μὲν δορυφόροι, μετὰ δὲ τὸ Θράκιον, ἐπὶ δὲ τούτοις Γερμανοὶ καὶ τὸ Γαλατικόν...

B. J. I, 24, 5. ...Ἀλλ' ἀπέδρα Φερώρας τὸν βασιλικὸν γάμον πρὸς ἔρωτα δούλης. Ἐφ' ᾧ χαλεπήνας Ἡρώδης τὴν μὲν θυγατέρα τῷ πρὸς Πάρθων ὕστερον ἀναιρεθέντι συνέζευξεν ἀδελφιδῷ, Φερώρᾳ δὲ μετ' οὐ πολὺ τὴν ὀργὴν ἀνίει, διδοὺς συγγνώμην τῇ νόσῳ.

### Евсевій.

Chron. II, p. 164. Ուռհայի թագաւորեաց Աբգարոս այր աղնիւ, որպէս Ափրիկանոս պատմէ։

Ib. p. 146. Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ ի Բեթղահէմ Հրէաստանի ծնանի։

Ib. Հերովդէս անհնարին չրդողութեամբ զգածեալ՝ որդնեալ մարմնով ի կենաց սատակէր։

### Лаб.



## d) Построеніе города Эдессы.

### М. Хоренскій.

զօրքն փախստական լինին։ Նոյն հետայն վախճանի եւ Հերովդէս. եւ Հրէից աշխարհին զԱրքեղայոս նորին որդի Աւգոստոս կացուցանէ։

II, 27. Չկնի ոչ բազում աւուրց վախճանի Աւգոստոս և փոխանակ նորա թագաւորէ Հռոմայեցւոց Տիբեր. եւ Գերմանիկոս կեսար եղեալ, յաղէ զառաքեալսն ի Հռովմ զիշխանս Արշաւրի եւ Աբգարու յաղագս պատերազմին նոցա՝ յորում սպանին զեղբօրորդին Հերովդի։ Ընդ որ խոստացեալ Աբգարու, խորհի ապստամբութիւն եւ պատրաստութիւն պատերազմի։ Յայնժամ շինէ քաղաք զտեղի պահպանութեան գնդին Հայոց, ուր յառաջագոյն զգուշանային Եփրատու ի Կասսիոսէ, որ կոչի Եդեսիայ. եւ փոխէ ի նա զարքունիս իւր՝ որ ի Մծբին, եւ զամենայն կուռս իւր զՆաբոգ եւ զԲէլ եւ զԲաթնիկաղ եւ զԹարաթայ եւ զմատեանս մեհենիցն վարժարանին եւ միանգամայն զդիւանս թագաւորացն։

### Іосифъ

### Евсевій.

Chron., II, p. 146. Հրէից աշխարհի զԱրքեղայոս որդի Հերովդի Աւգոստոս կացուցանէ։

Chron. II, p. 148, подъ 3-мъ годомъ 198-й олимпіады. Նուաճութիւն արեգական եղև և Աւգոստոս վախճանեցաւ։

Ib. Միահեծան կալաւ Տիբերիոս ամս ԻԳ։

Ib. подъ 1-мъ годомъ 199-й олимпіады. Գերմանիկոս կայսր յաղթեաց զՊարթևս։

### Лабубна.

c. 24. Այլ զի տեսանեմ ես (ասէ Ադէ) զքաղաքս զայս զի կարի յոյժ լի է հեթանոսութեամբ ընդդէմ Աստուծոյ. ո՞ է այն Նաբոգ կուռք արարեալք, որում երկիր պագանէք ո՞ է Բէլ զոր պատուէքդ. աճաւասիկ են ոմանք ի ձէնջ, որ երկիր պագանեն Բաթնիկաղայ, որպէս զԽառանացիս դրացիս ձեր, եւ Թարաթայ իբրու զԱրուգացիս։

c. 51. Ղբրուբնեա՝ որդի Անակայ, որդւոյ Աբդաշաբայ դպրի թագաւորին գրեաց զամենայն ինչ զոր միանգամ իբր եղեն Ադէի առաքելոյ... միաբանութեամբ ձեռն արկանելով եւ Անանայ հաւատարիմ թագաւորին եւ եդին ի տան յիշատակաց քարտիսից, ուր դնին կարգեալք եւ օրէնք արքունականք...

e) Абгаръ возвращается съ Востока—оказываетъ помощь Аресту въ войнѣ его съ четверованачальникомъ Иродомъ.

### М. Хоренскій. II, 29.

Իբրեւ դարձաւ Աբգարիոս յարեւելից, լուաւ նա զհռովմայեցւոց, թէ ի կասկածանս անկեալ են վասն նորա, որպէս թէ զկնի զօրու գնաց յարեւելս Աբգար։ Վասն որոյ յղէ առ գործակալս հռովմայեցւոց զպատճառս երթալոյն իւրոյ ի Պարս միանգամայն և զգիր ուխտին՝ որ ընդ Արտաշէս եւ ընդ եղբարս նորա՝ տայ տանել։ Եւ նոքա ոչ հաւատացին նմա. վասն զի և թշնամիք չարախօսէին զնմանէ, Պիղատոս և Հերովդէս չորրորդապետ եւ Լիւսանիա (вар. Լիւսինայ) եւ Փիլիպպոս։ Իսկ Աբգարու եկեալ ի քաղաքն իւր յԵդեսիայ, միաբանեաց ընդ Արետայ արքային Պետրացւոց, տալով նմա ի ձեռն Խոսրոնայ (вар. Խոսրոնայ и Խոսրովայ) ուրումն Արծրունւոյ մարտնչել ընդ Հերովդէի։ Քանզի նախ զդուստրն Արետայ կին առեալ Հերովդէի և անարգեալ էր զայն եթող. և զՀերովդիադայ մերձեալ յառնէ իւրմէ եհան կենդանւոյն, յաղագս որոյ սպանեալ զՅովհաննէս Մկրտիչ։ Եղեւ պատերազմ ընդ նա և ընդ Արետ վասն անարգանաց դստերն, յորում սաստկապէս հարեալ սատակեցան զօրքն Հերովդէի յօգնականութենէ քաջացն Հայոց. որպէս յաստուածայնոյ գոգցես տեսչութենէ վրէժս հատուցանել ընդ մահուան Մկրտչին։

### Іосифъ.

A. J. xviii, 5, 1. Ἐν τούτῳ δὲ στασιάζουσιν Ἀρέτας τε ὁ Πετραῖος βασιλεὺς καὶ Ἡρώδης διὰ τοιαύτην αἰτίαν. Ἡρώδης ὁ τετράρχης γαμεῖ τὴν Ἀρέτα θυγατέρα, καὶ συνῆν χρόνον ἤδη πολύν. Στελλόμενος δ' ἐπὶ Ῥώμης κατάγεται ἐν Ἡρώδου ἀδελφοῦ... Ἐρασθεὶς δὲ Ἡρωδιάδος τῆς τούτου γυναικός... τολμᾷ λόγων ἅπτεσθαι περὶ γάμων... ἦν δὲ ἐν ταῖς συνθήκαις, ὥστε καὶ τοῦ Ἀρέτα τὴν θυγατέρα ἐκβαλεῖν... Ὁ δὲ ἀρχὴν ἔχθρας ταύτην ποιησάμενος, περί τε ὅρων ἐν τῇ γῇ τῇ Γαμαλίτιδι, καὶ δυνάμεως ἑκατέρῳ συλλεγείσης, εἰς πόλεμον καθίστανται, στρατηγοὺς ἀπεσταλκότες ἀνθ' ἑαυτῶν. Καὶ μάχης γενομένης, διαφθάρη πᾶς ὁ Ἡρώδου στρατός... Ταῦτα Ἡρώδης γράφει πρὸς Τιβέριον. Ὁ δὲ, ὀργῇ φέρων τὴν Ἀρέτα ἐπιχείρησιν, γραφεῖ πρὸς Οὐϊτέλλιον πόλεμον ἐξενεγκεῖν, καὶ ἤτοι ζωὸν ἑλόντα ἀναγαγεῖν δεδεμένον, ἢ κτεινομένου πέμπειν τὴν κεφαλὴν ἐπ' αὐτόν...

Ib. 5, 2. Τισὶ δὲ τῶν Ἰουδαίων ἐδόκει ὀλωλέναι τὸν Ἡρώδου στρατὸν ὑπὸ τοῦ Θεοῦ, καὶ μάλα δικαίως τιννυμένου κατὰ ποινὴν Ἰωάννου τοῦ ἐπικαλουμένου Βαπτιστοῦ. Κτείνει γὰρ τοῦτον Ἡρώδης, ἀγαθὸν ἄνδρα καὶ Ἰουδαίους κελεύοντα, ἀρετὴν ἐπασκοῦντας...

### Евсевій.

Chron. p. 146, подъ 1-ымъ годомъ 196-й олимпіады. Չորրորդապետս կացուցանէ Աւգոստոս՝ զՀերովդէս եւ զԱնտիպատրոս եւ զԼիւսանիա եւ զՓիլիպպոս զեղբարս Արքեղաւոսի։

Ц. И. I, 9. Եւ իբրեւ դեռ իշխանքն չորրորդք ամենայն Հրէաստանի առաջնորդէին՝ Հերովդէս և Լիւսանիաս և Փիլիպպոս.

### Лабубна.

с. 18—19. Եւ իբրեւ ժողովեցան ամենայն քաղաքն (Ուռհա) արք եւ կանայք ընտրանին թագաւորին և էին անդ Աւիդայ եւ Ղաբբու եւ Խաւիէս եւ Բարքաղաբայ եւ Ղուբուրնեա եւ Խոսրան եւ Շամշագրամ... գլխաւորք եւ նախարարք թագաւորին (Աբգարու)...



f) Абгаръ отправляетъ князей къ Марину: они видятъ Спасителя нашего Іисуса Христа.— Начало обращенія Абгара.

### М. Хоренскій. II, 30.

Ընդ այն ժամանակս եկաց ի գործ հոգաբարձութեան կայսեր ի վերայ Փիւնիկեցւոց և Պաղեստինացւոց, Ասորւոց եւ Միջագետաց Մարինոս (слѣд. читать: Սաբինոս) որդի Ստորգեայ, առ որ առաքեաց Աբգարոս երկուս ի գլխաւորաց իւրոց՝ զՄարիհաբ բդեշխն Աղձնեաց և զՇամշագրամ նահապետ Ապահունեաց տոհմին և զԱնան հաւատարիմ իւր ի քաղաքն Բեթգուբին զգացուցանել նմա զպատճառս երթալոյն իւրոյ յարեւելս, ցուցանելով եւ զգիր ուխտին որ ընդ Արտաշէս եւ ընդ եղբարս իւր, եւ առնել զնա թիկունս օգնականութեան։ Որոց եկեալ գտին զնա յԵլեւթերուպօլիս։ Եւ նորա ընկալեալ զնոսա խաղաղութեամբ և մեծարանօք, առնէ պատասխանի Աբգարու. Մի՛ կասկածեր ի կայսերէ սակս այնր, միայն զի զհարկեալն լիով փութասցիս։ Եւ նոցա դարձեալ անտի, եկին յԵրուսաղէմ տեսանել զՓրկիչն մեր Քրիստոս վասն լրոյ համբաւոյ սքանչելագործութեանցն, որում և ականատես եղեալ, պատմեցին Աբգարու։ Ընդ որ զարմացեալ Աբգարոս, հաւատաց ճշմարտապէս իբր յարգարեւ որդի Աստուծոյ, և ասէ. Այս զօրութիւնք ոչ մարդոյ են, այլ Աստուծոյ. զի չիք ոք ի մարդկանէ, որ կարէ զմեռեալս յարուցանել, բայց միայն Աստուած։ Եւ

### Лабубна.

с. 1—14. Յամին երեքհարիւրերորդի քառասներորդի թագաւորութեանն Յունաց, ի թագաւորութեան Տիբերեայ կայսեր Հռովմայ, յորժամ թագաւորեաց Աբգար որդի Մանովայ արքայի ի Միջագետս Ասորւոց յԵդեսեայ քաղաքի. զկնի երեսուն եւ երկու ամաց՝ որ օր ԺԲ. էր Տրեայ ամսոյ, առաքեաց Աբգար արքայ զՄարիհաբ և զՇամշագրամ զգլխաւորս եւ զպատուականս թագաւորութեանն իւրոյ, եւ զԱնան հաւատարիմ իւր ընդ նոսա հանդերձ թղթովք ի քաղաքն որ կոչի Ելեւթերուպօլիս եւ յասորի լեզու Բեթգուբրին, առ մեծ եւ պատուական Սաբինոս Ստորգեայ, որ էր հոգաբարձու կայսեր եւ էր իշխան Ասորւոց և ի վերայ Փիւնիկեցւոց և Պաղեստինացւոց. եւ տարան նմա զթուղթս վասն արքունի իրաց։ Եւ իբրեւ չոգան նոքա առ նա, ընկալաւ զնոսա խնդութեամբ և մեծարանօք, եւ եղեն առ նմա աւուրս քսան և հինգ. և գրեաց նոցա թուղթս փոխանակ թղթոցն, զոր բերին նմա, եւ առաքեաց զնոսա անդրէն առ թագաւորն Աբգար։ Եւ ելեալ նոցա ի նմանէն՝ գնացին դէպուղիղ ընդ ճանապարհ, որ երթայր յԵրուսաղէմ. և տեսեալ նոցա զբազմութիւն մարդկանն որք գային ի հեռաստանէ զի տեսցեն զՔրիստոս, քանզի էր ելեալ համբաւ սքանչելեացն ընդ ամենայն աշխարհն. գնացին եւ նոքա ընդ նոսա, Մարիհաբ և Շամշագրամ եւ Անան՝ հաւատարիմ արքային։ Իբրեւ մտին յԵրուսաղէմ, նոյն ժամայն տեսին զՔրիստոս և ուրախ եղեն մեծապէս հանդերձ ժողովրդովն որ ընդ նոսա... Եւ գնացեալ անտի եկին յՈւռհա քաղաք եւ մտեալ նոցա առաջի Աբգարու թագաւորի տեառն իւրեանց՝ ետուն նմա զպատճէն թղթոցն զոր բերին անտի։ Եւ զկնի ընթեռնլոյ զթուղթն սկսան պատմել առաջի թագաւորին զամենայն ինչ զոր տեսին, զոր առնէր Քրիստոս յԵրուսաղէմ։ Եւ ընթերցեալ Անան առաջի նորա զամենայն որ ինչ միանգամ գրեաց եւ եբեր ի տուն իւր. եւ լուեալ զայն Աբգարու արքային, զարմանայր մեծապէս եւ ասէր ցպետս և ցիշխանս իւր՝ որ կային

### Евсевій.

| Хоренскій. | Лабубна. | Евсевій. |
| --- | --- | --- |
| *քանզի տագնապեալ էր մարմինն նորա ի չարաչար ցաւոց, որ պատահեցին նմա ի Պարսից աշխարհին յառաջ քան զեւթն ամ, եւ ի մարդկանէ ոչ եղեւ հնար բժշկութեան, ետ տանել նմա թուղթ աղաչանաց, գալ եւ բժշկել զնա ի ցաւոյն, օրինակ այս:* | *առաջի նորա. Այս զօրութիւնքս ոչ են մարդկան, այլ Աստուծոյ. քանզի չէր ոք ի մարդկանէ, որ կարէ յարուցանել զմեռեալս, բայց միայն Աստուած: Կամեցաւ ինքնին երթալ ի Պաղեստինէ, զի աչօքն իւրովք տեսցէ զՔրիստոս եւ զամենայն զնշանսն զոր առնէր. և վասն զի չէր իւր իշխանութիւն աշխարհն Հռովմոց՝ ընդ որ ինքն երթալոց էր, զտեղի կալաւ, զի մի պատճառք ինչ լինիցին թշնամութեան: Գրեաց այնուհետեւ թուղթ եւ ետ տանել առ Փրկիչն ի ձեռն Անանեայ հաւատարմի... զոր գրեալ էր այսպէս.* | Ц. И., ı, 13. *Պատմութիւն վասն Թադէոսի առաքելոյն Ուռհայի: Իսկ պատմութիւնն, որ եղեւ վասն Թադէոսի, բստ այնմ օրինակի էր: Ի ժամանակի մինչդեռ քարոզէր աստուածպաշտութիւն Փրկչին մերոյ եւ տեառն Յիսուսի Քրիստոսի առ ամենայն մարդիկ, վասն սքանչելի զօրութեանցն զոր գործեաց նա... եւ Աբգար արքայ հեթանոսաց որ յարեւելից կողմանէ Եփրատու անուանէր քաջութեամբ, տագնապեալ մարմին նորա չարաչար ցաւովք, որ ի մարդկանէ չէր նորա բժշկութեան: Եւ իբրեւ լուաւ եւ ուսաւ զանունն Յիսուսի, եւ վասն զօրութեանցն զոր գործէր նա, եւ առ հասարակ ամենայն մարդ վկայէր վասն նորա, ետ տանել առ նմա թուղթ աղօթից ի ձեռն ծառայից իւրոց, և աղաչէր գալ եւ բժշկել զնա ի հիւանդութենէ իւրմէ... պատճէն հրովարտակին որ գրեալ է յԱբգար արքայէ առ Յիսուս. և առաքեաց նմա ի ձեռն Անանիայ սուրհանդակի յԵրուսաղէմ: Եւ էր գրեալ հրովարտակն՝ օրինակ այս:* |



g) Письмо Абгара къ Спасителю Іисусу Христу.

| М. Хоренскій. II, 31. | Евсевій. |
| --- | --- |
| *Աբգար*[1]) *Արշամայ իշխան աշխարհի, առ Յիսուս Փրկիչ եւ բարերար, որ երեւեցար* (вар. *երեւեցաւ*) *աշխարհի Երուսաղէմացւոց, ողջոյն: — Լուեալ է իմ վասն քո եւ վասն բժշկութեանդ, որ լինին ի ձեռս քո առանց դեղոց եւ արմատոյ. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել և կաղաց գնալ եւ զբորոտս սրբել, եւ զայսս պիղծս* [вар. *եւ զդեւս*] *հանես, եւ որ միանգամ չարչարեալ են երկար հիւանդութեամբք՝ բժշկես դու եւ զմեռեալս յարուցանես: Եւ իբրեւ լուայ վասն քո զայս ամենայն, եդի ի մտի իմում մի յերկուց աստի. կամ թէ դու Աստուած իցես, իջեալ յերկնից գործես զայդ, կամ թէ որդի իցես դու Աստուծոյ եւ զայդ առնես: Արդ վասն այնորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել զքեզ, զի աշխատ լինիցիս և եկեսցես առ իս եւ բժշկեսցես զհիւանդութիւնս, զոր ունիմ ես: Նաեւ լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն եւ կամին չարչարել զքեզ. բայց քաղաք մի փոքրիկ եւ գեղեցիկ է իմ, եւ բաւական է մեզ երկոցունցս:*<br><br>*Որոց տարեալ զթուղթն՝ պատահեցին նմա յԵրուսաղէմ: Զայս վկայէ աւետարանական բանն, եթէ էին ոմանք ի հեթանոսաց եկելոց առ նա. վասն որոյ ոչ համարձակին, որք լուանն, ասել զՅիսուս, այլ զՓիլիպպոս և զԱնդրէաս: Իսկ ինքն Փրկիչն յայնմ ժամանակի յորում կոչեացն զնա, ոչ առ յանձն, բայց թղթոյ արժանի արար զնա, որ ունի այսպէս:* | Ц. И., стр. 61. *Աբգար Արշամայ՝ իշխան աշխարհիս առ Յիսուս Փրկիչ և բարերար որ երեւեցաւ յաշխարհի Երուսաղէմացւոց, ողջոյն: Լուեալ է մեր վասն քո և վասն բժշկութեանդ, որ լինի ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. զի որպէս ասի, տաս դու կուրաց տեսանել եւ կաղաց գնալ, զբորոտս սրբես եւ զայս պիղծս եւ զդեւս հանես, և որ միանգամ չարչարեալ են ընդ յերկար հիւանդութեամբք՝ բժշկես դու, և զմեռեալս յարուցանես: Եւ իբրեւ լուայ վասն քո զայս ամենայն, եդի ի մտի իմում մի յերկուց. կամ թէ դու Աստուած իցես իջեալ յերկնից և գործես զայդ, և կամ թէ որդի Աստուծոյ իցես և զայդ առնես: Արդ վասն այսորիկ գրեցի ես աղաչել զքեզ, զի աշխատ լիցիս և եկեսցես առ իս և բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես: Նաեւ լուայ, զի Հրեայք տրտնջեն զքէն և կամին չարչարել զքեզ: Բայց քաղաք մի փոքրիկ և գեղեցիկ է իմ և բաւական է մեզ երկոցունցս:*<br><br>Ibid., стр. 60. ...*Իսկ Փրկիչն մեր յայնմ ժամանակի յորում կոչեաց զնա ոչ է առ յանձն գնալ, բայց թղթոյ արժանի արար զնա.* |

[1]) Хоренскій, какъ видно, приводитъ переписку Абгара со Спасителемъ по Евсевію, *буквально* придерживаясь его редакціи, почему мы считаемъ излишнимъ каждый разъ обозначать тождественныя слова *курсивомъ*. Для сравненія не лишне имѣть передъ глазами ту же переписку по Лабубнѣ. Въ нижеслѣдующихъ отрывкахъ Лабубны *курсивомъ* обозначены нами тѣ слова и выраженія, которыхъ нѣтъ ни у Хоренскаго, ни у Евсевія.

„Աբգար Արշամայ, առ Յիսուս բժիշկ մեծ, որոյ երեւեալ յերկիր Հրէաստանի ի քաղաքիդ յԵրուսաղէմ, ողջոյն: Տէր, լուայ վասն քո և վասն բժշկութեանցդ քոց զոր առնես. զի ոչ դեղովք և արմատովք բժշկես դու՝ այլ բանիւ. զկոյրս լուսաւորես, զկաղս գնացուցանես, զբորոտս սրբես և [illegible] խլից լսել տաս, զդեւս հալածես, զմեռեալս յարուցանես և զամենայն չարչարեալս և [illegible] բժշկես: Եւ իբրեւ լուայ ես զայսպիսի մեծամեծ սքանչելիս զոր առնես դու, եդի ի մտի իմում և հաւատացի, թէ Աստուած ես դու և որդի Աստուծոյ, որ իջեր յերկնից և առնես զայդ ամենայն: Վասն այսորիկ գրեցի առ քեզ աղաչանս գալ քեզ առ իս, [illegible] և բժշկեսցես զիս ի ցաւոց եւ ի հիւանդութենէ իմմէ, որպէս հաւատացի ի քեզ. Եւ զայս ես լուայ, եթէ Հրեայքդ տրտնջեն զքէն և հալածեն զքեզ և կամին կորուսանել զքեզ. քաղաք մի է իմ փոքրիկ և վայելուչ և բաւական է երկոցունց մեզ բնակել ի նմա խաղաղութեամբ:“ (Изд. венец., стр. 4—5).

h) Отвѣтъ на письмо Абгара, написанный апостоломъ Ѳомою по приказанію Спасителя.

## М. Хоренскій. II, 32.

*Պատասխանի թղթոյն Աբգարու, զոր գրեաց Թովմաս առաքեալն հրամանաւ Փրկչին։*

*„Երանի* [1]) *իցէ այնմ, որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս։ Զի որք տեսանենն զիս՝ ոչ հաւատասցեն յիս, և որք ոչն տեսանեն՝ նոքա հաւատասցեն և կեցցեն։ Իսկ վասն այնր, զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ, վասն որոյ առաքեցայ ես։ Եւ իբրև կատարեցից զայս, ապա համբարձայց առ այն, որ առաքեացն զիս. և յորժամ համբարձայց, առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ և կեանս քեզ և որոց ընդ քեզ են շնորհեսցէ։“*

*Զայս թուղթ* [2]) *եբեր Անան սուրհանդակ Աբգարու, ընդ որում և զկենդանագրութիւն փրկչական պատկերին, որ կայ յԵդեսացւոց քաղաքին մինչև ցայսօր ժամանակի։*

## Евсевій.

**Ц. И.**, стр. 62. *Պատասխանի հրովարտակին զոր ինչ գրեցաւ յԵրուսաղէմէ ի ձեռն Անանիա սուրհանդակի առ Աբգար իշխան աշխարհի։*

*Երանի իցէ այնմիկ, որ հաւատայ յիս՝ իբրև ոչ իցէ տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ այսպէս. զի որք տեսանիցեն զիս, նոքա հաւատասցեն և կեցցեն և որք ոչն տեսանիցեն զիս, նոքա հաւատասցեն եւ կեցցեն։ Իսկ վասն այսր, զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, արժան է ինձ կատարել աստ զամենայն ինչ, վասն որոյ առաքեցայ ես. և իբրև կատարեցից զայս, ապա վերացայց առ այն, որ առաքեացն զիս։ Եւ յորժամ վերացայց՝ առաքեցից քեզ մի յաշակերտաց աստի իմոց, զի զցաւս քո բժշկեսցէ եւ կեանս տացէ քեզ և որ միանգամ ընդ քեզ են։*

[1]) Изъ Лабубны не видно, чтобы на посланіе Абгара послѣдовалъ *письменный* отвѣтъ Спасителя: Іисусъ устно поручаетъ Анану передать Абгару.

Եւ ընկալեալ Յիսուսի զթուղթն ի տան քահանայապետին Հրէից, ասէ ցԱնան հաւատարիմ արքային. Երթ և ասա Տեառն քում, որ առաքեացն զքեզ առ իս. „Երանի է քեզ, զի հաւատացեր յիս, մինչչև տեսեալ քո զիս. զի այսպէս գրեալ է վասն իմ, զի որք տեսանեն զիս, ոչ հաւատան, և որք ոչ տեսանեն՝ հաւատասցեն։ Եւ զի գրեցեր դու առ իս գալ ինձ առ քեզ, վասն որոյ առաքեցայ ես յաշխարհ, կատարեալ է ամենայն. այսուհետև վերանամ ես առ Հայր իմ՝ որ առաքեացն զիս. և յորժամ վերացայց առ Հայր, առաքեցից առ քեզ մի յաշակերտաց իմոց, զի բժշկեսցէ զքեզ և զամենայն ժողովուրդ քո՝ որ ընդ քեզ. և դարձուսցէ զքեզ ի կեանսն յաւիտենականս։ Եւ քաղաքդ քո օրհնեալ լիցի, և թշնամի մի ևս տիրեսցէ դմա յաւիտեան։“ — Եւ լուեալ զայս ամենայն Անան, զոր ասաց ցնա Յիսուս, առեալ նկարեաց զպատկերն Յիսուսի ընտիր դեղովք, քանզի արուեստաւոր թագաւորին էր... (Изд. венец., стр. 5—6).

[2]) Эти строки заимствованы у Лабубны, какъ это видно изъ предыдущаго отрывка.





## Хоренскій. II, 33.

*Բայց յետ համբառնալոյ Փրկչին մերոյ՝ Թովմաս առաքեալ, մի յերկոտասանիցն, առաքեաց զմի յեօթանասնից անտի՝ զԹադէոս, ի քաղաքն Եդեսիայ՝ բժշկել զԱբգար և աւետարանել ըստ բանին Տեառն։ Որոյ եկեալ ի տուն Տուբիայ իշխանի Հրէի, զոր ասեն լինել յազգէն Բագրատունեաց. որոյ խուսեալ յԱրշամայ՝ ոչ ուրացաւ զհրէութիւնն ընդ այլ ազգականս իւր, այլ նոյն օրինօքն եկաց մինչև հաւատալ ի Քրիստոս։ Եւ ել համբաւ նորա ընդ ամենայն քաղաքն։ Լուեալ Աբգարու ասէ. Նա է վասն որոյ գրեացն Յիսուս. և իսկոյն կոչեաց զնա։ Եւ եղև ի մտանելն Թադէի, տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսն Թադէի. և յարուցեալ ի գահոյիցն անկաւ ի վերայ երեսաց իւրոց և երկիր եպագ նմա. և զարմացան ամենայն իշխանքն, որ շուրջն կային, զի ոչ գիտացին զտեսիլն։ Ասէ ցնա Աբգար. Եթէ դու ես աշակերտ օրհնելոյն Յիսուսի, զոր ասաց առաքել ինձ այսր, և կարո՞ղ իցես բժշկել զցաւս իմ։ Պատասխանի ետ Թադէ. Եթէ հաւատասցես ի Քրիստոս Յիսուս յՈրդին Աստուծոյ, տացին խնդրուածք սրտի քո։ Ասէ ցնա Աբգար. Ես հաւատացի ի նա և ի Հայրն նորա. վասն որոյ կամեցայ առնուլ զզօրս իմ և գալ կոտորել զՀրեայսն, որ խաչեցին զնա, եթէ ոչ էր արգելեալ վասն թագաւորութեանն Հռովմայեցւոց։*

*Եւ յայսմ բանէ սկիզբն արարեալ Թադէի, աւետարանեաց նմա և քաղաքի նորա. և եդեալ նորա զձեռն ի վերայ բժշկեաց զնա, և զԱբդիու պոդագրոս իշխան քաղաքին և պատուական յամենայն տանն արքայի. նաև զամենայն, որ էին ի քաղաքին հիւանդք և ախտաժետք, բժշկեաց։ Եւ հաւատացին ամենեքեան. և մկրտեցաւ ինքն Աբգար և ամենայն քաղաքն. եւ զդուրս տաճարաց կռոցն փակեցին. և որ ի վերայ բագնացն և սեանցն կային պատկերքն՝ ծածկեալ պատեցին եղեգամբք. և ոչ զոք ածէր բռնութեամբ ի հաւատս,*

## Евсевій.

Ibid. *Յետ վերանալոյն Յիսուսի, առաքեաց Յուդայ Թովմաս զԹադէոս առաքեալ զմի յեօթանասնիցն անտի. և իբրև եկն՝ լուծաւ նա առ Տուբիա, որդւոյ Տուբիաթայ։ Եւ իբրև լուր եղև վասն նորա, պատմեցին Աբգարու և ասեն. եթէ եկն առաքեալն Յիսուսի այսր, որպէս և յղեաց առ քեզ... Եւ յղեաց կոչեաց... Իսկ իբրև ելին դիպեցան, զի կային անդ իշխանքն նորա. և նոյն ժամայն մինչդեռ մտանէր նա տեսիլ մեծ երևեցաւ Աբգարու յերեսն Թադէոսի առաքելոյ. և յորժամ ետես Աբգար զԹադէոս՝ անկաւ և երկիր եպագ նմա. և զարմացան ամենեքեան որ միանգամ կային անդ. զի նոքա ոչ տեսին զայն տեսիլ այն որ միայն Աբգարու երևեցաւ։ Եւ նա հարցանէր զԹադէոս եթէ արդարև ճշմարիտ աշակերտ իցես դու Յիսուսի որդւոյն Աստուծոյ, այն որ ասացն ցիս, եթէ առաքեմ առ քեզ զմի յաշակերտաց իմոց, զի նա բժշկեսցէ զքեզ և տացէ քեզ կեանս։ Եւ Թադէոս պատասխանի ետ նմա և ասէ. քանզի մեծապէս հաւատացեր դու յայնմ որ առաքեացն զիս, վասն այսորիկ առաքեցայ ես առ քեզ. և դարձեալ՝ եթէ հաւատասցես դու ի նա, տացին քեզ խնդրուածք սրտի քո։ Ասէ ցնա Աբգար. զի այսպէս ասէ հաւատացի ի նա, զի եւ զՀրեայսն որ ի խաչ հանին զնա, կամեցայ ես զզօրս առնուլ և գալ կոտորել զնոսա, եթէ ոչ էր արգելեալ վասն թագաւորութեանն Հռովմայեցւոց.. Ասէ Թադէոս. վասն այսորիկ դնեմ ես զձեռն իմ ի վերայ քո յանուն նորա. և իբրև արար նա զայս՝ նոյն ժամայն բժշկեցաւ նա ի հիւանդութենէ իւրմէ... բայց ոչ զնա միայն այլ և զԱբդիու զորդի Աբդիայ, զի էր պոտագրոս. զի և նա եմուտ և անկաւ առ ոտս նորա։ Եւ իբրև եկաց յաղօթս ի վերայ նորա՝ բժշկեցաւ նա։ Եւ զայլս բազումս զհիւանդս նոցա բժշկեաց նա. և առնէր զսքանչելիս մեծամեծս եւ քարոզէր զբանն Աստուծոյ։*

## Лабуб.

**М. Хоренскій.**

քննեցաւ նա ի սենկղիտոսէն, արհամարհեաց անհնազանդութեան, զի ոչ քննեցաւ նա յառաջագոյն ի սենատէ։ Այլ մեք տուաք հրաման ամենայն ումեք, որում և հաճոյ թուեսցի Յիսուս, ընկալցին զնա ընդ աստուածս. և մահ այնոցիկ սպառնացեալ, որ չարախօսս լինիցին զքրիստոնէից։ Եւ վասն ժողովրդեանն Հրէից, որ յանդգնեցան խաչել զնա, զորմէ լուայ, թէ ոչ արժանի խաչի էր նա և մահու, այլ պատուոյ և երկրպագութեան, յորժամ առից պարապումն ի պատերազմէս Սպանիացւոց ապստամբելոց յինէն, քննեալ հատուցից նոցա զարժանն [1])։

**Евсевій.**

տուաւ ինձ քննել եթէ Աստուած է։ Իսկ ինքն Տիբերիոս սենկղիտոսին մատոյց զայս բանս։ Իսկ ինքն անհնազանդեալ իբրև լուաւ զբանսն՝ արհամարհեաց, զի ոչ քննեցաւ նա նախ ի նոցանէ ըստ առաջին սովորութեանն որ էր. զի ի մէջ Հոռոմոց ոչ լինէր Աստուած, բայց եթէ ի խորհրդ դենէ և ի հրամանէ սենկղիտոսին... զայս ինչ ասաց Տէրտեղիանոս... ի պատմելն իւրում այսպէս. ասէ մեր առաքեսցուք, ասէ, և ի ընութենէ վասն այսց օրէնաց օրէնս հինս ունիք դուք, եթէ Աստուած է հրամանէ թագաւորի միայնոյ մի հաստատեսցի, մինչև փորձեալ քննեսցի նա ի սենկղիտոսէ... Իսկ նա (Տիբերիոս) եկաց մնաց ի հրամանի իւրում, և սպանումն հանէր ամբաստանողաց նոցա ամենայնի, որ չարախօս լինէին զքրիստոնէից...

**Лабубна.**

Եւ վասն Պիղատոսի դատաւորի զոր արարեալ էր իմ անդ՝ առաքեցի նմա փոխանակ, եւ զնա լուծի թշնամանօք. զի անդ նա զօրինօք և արար զկամս Հրէից և խաչեաց զՔրիստոս յանդիման նոցա. վասն որոյ լուայ թէ և ոչ խաչի և մահու արժանի էր, այլ պատուոյ և երկրպագութեան և մեծարանաց ի նոցանէ արժանի էր. և առաւել ես զի աչօք իւրեանց տեսանէին զամենայն ինչ զոր առնէր նա. բայց դու ըստ մտերմութեան քում և հաստատուն ուխտի քո և հարց քոց որ ընդ իս է, բարիոք արարեր զի գրեցեր ա իս զայս։

[1]) Слѣдующее за симъ второе посланіе Абгара къ Тиберію, а равно и послѣдующія два письма того же Абгара — ассирійскому царю Нерсесу, упоминаемому у Лабубны (стр. 36—37), и персидскому царю Арташесу (?),—составлены, по всей вѣроятности, самимъ Хоренскимъ.

# ГЛАВА VI.

## О Санатрукѣ.

**М. Хоренскій. II, 34, 35, 36.**

II, 34. Յետ մահուանն Աբգարու բաժանի թագաւորութիւնն Հայոց յերկուս. քանզի Անանուն որդի նորա կապեաց թագ՝ թագաւորել յԵդեսիա, և քեռորդի նորա Սանատրուկ ի Հայս։ Գտանի որ ինչ առ սոցա ժամանակաւ յառաջագոյն գրեալ յայլոց. զգալուստ առաքելոյն ի Հայս, և հաւատալ Սանատրկոյ, և թողուլ զհաւատն յերկիւղէ նախարարացն Հայոց, և կատարումն Առաքելոյն և որք ընդ նմա ի գաւառին Շաւարշան, որ այժմ կոչի Արտազ, և պատառումն քարին և յիրար գալ և ընդունել զնշխարսն Առաքելոյն, և առնուլ անտի աշակերտացն և թաղել ի դաշտին. և մարտիրոսանալ թագաւորին դստերն Սանդխտոյ հուպ ի ճանապարհն, և աստ ուրեմն յայտնել նշխարաց երկոցունց և փոխել յԱռապարն։ Այս ամենայն, որպէս ասացաք, այլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ, ոչինչ կարևորագոյն համարեցաք ոճով երկրորդել։ Դոյնպէս և որ ինչ վասն կատարմանն Ադդէի աշակերտի Առաքելոյն յԵդեսիա յորդւոյն Աբգարու, գտանի յայլոց պատմեալ յառաջագոյն քան զմեզ։ Որ իբրև թագաւորեաց յետ մահուան հօրն, ոչ եղև ժառանգորդ հայրենի առաքինութեանն, այլ եբաց զտաճարս կռոցն և կալաւ զպաշտօն հեթանոսութեանն. և յղեաց առ Ադդէ. զի արասցէ նմա խոյր բեհեզեայ անգուածով ոսկւոյ, որպէս յառաջագոյն առնէր հօրն նորա։ Եւ պատասխանի ընկալաւ, թէ ոչ արասցեն ձեռք իմ խոյր զագաթան

**Мучен. ап. Θаддея и дѣвы Сандухтъ.**

(«Սոփերք», VIII). (с.11)...Իսկ այսոսուրբ առաքեալս (Թադէոս) էր լցեալ լուսեղէն խորհրդով, վկայեալ Հոգւովն սրբով. զայր հասանէր ի Միջագետս Ասորւոց... (с. 12) Եւ լուեալ թագաւորին Աբգարու զսրբոյ առաքելոյն Թադէոսէ և զսքանչելիսն զոր առնէր, կարծելով իմացաւ թէ նա է որ առաքեցաւ ի Քրիստոսէ... և բժշկեաց զնա անուամբ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի... (с. 13) Եւ ինքն ս. առաքեալն առնոյր զաշակերտսն և փութով հասանէր յաշխարհն Հայոց առ թագաւորն Սանատրուկ, ի գաւառին Արտազ, ի քաղաքագիւղն Շաւարշան, յապարանս արքունի... (с. 14) Յայնժամ եկեալ դուստր թագաւորին, որում անուն էր Սանդուխտ... և հասեալ ի գիշերի առ ս. առաքեալն լսէր ի նմանէ զբանն քարոզութեան աւետարանին... Եւ տեսեալ բրմաժողով

**Іосифъ Фл.**

A. J. xx, 2, 1.

Κατὰ τοῦτον δὲ τὸν καιρὸν τῶν Ἀδιαβηνῶν βασιλὶς Ἑλένη καὶ ὁ παῖς αὐτῆς Ἰζάτης εἰς τὰ Ἰουδαίων ἔθη τὸν βίον μετέβαλλον διὰ τοιαύτην αἰτίαν... (Ib. 2, 6) Ἑλένη δὲ... ὁρῶσα τὰ μὲν κατὰ τὴν βασιλείαν εἰρηνευόμενα, τὸν δὲ υἱὸν αὐτῆς μακάριον καὶ παρὰ πᾶσι ζηλωτὸν καὶ τοῖς ἀλλοεθνέσι διὰ τὴν ἐκ θεοῦ πρόνοιαν, ἐπιθυμίαν ἔσχεν εἰς τὴν Ἱεροσολυμιτῶν πόλιν ἀφικομένη τὸ πᾶσιν ἀνθρώποις περιβόητον ἱερὸν τοῦ Θεοῦ προσκυνῆσαι... Λιμοῦ γὰρ αὐτῶν τὴν πόλιν κατὰ τὸν καιρὸν ἐκεῖνον πιέζοντος... ἡ βασιλὶς Ἑλένη πέμπει τινάς τῶν ἑαυτῆς, τοὺς μὲν εἰς τὴν Ἀλεξάν-

**Лб. | Фв. | Ан.**

### М. Хоренскій.

անարժանի, որ ոչ երկրպագէ Քրիստոսի Աստուծոյ կենդանւոյ։ Եւ իսկոյն հրամայեաց միում ի զինակրացն կտրել զոտս նորա սրով։ Որոյ երթեալ և տեսեալ զնա, զի նստէր յաթոռ վարդապետութեանն, էած սուսերաւ և ի բաց կտրեաց զսրունս նորա. և նոյն ժամայն աւանդեաց զոգին։ Զայս ծայրաքաղ արարեալ համառօտ յիշատակեցաք, որպէս զառ ի յայլոց պատմեալ նախկին։ Բայց զկնճռեալսն Հայոց և Բարդուղիմէոս Առաքեալ որ և կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս քաղաքի։ Իսկ զՍիմոնն, որ Պարսից վիճակեցաւ, ոչ զհաւաստին կարեմ պատմել՝ եթէ զինչ գործեաց և կամ ուր կատարեցաւ...

II, 35. ...Եւ իսկոյն պատգամ բնակչաց քաղաքին եկն առ Սանատրուկ, խնդրելով պայման ուխտի, զի մի՛ վրդովեսցէ զնոսա ի քրիստոնէութեան հաւատոց, եւ նոքա տացեն զքաղաքն ի ձեռս և զգանձս թագաւորին։ Զոր արարեալ, յետոյ ստեաց. նա և զամենայն զաւակ տանն Աբգարու մաշեաց սրով, բայց յաղջկանց, զոր եհան ի քաղաքէն բնակել ի կողմանս Հաշտենից։ Սապէս և զգլուխ կանանցն Աբգարու, որում անուն էր Հեղինէ, առաքեաց յիւրային քաղաքն բնակել ի Խառան, ի վերայ թողլով նմա զտիկնութիւնն ամենայն Միջագետաց փոխանակ բարեացն զոր գտեալ էր ի ձեռն նորա յԱբգարէ։ Այս Հեղինէ զարդարեալ հաւատովք, որպէս և այր իւր զԱբգար, ոչ հանդուրժեաց բնակել ի մէջ կռապաշտիցն, այլ չոգաւ յԵրուսաղէմ յաւուրս Կղաւդեայ՝ ի սովին, զոր մարգարէացաւ Ագաբոս. և տուեալ զամենայն գանձս իւր յԵգիպտոսի, և գնեաց ցորեան բազում յոյժ և բաշխեաց ամենայն կարօտելոց. որում և վկայէ Յովսեպոս. որոյ և շիրիմ նշանաւոր կայ առաջի դրանն Երուսաղէմի մինչև ցայսօր ժամանակի։

### Мучен. ап. Өаддея и дѣвы Сандухтъ.

զիւցակատար պաշտօնէիցն, պատմեցին խստերախ անօրէն թագաւորին իւրեանց Սանատրկոյ։ (с. 45) ...Եւ նոյն ժամայն պատանի ոմն եհար զկուրծս երանելոյ կուսին ս. Սանդխտոյ ...և աւանդեաց զոգին ի Քրիստոս... (с. 46) և առեալ զմարմին սրբոյն Սանդխտոյ՝ եդ ի նմին տեղւոջ և արար աներևոյթ զհանգստարանն երանելի ս. տիկնոջն։ (с. 56) ...և թագաւորն բարկացեալ հրամայեաց փութով սպանանել զառաքեալն։ Եւ կատարեցաւ ի նմին ժամու սրով։ Եւ ի կատարել սրբոյն... եղև շարժումն մեծ, և պատառեալ վիմին ընկալաւ զսուրբ Տարսին առաքելոյն զօրութեամբն Աստուծոյ... (стр. 92) ...Եւ եղեւ ահ եւ թնդիւն եւ պատառեցաւ վէմն... և գտաք զնշխարսն յիւրաքանչիւր հանգստի... առաջինն՝ առաքեալն որ կայր ի մէջ պատառեալ վիմացն յարևելից կողմանէ որպէս երևեցաւն...Եւ յերրորդում աւուրն հասաք ի հանգստարան ս. Սանդխտոյ և աղօթեցաք... և եղև լոյս և երևեցան նշխարքն, և առեալ բերաք ի տեղին ուր նշխարք ս. առաքելոյն էին, և եդաք առ նմա...

### Іосифъ Фл.

δρειαν πολλῶν σῖτον ὠνησομένους χρημάτων, τοὺς δὲ εἰς Κύπρον ἰσχάδων οἴσοντας. Ὡς δὲ πάλιν ἦλθον ταχέως κομίζοντες τοῖς ἀπορουμένοις διένειμε τροφήν, καὶ μεγίστην αὐτῆς μνήμην τῆς εὐπορίας ταύτης εἰς τὸ πᾶν ἡμῶν ἔθνος καταλέλοιπε. (Ib. 4, 3) ...Ἡ δὲ μήτηρ Ἑλένη, τὸν τοῦ παιδὸς θάνατον ἀκούσασα... παραγενομένη δὲ εἰς τὴν Ἀδιαβηνὴν οὐ πολὺν Ἰζάτῃ τῷ παιδὶ χρόνον ἐπεβίωσεν ἀλλὰ τῷ γήρᾳ καὶ τῷ τῆς λύπης ἀλγήματι πιεζομένη ταχέως ἀπέψυξεν. Ὁ δὲ Μονόβαζος τά τε ἐκείνης ὀστᾶ καὶ τὰ τοῦ ἀδελφοῦ πέμψας εἰς Ἱεροσόλυμα θάψαι προσέταξεν ἐν ταῖς πυράμισιν, ἃς ἡ μήτηρ κατεσκευάκει, τρεῖς τὸν ἀριθμὸν τρία στάδια τῆς τῶν Ἱεροσολυμιτῶν πόλεως ἀπεχούσας.

### Лб. | Фв | Ан.



### М. Хоренскій.

II, 36. Այլ որ ինչ գործք եղեալ Սանատրկոյ, ոչ ինչ յիշատակաց արժանի համարեցաք, բայց ի շինուածոյ Մծբին քաղաքի։ Զի ի շարժմանէ խախտեալ, քակեաց եւ վերստին շինեաց պայծառագոյն, և պարսպեաց կրկին պարսպով եւ պատուարաւ. եւ զինքն անդրի ի միջին հաստատեաց, մի դրամ ի ձեռն ունելով, որ նշանակէ այսպիսի ինչ. եթէ ի շինել քաղաքիս ամենայն գանձս ծախեցան և այս միայն մնաց։ Բայց թէ ընդէ՞ր Սանատրուկ կոչեցաւ, ասելի է... Արդ կոչեցաւ Սանատրուկ ի դայեկէն զանուանակոչութիւնն առեալ, որպէս թէ տուրք Սանոտայ։ Սա թագաւորեալ յերեսներորդի ամի Արտաշիսի Պարսից արքայի, կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորսի նետիւ ուրուք դիպեալ փորոտեացն, իբր թէ վրէժս հատուցեալ ընդ չարչարման սրբոյ դստերն։ Ղերուբնայ որդի Ապշադարայ դպրի գրեաց զամենայն գործս, որ ինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ և եդ ի դիւանին Եդեսիայ։

### Мч. Өд.

### Іос

### Лабубна.

с. 48. Եւ յետ ամաց ինչ մեռաւ Աբգար թագաւոր և եկաց ի թագաւորութեան մի յորդւոց իւրոց, այր չար և ապստամբող... և ոչ ընդունէր զվարդապետութիւն քարոզութեան աւետարանին։ Յղեաց առ Ադդէ եպիսկոպոս... և ասէ. արա ինձ խոյր ոսկեղէնս զոր օրինակ առնէիր յառաջ հօր իմոյ։ Եւ ոչ առ յանձն Ադդէ, առաքեաց անդրէն եւ ասէ. Ոչ թողում ես զպաշտօնս Քրիստոսի... եւ առնեմ խոյրս անիրաւութեան։ Եւ իբրև ետես նա՝ եթէ ոչ հաւանի նա կատարել զկամս նորա, յղեաց և խորտակեաց զսրունս նորա, մինչդեռ նստէր յեկեղեցւոջ ...Եւ քանզի իբրև խորտակեցին զոտս նորա՝ վաղվաղակի մեռաւ...

с. 51. Որպէս և նստարանք թագաւորացն և թագաւորութեանն Աբգարու թագաւորի... այնպէս և յՈւռհայ քաղաքի Ղևոնդեան՝ որդւոյ Անանեայ, որդւոյ Աբդշադարի թագաւորին, գրեաց զամենայն ինչ զոր միանգամ իբր եղեն Ադդէի առաքելոյ... և Անանայ հաւատարիմ թագաւորին, և եդին ի տան յիշատակաց քարտիսից, ուր գնին մատեանք և օրէնք արքունականք...

### Фавстъ.

IV, 14. Ապա գնայր Մարդպետն Հայր ի սուրբ տեղեացն եւ էջ յափն գետոյն Հոռանացն Եփրատու... որ ի տեղւոյն ի հնոցն իմն շինեալ քաղաք, զոր շինեալ Սանատրուկ արքայի, որում անուն տեղւոյն Մրծուրք կոչի։

IV, 24. Եւ րանայն (Պարսիկք) զգերեզմանս զառաջին թագաւորացն Հայոց զարանց քաջաց զԱրշակունւոյ և խաղացուցանէին ի գերութիւն զոսկերս թագաւորացն. բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեդեդ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն։

### Анонимъ.

с. 1. Անդ հայելով ի մատեանն Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացւոյ, զոր եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին քաղաքի յապարանսն Սանատրուկ արքայի հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն։

# ГЛАВА VII.

## О потомкахъ Арташеса II—Тиранѣ I, Тигранѣ II и Вахаршѣ.

### а) О Тиранѣ.

| М. Хоренскій. II, 62.[1]) | Фавстъ. | Библія. | Ев | Каллис. |
|---|---|---|---|---|
| Թագաւորէ Հայոց Տիրան որդի Արտաշիսի յերրորդ ամի Պերոզի առաջնոյ Պարսից արքայի։ Սորա ոչ ինչ պատմին գործք մեծամեծք, այլ միայն թէ մտերմութեամբ ծառայեաց հռովմայեցւոց. եկաց խաղաղութեամբ, որոց և զբօսանաց պարապեալ, որպէս ասեն։ Եւ ձիոց երկուց լեալ՝ թեթևոտանել քան զՊեգասոս երագագոյնք անհրաւ. զորս ոչ երկրակոխս, այլ օդագնացս համարէին. յոր խնդրեալ հեծանել Դատակէ ուրումն իշխանի Բզնունեաց, պարծէր ընչեղագոյն զոլ քան զարքայ։ Եւ եկեալ առ նա կանխագոյն իւրոյ ազգին Արծրունեաց, որ էին ի կողմանս Հաշտենից, ասեն. Ընդարձակեա մեզ զժառանգութիւնս, զի նեղ է. քանզի բազմացաք։ Եւ նա հրամայէ ոմանց ի նոցանէ երթալ ի գաւառն Աղիովտի և Առբերանոյ։ Իսկ սոցա առաւել ևս բողոք կալեալ առ արքայի, թէ առաւելագոյն նեղէ մեզ, ոչ ինչ ունկնդիր լինի Տիրան։ | III, 8. ...Ապա հրաման ետ արքայ Խոսրով Դատակայ նահապետի Բզնունեաց գուգայ հանել յաշխարհէ... Ապա Դատակէն երթայր... խորհուրդ միաբանութեան դնէր ընդ իշխանսն զօրացն Պարսից... III, 20. ...Զայնու ժամանակաւ ձի մի էր երիվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանային։ Եւ էր ձին գունով ճարտուկ ճանճկէն... մեծ եւ բարձր երկայն քան զամենայն ձիս և տեսանելով քան զայլս գեղեցիկ... V, 18. Հարկանէր (սպարապետն Հայոց Մուշեղ) և յԱնգեղտունն զբազումս և հանէր ընդ սուր։ Բայց աշխարհն [յորում էր և գաւառն Հաշտենից], զի ոստան արքունի լեալ էր վաղ վաղ, բնակիչք գաւառին և ինքեանք կային ի հարկի ծառայութեան։ IV, 24. ...Եւ գային (Պարսիկք) պահ արկանէին շուրջ զԱնգեղ զամուր բերդաւն... զի անդ էին բազում Հայոց թագաւորացն գերեզմանք շիրմացն արանցն Արշակունեաց. բազում գանձք մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ... III, 8. ...Եւ գիպեցան [սպարապետն Հայոց Վաչէ և անօրէն Դատաբէ] միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստն աւանի [որ յԱռբերանի գաւառի], ի ձկնատեսանն արքունի ի վերայ գետակին... | Ис. XLIX, 20. Զի ասասցեն յականջս քո որդիքն քո, զորս կորուսեր. Նեղ է ինձ տեղիս, ընդարձակեա ինձ, զի բնակեսցուք։ | | с. 16. Եւ յայնմ ժամանակի եկեալ ածին Փիլիպպոսի մատակպանքն ի կուտիցն ձի կարի մեծ յոյժ... գեղեցկութեամբ և արագութեամբ առաւել քան զՊեգասոս... |

1) Объ источникахъ, на основанiи которыхъ составлены предыдущiя главы отъ 37-ой до 62-ой включительно, см. изслѣдованiе мое объ „Армян. эпосѣ“, ч. II, стр. 52—76.



### b) Тигранъ послѣднiй и его дѣянiя.

| М. Хоренскій. II, 64.[1]) | Фавс. | Библія. | Евсевій. | Калл. |
|---|---|---|---|---|
| Փոխանորդէ զՏիրան՝ եղբայր իւր Տիգրան վերջին, թագաւորեալ Հայոց ի քսան և ի չորրորդի ամի Պերոզի Պարսից արքայի. եւ երկայնակեաց եղեալ ամս քառասուն և երկու՝ մեռանի, ոչինչ գործ արժանի յիշատակի ցուցեալ, այլ յաղջկանէ միոջէ ի յունէ ի կալանս ըմբռնեալ, ի ժամանակին յորում վախճանեցաւ Տիտոս երկրորդ թագաւոր Հռովմայեցւոց, որ անուանեցաւ Անտոնինոս Աւգոստոս։ Եւ Պերոզ արքայ Պարսից ի Հռովմայեցւոց իշխանութիւնն արշաւեաց, ուստի և Պերոզ անուանեցաւ, որ է յաղթող. քանզի յառաջ անուանիւր Վաղեգեսոս ի յունաց լեզուն. բայց թէ Պարսք զինչ կոչեն զնա, ոչ գիտեմ։—Արդ ասպատակելն Պերոզի ընդ Ասորիս՝ ի կողմանս Պաղեստինացւոց, վասն նորա և հրամանաւ նորին՝ և մերն Տիգրան ի միջերկրեայս. և ի կալանս ըմբռնեալ յաղջկանէ միոջէ իշխելոյ կողմանցն այնոցիկ, մինչդեռ Ղուկիանոս կեսար յԱթէնս զմեհեանն շինէր. որոյ եւ անցեալ զօրօք բազմօք ի միջերկրեայսն յետ մեռանելոյն Պերոզի նուաճեաց զՀայս եւ արձակեաց զՏիգրան։ Ետ զՌոփի կոյս, զմերձաւոր իւր նմա կնութեան. զոր եկեալ ի Հայս ի բաց թողու, եւ ի նմանէ լեալ պատանիս զորս՝ ազգ սերէ յանուն մօրն իւրեանց Ռոփեայ՝ Ռոփսեան. և զառաջին մանկանցն գլուխ նահապետ կացուցանէ, և կարգէ ընդ այլ նախարարութիւնս, զի մի անուանեսցին Արշակունիք... | | | Chron., II, p. 160, подъ 2053-ьимъ годомъ: Տիտոս Անտոնինոս, որ կոչեցաւն բարեպաշտօն հանդերձ որդւովն Աւրելեաւ և Ղուկաւ՝ ամս ԻԲ. և ամիսս Զ։ Ibid., подъ 2177-ымъ годомъ: Մինչդեռ Ղուկիոս կայսր յԱթէնս զմեհեանն շինէր, հուր յերկնից յարեմտից յարևելս ցոլացեալ երևեցաւ։ Ibid., подъ 2179-ымъ годомъ: Վաղեգեսոս արքայ Պարթևաց ի Հռովմայեցւոց վայրս արշաւեաց։ Ib., p. 162, подъ 2181-ымъ годомъ: Ղուկիոս կայսր զՊարթևս հնազանդեաց և ել ի ձեմլի հանդերձ եղբարբն։ | |

1) Объ источникахъ, на основанiи которыхъ составлена предыдущая—63-ья глава, см. мое изслѣдованiе объ „Армянскомъ эпосѣ“, часть II, стр. 79.

c) Воцареніе Вахарша. Построеніе городка Басэна. Обведеніе стѣною города Норъ. Война съ хазирами. Смерть Вахарша.

### М. Хоренскій. II, 65.

Յետ մահուանն Տիգրանայ թագաւորէ Վաղարշ որդի նորին. սա շինէ աւան մեծ զտեղի ծննդեան իւրոյ ի վերայ ճանապարհին. ուր ի գնալն մօր իւրոյ ի ձմերոց յԱյրարատ, յանկարծակի պատեալ երկանց ի գնացս՝ ծնաւ ի վերայ ճանապարհին, ի գաւառին Բասեան, ի տեղւոջ՝ ուր խառնին Մեծամօր և Երասխ, զոր շինեաց յիւր անուն և կոչեաց Վաղարշաւան... [1])

Սա թագաւորեալ ամս քսան մեռաւ. թէ լոկ եւ այլքն կեցին. բայց ասեմ զսա և յետ մահուանն կեալ, յաղագս բարի անուանն քան զթուլազդյնս ի թագաւորաց։ Վասն զի ի սորա աւուրս միաբանեալ ամբոխութիւն է հիւսիսականացն, զԽազիրս ասեմ և զԲասլաց, արտաքս քանզդուռն Ճորայ ելանել, առաջնորդ եւ թագաւոր ունելով ինքեանց զՎնասեպ ոմն Սուրհապ, որք անցեալ զԿուր գետով։ Որոց պատահեալ Վաղարշ ամբոխիւ մեծաւ և արամբք մարտկօք՝ ցիր դիաթաւալ կացուցանել զամբոխն ընդ երեսս դաշտին, և ձեռ զհետ եղեալ անցանէ ընդ պահակն Ճորայ։ Որ միւսանգամ միաբանեալ թշնամեացն, յօրինեցին ճակատ. զորս թէպէտ եւ վանեալ քաջացն Հայոց՝ փախստականս առնէին, սակայն Վաղարշ մեռանի ի ձեռաց կորովեաց աղեղնաւորաց։

### Себеосъ.

c. 34. Ապա եկն (ի Հայս) Տամ Խոսրով եւ արար երկու կոիւս՝ մի է Բասեան ի Բոլորպահակի, ուր Մեծամօր և Երասխ խառնին, և մի ի Բագրևանդ...

c. 148. Եւ իբրև ետես բազմութիւն զաւրացն Իսմայէլի՝ եթէ ոչ յաջողի նոցա զործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց... բազումք ծախեցան յամուրս... և բազումք խոցոտեալ նետիւք... ստուգեալ ի բաց ի կողմանցն յայնցանէ, դէմ եդին երթալ ի կողմանս Հիւսիսոյ՝ յայգն որ ըստ Կասպիական դրացն։ Զօրան հասին ի պահակն Ճորայ։ Եւ անցեալ ի ներքս ընդ Կապանն՝ աւերեցին զամենայն կողմանս աշխարհին՝ որ առ լեռնոտամբն. եւ ելեալ ընդդէմ նոցա զաւրս սակաւս որում Հոնաց դուռն կոչեն, հարին զնոսա, զի էին կողմնապահք տեղւոյն։ Եկն այլ զաւր ի կողմանցն Թետալաց և բաղխեցին զմիմեանս... եւ ի պարտութիւն մատնեցաւ զաւրն Իսմայէլի... եւ ապրեալքն փախստական ոչ կարացին ճողոպրել ընդ կապանն, զի եկն այլ զաւր նոցա ի նոցա թիկանց և նոցա դէմս ի լեառն արարեալ ի դժուարս մէջ լերինն Կաւկասու...

c. 147. Ցայսմ ամի ապստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայէլի... քանզի ոչ կարացին համբերել դառն եւ դժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն, որ ի վերայ նոցա. զի անդրէն ի նոցանէ միոյ միոյ առնուին ՑԿԵ. պայուսակ դրամ. և որ ոչն կարէր տալ, առնուին ընդ միոյ միոյ դրամի մարդ մի, և ի բաց բարձին զհեծելութիւն եւ զիշխանութիւն աշխարհին։

### Хевон.

---

[1]) Объ источникахъ слѣдующей части этой же главы см. мое изслѣдованіе объ „Армянскомъ эпосѣ“, ч. II, стр. 80.



### М. Хоренскій.

Եւ առնու զթագաւորութիւնն Խոսրով որդի նորա յերրորդ ամի Արտաւանայ Պարսից արքայի։ Եւ նոյն հետայն միաբանեալ զզօրս Հայոց, անցանէ ընդ լեառնն Կաւկաս վրէժս պահանջելով զմահուան հօրն. և վանեալ սրով և գեղարդեամբ զհզօր ազգն զայնոսիկ, մի ի հարիւրոց յամենեցունց պիտանեացն առնու պատանդս. եւ զիւրոյ տէրութեանն նշանակ արձան հաստատէ հելլենացի գրով, որպէս զի յայտ լիցի ընդ հնազանդութեամբ լինել Հռովմայեցւոց։

### Себеосъ.

### Хевондъ.

c. 40. Յետ նորա (Մահմետի) փոխանորդէ զիշխանութիւնն Սուլէյման... սա յերկրորդ ամի իշխանութեան իւրոյ գումարէր զօրս բազումս եւ տայր ի ձեռս զօրավարին Մսլիմայ և առաքէր ի դրունս Կասպից։ Որոց եկեալ եւ մարտ եդեալ ընդ զօրս Հոնաց որ ի Դարբանդ քաղաքի, հարին զնոսա եւ հալածեցին ...եւ մինչդեռ քանդէին զպարիսպ ամրոցին՝ գտին վէմ մի մեծ ի հիմունս նորա, որ ունէր վերնագիր դրոշմեալ օրինակ զայս. Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց զքաղաք եւ զաշտարակս զայս... Եւ ինքն Մսլիմ առեալ զբազմութիւն զօրացն՝ անցանէր ընդ պահակն Ճորայ ասպատակ սփռեալ յաշխարհն Հոնաց. եւ երթեալ բանակէր մերձ առ Թարգու քաղաքի Հոնաց։ Իսկ բնակիչք աշխարհին իբրև տեսին զհէնն, որ զարթուցեալ հասանէր ի վերայ նոցա, վաղվաղակի ազդ առնէին արքային Խազրաց, որ անուանեալ կոչէր Խաքան։ Իսկ նորա առեալ ընդ իւր զբազմութիւն զօրացն եւ զամենայն յաղթանդամ հսկայազունսն իւր...

## М. Хоренскій.

րա փղոսկանոս չէր ուրեմն և ուր ¹) ասոր է Տրդատ։

| Ընդհանրական եկեղեցւոյ ևս քան զևս յաճախէր որ ինչ յաղագս Քրիստոսի գործ և բան. սաստելով եւ հաւանեցուցանելով զմեծամեծ նախարարսն, միանգամայն եւ զամենայն բազմութիւն ռամկին, լինել արդարև Քրիստոսի, որպէս զի վկայեսցեն հաւատոյն ամենեցուն եւ գործքն։ Այլ զխստասրտութիւն կամիմ ասել, թէ և՛ զամբարհաւանութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր... ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնիցն քրիստոսականաց, զհետ երթալով կամաց կանանց եւ հարճից։ Որում ոչ կարացեալ ներել թագաւորին, ընկեցեալ զերկրաւոր պսակն՝ զհետ ընթանայր երկնաւորին, արագ հասանելով ի տեղի սուրբ ճգնաւորին Քրիստոսի, ծանօթ լեռնականացն եղեալ։ Աստանօր ամաչեմ ասել զճշմարտութիւնն... քանզի զհետ առաքեալ, կոչեն զնա՝ լինել ըստ կամաց նորա եւ ունել զթագաւորութիւնն։ Իսկ ի չհաւանել սրբոյն՝ տան նմա արբումն... բայց ասեմ ոչ զիմ բանս... Ազգ Արամեանք, մինչև յե՞րբ եք ծանրասիրտք, ընդէ՞ր սիրէք զունայնութիւն և զանաստուածութիւն... Ո՞ ոք ի ձէնջ թշնամիս յաղագս մեր... ո՞վ ոք յերթալս մեր բնակութիւն[1]) ...ո՞վ ոք տուն կամ ընչից մեզ պատրաստեաց... Վասն որոյ հիացումն իմն են ճառքս եւ սարսափելի՝ որոց միտս ունին, քանզի խօսի որ խօսին զԱստուծոյ եւ զաստուածայինսն եւ խորհուրդք խօսողին յօտարն հային։ Զի ոչ վասն որոյ խօսին՝ կրէ զաշխատու- | с. 631. Առեալ (Գրիգորի) զոմանս յաշակերտացն ...երթեալ լեռնականաց, մենակեաց, սորանօք, ծանախիթ եղեալ... | | Въ „Словѣ Кесарію“, *ibid.*, с. 120[a]. Որդիք մարդկան, մինչև յե՞րբ եք ծանրասիրտք... [2]) ընդէ՞ր սիրէք զունայնութիւն և խնդրէք զստութիւն.<br>Въ „Словѣ на Екклезіаста“, *ibid.* стр. 245[a]. ո՞ր օգուտ է բազում բանիցն, | առաքինութեամբ Ընդհանրական եկեղեցւոյ.<br>с.478, 503 и др. ընչից.<br>с. 349. որք միայն ունին. |

[1]) Ср. это слово у *Каллисѳена*, арм. пер., с. 41.

[2]) *Псалмы* (IV, 3) въ этомъ мѣстѣ имѣютъ чтеніе „խստասիրտք“:

## М. Хоренскій.

III, 3. ...Երանելին Տրդատ տայ նոցա (կողմանցն արեւելեայ հիւսիսոյ) եպիսկոպոս զմանուկն Գրիգորիս, զերէց որդին Վրթանայ։ Թէպէտ և յանկլութիւն աւուրցն հասեալ պատանւոյն [2 списка прибавляютъ: պարականոն] զիրն վարկանէր, այլ տեսեալ զհոգւոյն մեծանձնութիւն և զմըտաւ ածեալ զՍողոմոն երկոտասանամեայ թագաւորեալ Իսրայէլի, առաքէ բազում համարձակութեամբ, հանդերձ Սանատրկաւ ոմամբ յիւրմէ ազգէն Արշակունեաց։ Որոյ երեւեալ լինէր օրինակ բարի հայրենական վարելով առաքինութեամբք. այլ կուսութեամբ դեր ի վերոյ քան զհարսն, և պատժական զոյգ ընդ թագաւորութեանն։ Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրկոյ և այլոց ոմանց հանապազասուտ արանց Աղուանից՝ սպանանեն զերանելին ընթադրեալ ձիովք բարբարոսքն ի Վատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով։ Զոր բարձեալ սարկաւագաց նորուն, բերեալ ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի։ Իսկ Սանատրկոյ թագ կապեալ ինքեան, ունի զքաղաքն Փայտակարան. զօրութեամբ օտար ազգաց խորհէր տիրել բոլորում Հայոց։

## Фавстъ Византійскій.

III, 8. Յաղագս մայրեացն անկելոց, և վասն պատերազմացն ընդ Պարսս, և վասն ազգահատութեան տոհմին Բզնունեաց նախարարութեան. [Слѣдуетъ подробный разсказъ объ избіеніи рода Бзнуни].

III, 5. Վասն որդւոցն Վրթանայ, որոց անուանքն այս են. առաջնոյն Գրիգորիս, երկրորդին Յուսիկ... Ապա երէց որդին Գրիգորիս եհաս յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից եւ Վրաց վասն հոգեկիր առաքինի արդասեացն... Ոչ ամուսնացաւ նա, այլ ի հնգետասանամենից եհաս յաստիճան եպիսկոպոսութեան աշխարհին Վրաց եւ Աղուանից, այս ինքն սահմանացն Մազքթաց։ Երեւեալ նորոգեաց անդ զեկեղեցիսն լուսաւոր կարգօք, առաջնոյն Գրիգորի հօրն գործոյն նմանեալ...

III, 6. ...Քարոզ ճշմարտութեան հաւատոցն Քրիստոսի լինէր նա և առաջի իսկ ամենեցուն էր սքանչելի և զարմանալի... Եւ իբրև ուղղեաց և նորոգեաց զամենայն եկեղեցիս կողմանցն այնոցիկ, եհաս նա մինչև ի ճամբար բանակին Արշակունւոյ արքային Մազքթաց, որոյ անուն իւր Սանէսան կոչէր։ Քանզի և նոցա և Հայոց թագաւորացն մի ազգաւորութիւն էր տոհմին բնութեանն։ Եւ երթեալ յանդիման լինէր թագաւորին Մազքթաց և իշխանին բազմութեան զօրացն. եւ եկաց առաջի նոցա, սկսաւ քարոզել և աւետարանել նոցա զՔրիստոս... Ապա սկսան քննել զօրէնսն Քրիստոսի, եւ ուսան ի նմանէ, թէ ատելի է Աստուծոյ աւարութիւնն և յափշտակութիւն, սպանութիւն... Ապա այսպիսի ինչ իրօք իբրև լուան, զայրացան ընդ բանս նորա... Այլ ասէին, այս խորհուրդ Հայոց թագաւորին է. զսա յղել առ մեզ, զի այսու ուսմամբ խափանեսցէ զմեր արշաւանս ասպատակութեան հինի յաշխարհէն իւրմէ. այլ եկայք զսա պակասեցուսցուք ի միջոյ եւ մեք ի Հայս արշաւեսցուք, աւարաւ զմեր աշխարհս լցցուք։ Ապա շրջեցաւ թագաւորն և լուաւ բանից զօրացն իւրոց. և կալան ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագւոյ ձիոյն եւ արձակեցին ընդ ծովեզեր դաշտին հիւսիսական ծովուն մեծի, արտաքոյ իւրեանց բանակին ի դաշտին Վատնեայ։ Եւ այսպէս սպանին զառաքինին քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս։ Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, և բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից, ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն, որ անուանեալ կոչի Ամարաս...

## Ж. св. Як.



## М. Хоренскій.

III, 4. ...Ի վախճանել երանելոյն Տրդատայ՝ մեծ իշխանն Բակուր, որ Բդեշխն Աղձնեաց կոչէր, տեսեալ զՍանատրուկ թագաւորեալ ի Փայտակարան, զնոյն խորհեցաւ և ինքն. թէպէտ և ոչ թագաւորել, զի ոչ էր Արշակունի, այլ տիրագլուխ կամեցաւ լինել. ճեղքեալ ի միաբանութենէ Հայոց՝ յարեաւ առ յՈրմիզդ արքայ Պարսից։ Ուստի ուշ ի կուրծս անկեալ և ի միտս եկեալ նախարարացն Հայոց, ժողովեցան առ մեծն Վրթանէս, և առաքեցին երկուս ի պատուաւոր իշխանացն, զՄար իշխանն Ծոփաց և զԳագ իշխանն Հաշտենից, երթալ ի նախագահ քաղաքն առ կայսրն Կոստանդոս՝ որդի Կոստանդիանոսի, հանդերձ պատարագաւ և թղթով...

III, 6. Եկեալ Անտիոքոս թագաւորեցոյց զԽոսրով և զմնացեալսն սպարապետսն մատոյց ի նոյն իշխանութիւն զօրու, զորս կացուցեալ էր Տրդատայ յիւրում կենդանութեանն՝ յետ մեռանելոյ դայեկին իւրում Արտաւազդայ Մանդակունւոյ, որ միագլխապետ էր եւ ամենայն Հայոց զօրավար։ Առաջին՝ Բագարատ ասպետ, զօրավար արեւմտեայ գնդին. երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բդեշխ Գուգարացւոց, սպարապետ հիւսիսային զօրուն. երրորդ՝ Վահան Նահապետ Ամատունեաց, զօրավար արեւելեան գնդին. չորրորդ Մանաճիհր Նահապետ Ռշտունեաց, սպարապետ հարաւային զօրուն։ Եւ բաժանեաց ետ նոցա զիւրաքանչիւր զօրսն։

## Фавстъ Византійскій.

III, 9. Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց (Խոսրովու) մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց, որ անուանեալ կոչէր Բդեաշխն. որ էր մի ի չորից գահերէց բարձերէց տաճարին արքունի։ Նա յարեաւ յարքայն Պարսից և մատնեաց զարքունի տունն, որ յեցյինքն էր... Ապա առաքէր թագաւորն Հայոց զբարեկիր ծառայս իւր, զիշխանն Կորդուաց զՋոնն և զիշխանն մեծի Ծոփաց զՄար, և զիշխանն Ծոփաց Շահէի՝ Ներսեհ և զիշխանն Սիւնեաց զՎաղինակ և զիշխանն Հաշտենից զԳին և զիշխանն Բասենոյ զՄանակ հանդերձ բազում զօրօք։ Ապա չոգան յաղթեցին զօրացն Պարսից և առ հասարակ ընդ սուր հանին զամենայն. և սպանին զբդեաշխն, եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ։ Բայց զաղջիկ մի զդուստր նորածին և զգլուխն Բակուր բդեշխին բերին առ արքայ...

III, 7. ...Եւ նիզակակիցք զօրավարին Հայոց (Վաչէի որդւոյ Արտաւազդայ, ի Մամիկոնէն տոհմէն) որ էին՝ Բագրատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին Ռըշտունիք և Վահան Նահապետն Ամատունեաց տոհմին և Վարազ Կամսարական, հասանէին հարկանէին սատակէին զզօրսն Ալանացն, և Մազքթացն, և Հոնացն և այլոց ազգացն...

III, 10. ...Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Հայաստանէ սքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց գնաց առ մեծ իշխանն աշխարհատէրն մեծ ծառայն արքային Հայոց առ Մանաճիհր Ռշտունի. և եկն թափեցաւ յաշխարհ նորա...

## Ж. св. Як.

### М. Хоренскій.

III, 7. Երթեալ Մանաճիհր Հայոց հարաւային գնդաւն և Կիլիկեցւոց զօրօք զկողմամբք Ասորեստանի, ճակատ տուեալ ընդ Բակուր Բդեաշխն. սատակէ զնա և զորդիս նորա և զՊարսիկս օգնականս նմա հալածականս առնէ. և զորդին Բակրայ զՀեշայ ձերբակալ արարեալ, հանդերձ երկաթի կապանօք առաքէ Խոսրովու. և զգաւառս իշխանութեան նորա սրով գատի անխնայ, ոչ միայն զմարտիկս, այլ և զռամիկ շինականս. և բազում գերիս առեալ ի կողմանց Մծբնայ, ընդ որս և սարկաւագունս ութ մեծի եպիսկոպոսին Յակոբայ։ Զորս յհետ եկեալ Յակոբայ, հայցէ զՄանաճիհր՝ արձակել զգերութիւն ռամկին, իբրև զոչ ինչ մեղուցելոյ. որում ոչ հաւանեալ Մանաճիհր, պատճառէ զարքայ։ Եւ Յակոբոս դէմ եդեալ առ արքայ, առաւել ևս զչարի Մանաճիհր, և ի սադրելոյ դաւառականացն՝ զութ սարկաւագունս նորա, որք ի կալանս էին, հրամայէ ի ծով ընկենուլ։ Զոր լուեալ մեծին Յակոբոս դառնայ ի տեղի իւր լի բարկութեամբ, որպէս զՄովսէսն յերեսաց Փարաւո-

### Фавстъ.

III, 9. Զայնու ժամանակաւ ապստամբեաց յարքայէն Հայոց... մեծ իշխանն Աղձնեաց [Բակուր] որ... կոչէր Բդեաշխ... Ապա... հոգան յաղթեցին զօրսն Պարսից ...և սպանին զբդեաշխն... Բայց յորդւոյն Բակրայ բդեշխի պատանեակ մի փախեաւ անկաւ առ զօրավարն Հայոց Վաչէ ...որ յայլում ժամանակի դարձաւ կալաւ զտունն իւր, որոյ անունն Խեշա կոչէր։

III, 10. ...Ապա յետ այսորիկ լուր լուաւ յերկրէն Հայաստանէ սքանչելի եպիսկոպոսն Յակոբ. խաղաց առ մեծ ծառայն արքային Հայոց առ Մանաճիհր Ռշտունի... զի լուեալ էր զնմանէ, թէ այր չար և անզգամ է, և զուր տարապարտ... կոտորէ անթիւ մարդիկ... Իսկ իբրև ետես զնա, արհամարհեաց... Մանաճիհր զայր Աստուծոյ զՅակոբ եպիսկոպոսն։ Եւ առ վայրենի բարուցն իւրոց՝ զոր ունէր յանձին իւրում, իբրև նմա հեծուկս առնելոյ, ութ հարիւր այր՝ որ կային ի կալանս առանց յանցման... հրամայեաց ի դաշտէ միջէ ի ծովանդր հոսել... Իսկ նա գնացեալ անտի մեծաւ տրտմու-

### Житіе св. Якова.

*Рукоп. эчм. библ.* XII—XIII в., № 1687[1])

...Եւ Մանաճիր Ռշտունի առեալ գերիս յերիցանց և սարկաւագաց գաւառին և տարեալ յերկիր իւր եդ ի բերդին որ կոչի Մանազկերտ... Եւ յետ այսորիկ գնաց սուրբն Յակոբ զկնի չարին Մանաճհրհ իշխանին Ռշտունեաց. խնդրէր զերիցունսն եւ զսարկաւագունսն և զայլսն ևս. իսկ նա ոչ առ յանձն տալ, այլ ըստ չար բարուցն իւրոց հրաման ետ ծովահեղձուս առնել զսարկաւագունսն և զերիցունսն. իսկ սուրբն Յակոբ տեսեալ զչարին արկածսն՝ խռովեցաւ եւ ել գնաց տրտմութեամբ լի ցասմամբ յերկրէն Մանաճիհրի և գայր հասանէր յերկիր [Աղ]ձնեաց ի ձորն երկ[աթահատաց]... Եւ ելեալ ի բարձրաւանդակ տեղի մի՝ տեսանէր

„Սոփերք", XXII.

c. 55—56. ...Եւ ապա Մանաճիհր Ռշտունի յաւարի առ զվիճակ զսրբոյն, և գնէր զերկոտասան սարկաւագունսն ի բերդին Մանազկերտ կոչեցեալ։ Իսկ նորա հետամուտ լեալ՝ իբրև լուաւ ըզհամբաւ դուժին, եկն եհաս զօրուն և նահապետին Մանաճհրհ... Իսկ անօրէն Մանաճիհր... ծովասոյզ արարեալ հեղձուցանէր զգերեալսն։ Իսկ իբրև ետես ս. Յակոբ զգործ անօրինին... անէծ զՄանաճիհր եւ զերկիրն Ռշտունեաց։ Եւ ծածկեաց զհրակերպ դէմսն, գնաց ի սահմանաց անտի...

c. 57. ...Եւ նորա կացեալ ի մարմնի այր մի՝ փոխի առ Քրիստոս, որ

---

[1]) Въ изданныхъ въ 1874 г. въ Венеціи „Վարք և վկայաբանութիւնք սրբոց", ч. II, стр. 83—107, помѣщено и *Житіе св. Якова,* безъ указанія однако, къ какому времени относится рукопись, изъ которой оно взято. Редакція этого *Житія* почти та же, что и цитируемый нами рукописный списокъ эчміадзинской библіотеки — съ незначительными уклоненіями, касающимися главнымъ образомъ изложенія. Между прочимъ, любопытно, что въ обозначеніи названія г о р ы, на которой остановился ковчегъ, эчміадзинская рукопись держится указанія Фавста (*Сарарадъ*), между тѣмъ какъ венеціанскій печатный списокъ передаетъ его черезъ *Араратъ* (стр. 103).



### М. Хоренскій.

նի։ Ելեալ ի լեառն ինչ, յորմէ երևէր գաւառն ամենայն, անէծ զՄանաճիհր և զգաւառ նորին։ Եւ ոչինչ յամեցին դատաստանքն Աստուծոյ հասանել ի վերայ. և նման Հերովդի պէսպէս ցաւովք սատակի Մանաճիհր. և պտղաբերութիւն գաւառին ջրաւորացն դարձաւ յաղտաղտուտ, եղեալ ի վերայ նոցա երկինք պղնձի ըստ գրոյ[1]) և ծով հակառակեալ՝ յինքն ընդունի զսահմանս անդաստանաց։ Զոր լուեալ Մեծին Վրթանայ և արքային Խոսրովայ, ցասուցեալ հրամայեն արձակել զգերեալսն, եւ առ նոյն այր մաղթել ապաշխարութեամբ, զի դարձցի սրտմտութիւն Տեառն. զոր յետ ելից Յակոբու յաշխարհէն՝ ժառանգորդի Մանաճհրայ գեղեցիկ ապաշխարութեամբ, ուժգին արտասուօք և հառաչմամբ, նորին բարեխօսութեամբ գտեալ բժշկութիւն ինքեան և գաւառին։

### Фавстъ.

թեամբ... գայր հասանէր ի լեառն երկաթահատացն... ընդ Ռշտունիս։ Եւ բաժանէր լեառն բարձր, ուստի երևէր գաւառն բովանդակ, որում անուն Ընձաքիսարս կոչէին... Եւ ելանէր... Յակոբ ի գլուխ լերինն Ընձաքեարս և նզովէր զաշխարհն, զի մի պակասեսցէ անտի խռովութիւն, փոխանակ տէրունի խաղաղութեանն՝ որ ոչ լուան... Իսկ յայնմ գաւառի, յետ գնալոյ նորա անտի, յետ երկուց աւուրց սատակեցաւ կինն Մանաճհրհայ եւթն որդւով իւրով. յետոյ և ինքն չարամահ ծակոտեալ ելանէր մեծաւ տանջանօք յաշխարհէ։ Եւ ըստ բանին, որ ասացաւ, ոչ եղև խաղաղութիւն յաշխարհին յայնմիկ յօրէն յայնմանէ եւ յապա։

### Житіе св. Якова.

զերկիրն Ռըշտունի[եաց] և անէծ զՄանաճհրն և զերկիր նորա և զգաւառսն նորա վասն երիցանցն և սարկաւագացն, և ինքն չու արարեալ գնաց յերկիր իւր... Եւ այսպէս վարուք կացեալ... փոխեցաւ յաշխարհէս... Յետ այսորիկ ազդեալ արանց խարազնազգեստից ի հոգւոյն սրբոյ, թէ ոչ է հնար աւրհնել [աւգնել?] երկրին Ռշտունեաց, եթէ ոչ երթեալ բերիցեն մասն ինչ ի նշխարաց սրբոյն Յակոբայ...

և զհրեշտակս զարմացոյց...

c. 60—61. ...Եւ զկնի ամս ընդ անիծիւք եկաց երկիրն Ռշտունեաց, մարդ և անասուն անծընունդ, և պտղաբերքն դոսացեալք... Եւ ապա խորհուրդ առեալ ոմն յազգէն Մանաճհրհ, ոմանք քոյր ասեն և ոմանք հորեղբօրորդի, քանզի Մանաճիհր սատակեալ էր, յուղի անկեալ գընաց ի խնդիր նշխարաց, խընդրել զբժշկութիւն ազգին և գաւառին. յոյժ աշխատալար զծունկքն եւ զերեսն ընդ գետինն քարշեալ, մինչև բերթեալ լինէր... և ապա լուեալ պաղատանաց նորա սրբոյն Յակովբայ, ողորմեալ պարգևէ նմա մասն... տուեալ նմա զկոճ մատինն...

---

[1]) Ср. кн. *Второзак*, XXVIII, 23: „Եւ եղիցին ի վերայ գլխոյ քո երկինք պղնձի, և երկիր ի ներքոյ քո երկաթի", и *Псалмы*, CVI, 34: „Արար զերկիրն պտղաբեր աղտաղտուտ։"

## M. Хоренскій.

III, 8. Յերկրորդ ամի Որմզդի Պարսից արքայի և յութերորդ ամի ինքնակալութեանն Կոստանդեայ, յօգնականութենէ նորին թագաւորեաց Խոսրով. ոչինչ արութիւն քաջութեան ցուցեալ որպէս զհայրն... ամենևիմբ ոչ ունելով փարել աշնուական մտածութիւնս։ Զի թէպէտ էր մարմնովն փոքր, այլ ոչ որքան զՄակեդոնացին զԱղեքսանդր [1]), որ միայն երեք կանգնոյ ունէր զչափ հասակի. և ոչ զհոգւոյն խափանէր առնութիւն։ Իսկ սորա զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ, զճաշանաց հաւորսութեանց և այլոց որսոց պարապեալ. նորին աղագաւ և անտառս առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակի։ Նաև զորթանէն փոխէ վերոյ անտառին յոստ մի, ապարանս հովանաւորս շինեալ, որ ըստ պարսկական լեզուի Դուին կոչի, որ թարգմանի Բլուր...

III, 9. Յաւուրս սորա միաբանեալ բնակիչք հիւսիսոյ Կաւկասու, գիտացեալ զթուլասրտութիւն նորա եւ զյուլութիւն, և առաւել ի հրապուրելոյ մաղթանաց Սանատրկոյ ի գաղտնի հրամանէ Շապհոյ Պարսից արքայի, արշաւանօք ի միջոց աշխարհիս մերոյ հասանէին մեծաւ ամբոխիւ, որպէս թէ երկու բիւրովք։ Որոց պատահեալ պատերազմաւ արևելեան և արևմտեան զօրուն Հայոց՝ հանդերձ զօրապետօքն Բագարատաւ ասպետիւ և Վահանաւ Նահապետին Ամատունեաց. քանզի հարաւային մեր գունդք առ արքային Խոսրովայ էին յաշխարհին Ծոփաց։ Եւ զՄիհրան սպանեալ և զհիւսիսային մեր գունդն հարեալ ի թիկունս ընկեցեալ թշնամեացն, և հասեալ ի դրունս Վաղարշապատու՝ պաշարէին։ Որոց յանկարծակի ի վե-

## Фавстъ Византійскій.

III, 9. Եւ յետ այսորիկ թագաւորեաց Խոսրով Կոտակ, թոռն Խոսրովու, որդի... Տրդատայ...

III, 8. ...Եւ ետ հրաման թագաւորն զօրավարին իւրոյ՝ հանել խաշար յաշխարհէն բազում, և բերել զվայրենի կաղին մայրեաց, և տնկել զայն յԱյրարատեան գաւառին. և առեալ յամուր բերդէն արքունի, որում կոչեն Գառնի, մինչև ի դաշտն Մեծամօրի ի բլուրն՝ որ անուանեալ կոչի Դուին, որ կայ ի հիւսիսոյ կողմանէ քաղաքին մեծի Արտաշատու, զգետն խոնարհ մինչև յապարանսն Տիկնունի՝ տնկեցին զկաղինն։ Եւ կոչեաց զանունն նորա տաճար մայրի։ Եւ միւս ի մայրեացն յեղեգնաբերանին ի նմանէ ի հարաւակոյս լցին զդաշտն կաղնատուն՝ տնկով, և կոչեցին զանուն նորա Խոսրովակերտ։ Եւ անդ շինեցին զապարանսն արքունականն... Եւ աճեաց բարձրացաւ. և ապա զամենայն էրէս և զգազանս հրամայեաց ժողովել թագաւորն և լնուլ զքաղաքորմն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա...

III, 7. Յայնմ ժամանակի թագաւորն Մազքթաց Սանէսան ահնարին նիւթեաց զսրտմտութիւն ոխութեան ընդ իւրում Խոսրովու արքային Հայոց, և գումարեաց ժողովեաց զամենայն զօրս Հոնաց և Փոխաց, Թաւասպարաց... և այլոց խառնաղանճ բազմութեամբ... որում միանգամ ինքն իշխէր զօրացն բազմաց։ Եկն անց ըստ իւր սահմանն ընդ գետն մեծ ընդ Կուր, և եկն տարածեցաւ ելից զերկիրն Հայոց աշխարհին... Եւ խոյս ետ թագաւորն Հայոց Խոսրով յիւրմէ եղբարցն, նոյն ի Սանէսանայ յարքայէն Մազքթաց. և անկան յամուր բերդն Դարևնից յերկիրն Կողգայ, և ընդ նմա ծերունին Վրթանէս եպիսկոպոսապետն Հայոց... Ապա եկն եհաս Վաչէ որդի Արտաւազդայ ի Մամիկոնէն տոհմէն, զօրավար ամենայն

## Ж. св. Як.

1) Ср. у *Каллисѳена* (стр. 134): „քանզի էր Պաւրոս կանգունս հինգ, իսկ Աղեքսանդրոս կանգունս երեք“; также (стр. 25): „Եւ չեւեալ ի մանկոյն Նիկողայոս քամահեաց զհասակն (Աղեքսանդրի) ոչ գիտացեալ զհոգւոյն արիութիւն...“



## M. Хоренскій.

րայ անկեալ արևելեայ և արևմտեայ մեր զօրուն, և անդէն մերժեալ [illegible], ոչ ետուն ժամանել ճապաղել ի նետաձգութիւն ըստ օրինակի իւրեանց սովորութեանն, արագեալ սաստկապէս զհետ ունելով քաջաձիոցն ի դժուարս քարանց և ի վիմուտ տեղիս։ Մինչև յոչ կամաց գումարեալ թշնամեացն ի ճակատ, և զօրագլուխ նիզակաւորացն լեալ անարի ոմն սկայ վառեալ, և թաղեաւ կաճեայ բոլորովին ամենևիմբ պարածածկեցեալ շահատակէր ի մէջ զօրացն։ Յոր ակնկառոյց լեալ քաջացն Հայոց և յարձակեալ, ոչինչ կարէին վնասել. քանզի հարեալ նիզակաւ ճախր առնոյր կաճեայն։ Յայնժամ քաջին Վահանայ Ամատունւոյ հայեցեալ յեկեղեցին Կաթուղիկէ, ասէ. Օգնեա ինձ Աստուած, որ զԴաւթեան պարսաքարն դիպեցուցեր ճակատու խրոխտացելոյն Գողիաթու. ուղղեա և զնիզակս իմ ական հզօրիս այսմիկ։ Եւ ոչ վրիպեցաւ ի խնդրոյն, ընդ դաւակ ձիոյն յերկիր կործանեալ զահագին զվիրագն։ Այսպիսի դիպուած ի փախուստ յորդորեաց զթշնամին, և ի յաղթութիւն զՀայոց գունդն զօրացոյց։ Եւ աստի դարձեալ յաշխարհն Ծոփաց Բագարատ. վկայ հաստատուն առանց նախանձու լինի առ արքային վասն Վահանայ քաջութեանցն և առաքինի դիպուածոցն։ Վասն որոյ պարգևէ նմա արքայ զտեղի ճակատուն զՕշական, որ ինքնակամ դիմագրաւ նահատակն եղև։ Եւ փոխանակ Միհրանայ կարգէ զԳարջոյլ Մախազ նահապետ Խոռխոռունեաց ի վերայ զօրուն։

## Фавстъ Византійскій.

Հայոց մեծաց։ Զի երթեալ էր նա ի ժամանակին յայնմիկ զերկայն ճանապարհս ի կողմանս Յունաց... Եւ յետ այսորիկ առնոյր զաւարն, խաղայր գնայր երթայր իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին, երթայր գտանէր զՍանէսան թագաւորն Մազքթաց բուն գնդաւն, անթիւ անհամար զօրօքն հանդերձ ի Վաղարշապատ քաղաքի։ Առեալ զգունդն Վաչէ, և յանկարծակի յարձակեցաւ ի վերայ քաղաքին, և մատնեաց զնոսա Տէր ի ձեռս նորա։ Եւ իբրև տեսին զնա յարձակեալ ի վերայ իւրեանց, փախեան ելին ի քաղաքէ անդր յառապարն ի կողմն յՕշական բերդին. և զանապատն, և զքարոտ տեղին ապաւէն իւրեանց համարեցան. և լինէր սաստիկ պատերազմ յոյժ յոյժ։ Եւ նիզակակիցք զօրավարին Հայոց, որ էին Բագրատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիք, և Վահան նահապետ Ամատունեաց տոհմին, և Վարազ Կամսարական, հասանէին հարկանէին սատակէին զօրսն Ալանացն, և Մազքթացն, և Հոնացն և զայլոց ազգացն, և լնուին զդաշտն առապարացն առ հասարակ դիակամբք մեռելոց... Եւ զմնացեալսն սակաւս առաջի իւրեանց հալածականս տանէին մինչև յաշխարհն Բաղասճաց, և զգլուխն Սանէսանայ մեծի թագաւորին եկին բերին առաջի արքային Հայոց... եւ այսպէս վրէժ սրբոյն Գրիգորի[սի] խնդրեցաւ ի թագաւորէն Սանէսանայ, և ի բանակէ նորա. զի ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի։

## Ж. св. Як.

# ГЛАВА XII.

## О Тиранѣ II

a) Кончина Хосрова. Война армянъ съ парсами. b) Царствованіе Тирана. Смерть Врт̃анеса Великаго; престолъ его наслѣдуетъ Іусикъ.

### М. Хоренскій. III, 10, 11.

III, 10. *Յետ այսորիկ գիտացեալ Խոսրովայ, թէ ձեռն Շապհոյ Պարսից արքայի ընդ թշնամիսն է, լուծանէ զխաղաղութիւն ընդ նմա. և զմասնաւոր հարկսն արգելու ի նմանէ, տալով կայսեր. և ածելով զզօրս Յունաց, ընդդիմանայ արքային Պարսից: Բայց ոչ յերկարեալ զկեանս իւր՝ վախճանի, թագաւորեալ ամս ինն. և բարձեալ զնա թաղեցին յԱնի աւան հարս իւր: Եւ ժողովեալ մեծին Վրթանիսի զամենայն նախարարս Հայոց, հանդերձ զօրօք և զօրապետօք, յանձն առնէ Արշաւրի Կամսարականի, որպէս ծերագունի և յոյժ պատուականի յետ արքայի, զաշխարհս Հայոց: Եւ ինքն առեալ զՏիրան որդի Խոսրովու, գնայ առ կայսր, զի թագաւոր Հայոց ի տեղի հօր իւրոյ կացցէ: Իսկ արքայն Պարսից Շապուհ իբրև լուաւ զմահն Խոսրովու, և եթէ որդի նորա Տիրան առ կայսր գնաց, գումարէ զօրս բազումս ի ձեռն Ներսեհի եղբօր իւրոյ, որպէս զի թագաւորեցուցանել զնա Հայոց խորհեցաւ. և առաքէ յաշխարհս մեր, իբրև անտերունչս զսա վարկուցեալ: Որով պատահէ քաջին Արշաւրի Կամսարականի հանդերձ ամենայն հայաստանեայց զօրու ճակատ ունել ի Մռուղն անուանեալ դաշտի. և թէպէտ բազումք ի ծերունեաց նախարարացն անկան ի պատերազմին, սակայն յաղթեալ Հայոց գնդին, փախստական առնեն զզօրս Պարսից, և պահեն զաշխարհս մինչև ցգալն Տիրանայ:*

### Ф а в с т ъ.

III, 11. ...*Եւ յետ այսորիկ յաւել ևս լինել մարտ խստութեամբ պատերազմի ի մէջ Պարսից և Հայոց ընդ միմեանս. զի ժողովեցան հասին կուտեցան առնուլ զաշխարհն հայաստան երկրին: Ապա ժողովէր սպարապետն զօրավարն հայոց մեծաց Վաչէ զպատախումբ բանակ նախարարակոյտ զօրացն: Եւ ելանէր տայր ընդ զօրսն Պարսից պատերազմ. և լինէր անհնարին կոտորած յերկոցունց կողմանցն. և բազում ծախս մեծամեծ աւագանւոյն կոտորելոցն... Ապա յետ այսորիկ փոխեալ լինէր քաջ արանցն աշխարհաշէնն Խոսրով, թագաւորն Հայոց մեծաց: Ժողովեալ աշխար եդեալ, լացին ամենայն սահմանք աշխարհաց գաւառաց Հայոց մեծաց. և տարան առ իւր նախնիսն յԱնի յեկեղեցագաւառն Դարանաղեաց...*

III, 13. *Յաղագս թէ զիա՛րդ յետ մահուանն Յուսկանն անառաջնորդք լինէր երկիրս հայոց, և ոչ որդիքն Յուսկան արժանի եղեն հօրն աթոռոյն...*

III, 16. *Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն երէց, ի գաւառէն Տարօնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովհաննու... Ապա կոչեցին զնա առ արքայն. և առաքեաց զնա պատարագօք թագաւորն և հրովարտակօք և ձոխ իշխանօքն՝ որ ընդ նմա առաքեցանն: Մեծ զօրավարն հայոց՝ որում անուն էր Վասակ, ի Մամիկոնեան տոհմէն, և Մեհենդակ Ռշտունի, և Անդովկ Սիւնի, և Արշաւիր Կամսարական, մեծք և ծերագոյնք նահապետք, և տասն այր այլ, արք պատուականք, առին գնացին զՓառէն սուրբ ի մայրաքաղաքն Գամրաց ի Կեսարիա և անդ ձեռնադրեցին զնա ի կաթողիկոսութիւն Հայոց մեծաց:*

### М. Хоренскій.

III, 11. *Յեւթն և տասներորդի ամի ինքնակալութեան իւրում Աւգոստոս Կոստանդոս որդի Կոստանդիանոսի թագաւորեցուցանէ զՏիրան որդի Խոսրովու և առաքէ ի Հայս հանդերձ մեծաւն Վրթանաւ: Որոյ եկեալ, ունի զաշխարհս մեր խաղաղութեամբ, հաշտութիւն ընդ Պարսս առնելով... Իսկ յետ ընլոյ հընգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վրթանայ, փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ: Եւ ի հրամանէ նորին տարեալ հանգուցանէին ի գեօղն Թորդան, իբրու մարգարէական ակամբ հայեցեալ՝ որ զկնի բազում ժամանակաց եւ հօրն յայն տեղի հանգուցան նշխարք: Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ որդի նորին ի չորրորդ ամի Տիրանայ, յոյժ հետևող եղեալ հարցն առաքինութեանց:*

### Ф а в с т ъ.

III, 11. ...*Եւ յետ սորա (Խոսրովու արքայի) փոխեցաւ ևս յաշխարհէ մեծ քահանայապետն Վրթանէս. և ժողովեցան ամենայն աշխարհն Հայոց, և մեծաւ պաշտմամբ... արքունական կառօք զսուրբն Վրթանէս... մեծաւ լալեաց տրտմութեամբ մինչև ի գեօղն Թորդան ի Դարանաղեաց գաւառն յուղարկէին: Եւ անդ առ մեծի հայրապետին Գրիգորի զսորա սուրբ զոսկերսն հանգուցանէին, և զմշտակատար զսորա կենդանի յիշատակն ի վերայ կատարեալ, դառնային:*

III, 12. *Եւ յանցանելն յաշխարհէ թագաւորին Խոսրովու, Տիրան որդի Խոսրովու առ զթագաւորութիւնն իշխանութիւնն աշխարհացն Հայոց մեծաց: Եւ ընդ նմին սուրբն երանելի մանուկն Յուսիկ յաջորդեաց զտեղի հայրապետացն Հայոց...*

c) Война Шапуха съ Констанціемъ. d) Тиранъ идетъ на встрѣчу Юліану и даетъ ему заложниковъ.

**М. Хоренскій. III, 12, 13.**

III, 12. Բայց Շապուհ Որմզդեան առ Տիրան մեր արքայ առաւել սէր հաստատեաց. մինչև զօրավիգ օգնականութեան եղեալ, թափէ զնա յարձակմանէ հիւսիսականացն ազգաց, որ միաբանեալ ելին արտաքս քան զկապանն Ձորայ, և բնակեցան ի սահմանս Աղուանից ամս չորս։ Եւ զայլ յոլով թագաւորս նուաճեալ Շապհոյ, եւ զազգս բարբարոսաց բազումս ի սատարութիւն կալեալ յարձակեցաւ ի միջերկրայս եւ ի Պաղեստինէ։ Իսկ Կոստանդեայ արարեալ կեսար զՅուլիանոս, սպառազինեցաւ ընդդէմ Պարսից. և տուեալ ճակատ երկոքին կողմանքն պարտեցան. քանզի բազումք անկան յիւրաքանչիւրոցն. և ոչ մի ի միւսոյ թիկունս դարձոյց, մինչև ի հաւանութիւն եկեալ, արարին խաղաղութիւն ամս սակաւս։ Եւ ի պարսից դարձեալ Կոստանդեայ, յերկար հիւանդացեալ վախճանեցաւ ի Մոմփսիեստի քաղաքին Կիլիկեցւոց, թագաւորեալ ամս քսան և երիս։ Ի սորա աւուրս երևեցաւ խաչն [1]) լուսեղէն [*Ламбр. списокъ* имѣетъ: յերկինս յԵրուսաղէմ [2]), ամենայն քաղաքին հաւատացելոց և անհաւատից] առ երանելեաւն Կիւրղիւ [3])։

**Фавстъ.**

III, 20. Բայց դեռ բարեկամութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, ի մէջ թագաւորին Հայոց և Պարսից։ Նստէր յաշխարհին Ատրպատական որում անուն կոչէր բարձգահին իւրում՝ Շապուհ Վարազ։ Արդ մինչդեռ ևս յոյժ խաղաղութիւն էր ի մէջ թագաւորացն երկոցունց, անկաւ ի տեառնէ խռովութիւն ոչինչ բանիւք...

**М а л а л а.**

p. 365 и слѣд. Ἐπὶ δὲ τῆς αὐτοῦ (Κωνσταντίου) βασιλειας ἐνίκησαν οἱ Πέρσαι, ἤτοι Ἀββουραρσάκιος [читай: Σαββουραρσάκιος] ὁ βασιλεύς. καὶ ἐπεστράτευσε κατ' αὐτῶν ποιήσας Καίσαρα Ἰουλιανὸν συγγενέα αὐτοῦ... καὶ κατελθὼν ἐπὶ τὰ Περσικὰ ἐποίησε πάκτα εἰρήνης μετὰ Περσῶν ἐπὶ φανερὸν χρόνον, πολλῶν πεσόντων ἐξ ἀμφοτέρων ἐν τῇ συμβολῇ. Καὶ ὑποστρέψας... καὶ εἰσελθὼν ἐν Μαμφουεστίᾳ πόλει τῆς Κιλικίας, ἀρρωστήσας τελευτᾷ ἐκεῖ.

**Назіанз.**

[1]) Ср. у *Назіанзина* (II облич. слово на Юліана, рук. эчм. библ., № 908, стр. 206): „...բայց որքան զայս սքանչելին ևս էր և երևելագոյն. եկաց լոյս յերկինս խաչն նկարագրելով...“

[2]) Ср. въ *Пасхальной Хроникѣ:* „Τὸ σημεῖον τοῦ Σταυροῦ τοῦ Χριστοῦ ὤφθη ἐν Ἱεροσολύμοις κατὰ τοῦτον τὸν χρόνον... φωτοειδὲς τεταμένον... ἐν τῷ οὐρανῷ“. (*Migne*, Patrol., S. G. T. 92, p. 730).

[3]) Ср. *Исторію императоровъ* (рукоп. эчм. библ. № 102 серіи католикоса Георга, стр. 47*b*): „Եւ ի սոյն աւուրս գրեաց երանելին Կիւրեղ հայրապետն Երուսաղէմի առ Կոստանդիոս թագաւոր Հռոմայեցւոց վասն երևելոյ նշանի խաչին յերկնից“։



**М. Хоренскій.**

III, 13. Զայսու ժամանակաւ թագաւորեաց Յունաց ամբարիշտն Յուլիանոս. ուրացաւ նա զԱստուած և պաշտեաց զկուռս, և յարոյց հալածանս և խռովութիւն ի վերայ եկեղեցւոյ. և բազմադիմի ջանայր շիջուցանել զհաւատ քրիստոնէութեանս, բայց ոչ բռնութեամբ հաւանեցուցանէր, այլ խորամանկեալ հնարէր, զի լինէին երկրպագեալքն։ Եւ յարձակ լինի ընդդէմ Պարսից իշխանութեանն, և անցեալ ընդ Կիլիկիայ հասանէր ի Միջագետս, և զօրացն Պարսից կողմնապահաց հատեալ զշուան նաւակամրջին Եփրատու, զգուշանային անցիցն։ Իսկ Տիրան մեր թագաւոր իջեալ ընդ առաջ Յուլիանոսի, դիմէ ի վերայ Պարսից զօրացն և հալածականս առնէ. և հարեալ սպառսաւորութիւն, անցուցանէ զամբարիշտն Յուլիանոս հանդերձ բազմութեամբ պարգևօքն. և մեծարի ի նմանէ յոյժ։ Եւ խնդիրս արարեալ, զի մի՛ տարցի զնա ընդ իւր ի Պարսս, իբր անկար գոլով ձիավարել, և յանձն առեալ Յուլիանոսի՝ խնդրէ զօրս և պատանդս։ Եւ Տիրանայ խնայեալ ի յորդի իւր Արշակ երկրորդ, տայ ցնա զորդի իւր զՏրդատ զերրորդ՝ հանդերձ կնաւ և որդւովք, և զՏիրիթ զորդի մեռելոյն Արտաշիսի որդւոյ իւրոյ անդրանկան։ Զորս առեալ Յուլիանու նոյն հետայն առաքէ ի Բիւզանդիոն. և զՏիրան արձակէ յիւր աշխարհն և տայ զիւր պատկերն նկարագրեալ ի տախտակս յորում և զդիւաց ոմանց ընդ նմա. և հրամայէ յեկեղեցիս կանգնել յարևելից կուսէ, ասելով, թէ որք միանգամ ընդ Հռոմայեցւոց տէրութեամբն հարկին՝ դոյնպէս առնեն։ Զոր յանձին կալեալ Տիրանայ, առեալ բերէ. ոչ ածելով զմտաւ, թէ խաբէութեամբ դիւաց երկրպագելի պատկերս։

**Фав.**

**Мал.**

**Назіанзинъ.**

(I облич. слово на *Юліана,* рукоп. эчміадз. библ., № 908, стр. 188—189). ...Աւրէնք են թագաւորականք... բայց ի Հռոմայեցւոց յորժ ի փութալեացն պատկերաւք բազմամարդութեանն պատուել զթագաւորս։ Քանզի ոչ բաւական պսակքն և թագքն և ծիրանեացն ծաղիկք... այլ պարտ վարկանին և զերկրպագութիւնն ևս ի նոցանէն... Իսկ նա (Յուլիանոս) զի՞նչ հնարէր և կամ զի՞նչ քրիստոնէից հաստատութեանն կացուցանէր նենգութիւն... ի մի ածէր զաւրէնս Հռովմայեցւոց և զկռոցն երկրպագութիւն։ Եւ յաղագս այնորիկ առ պատկերսն մերձ դնէր զկուռս և իբր զայլ ինչ ի սովորական գրեցելոցն առաջի դնէր բազմամարդութեանն և քաղաքաց. և մանաւանդ որք հեթանոսաց իշխէին զպատկերս որպէս զի չար ինչ ամենայն իրաւք ոչ լինել մեղանչելն, այլ կամ զթագաւորացն զպատիւ խառն ընդ կռոցն ի ներքս բերել և կամ յայ[ն]ցանէ փախուստ զթագաւորն թշնամանել համարեսցի՝ խառն եղելոյ երկրպագութեան։ Յայնմանէ ի նենգութենէ և այնպէս յայտնագոյն իմացելոյ ամբարշտութեանն սակաւք զերծան...

**Ibid.**, стр. 167. ...Եւ եթէ հանդերձ արուեստիւ զինիցի (Յուլիանոս) և հաւանեցուցանելովն զբռնութիւն դունիցէ, իբրև զկարթիւ շուրջ զգէշն պատելով...

(Въ Словѣ *Кесарію,* рук. вѣн. мхит., № 217, стр. 118*a*). ...Եւ յարձակ հակառակ Պարսից լինի (զՅուլիանոս) խրատուն դեղեցկապէս լինէլցին, եկն առ մեզ փախստական երանելին...

e) Мученическая кончина св. Іусика и Даніила.

**М. Хоренскій. III, 14.**

Արդ հասեալ Տիրանայ ի գաւառն Ծոփաց, յիւրում արքունական եկեղեցւոջն կամեցաւ կանգնել զպատկերն։ Զոր յափշտակեալ սրբոյ Յուսկանն, եհան ի ձեռաց արքայի. և ընկեցեալ յերկիր, կոխեալ մանրեաց, զգացուցանելով զիրին խորամանկութիւն։ Որում ոչ ինչ ունկնդիր եղեալ Տիրան, քանզի երկեաւ ի Յուլիանոսէ, զմբռտաւ ածելով մեռանել ինքեան իբր զկոխող թագաւորական պատկերի. և յաւելեալ ի բորբոքումն չարութեանն, զոր ունէր ընդ որդւոյ Յուսկանն յաղագս համապազորդ յանդիմանութեան իւրոց յանցանաց, հրամայեաց ջալոտիւք հարկանել յերկար, մինչ ի գանելն աւանդեաց զոգին։ Եւ յետ կատարման նորա թշնամանեալ անիծիւք Տիրանայ ի ծերունւոյ քահանայէն Դանիէլէ, որ աշակերտ էր սրբոյն Գրիգորի և հիւպերետ, հրամայեաց զնա խեղդամահ առնել։ Զոր բարձեալ աշակերտացն թաղեցին ի միայնարանի նորին, որ կոչի Հացեաց դրախտ։ Իսկ զմարմին սրբոյ Յուսկանն բարձեալ տարան առ հայր նոր ի գեօղն Թորդան. որ եկաց եպիսկոպոսութեանն ամս վեց։

**Фавстъ Византійскій.**

ш, 12. ...Իսկ թագաւորն Տիրան և այլ մեծամեծ աւագանին նախարարացն կամ աշխարհն ամենայն, ոչինչ ըստ Աստուծոյ կամացն վարս յանձն առեալ՝ իմաստուն ինչ գնացեալ լինէին։ Բան զամենայն մանաւանդ թագաւորն կամ իշխանքն... Վասն որոյ հանապազ ընդդիմացեալ լինէր երանելի հայրապետն Յուսիկն, վարժ բանիւքն համեստութեանն քրիստոսական խրատուն՝ հանապազ յերեսսն յանդիմանութեանցն հարկանելով խրատելով կշտամբելով արկանէր... բողոքէր... Որ իբրև օր մի յաւուրց տարեկան դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ այլովք աւագանւովն մտանել յեկեղեցին. իսկ նա ընդդէմ բարբառեալ ասէր. Զեւ արժանի, հի՞մ գաս, մի՛ գար ի ներքս։ Վասն որոյ անդէն ի ներքս քարշէին զնա յեկեղեցւոջն. ըրածեծ եղեալ ջախջախեալ քահանայապետն Աստուծոյ սուրբ երանելի մանուկն Յուսիկ, կիսամահ կոչկոճեալ ընկեցեալ լինէր։ Զոր բարձեալ պաշտօնէիցն դրան եկեղեցւոյն ի Բնաբեղ բերդէն արքունի՝ մեծ Ծոփաց գաւառին, եկին բերին ի գաւառն Դարանաղեաց ի գեօղն Թորդան. և անդ ոչինչ յետ բազում աւուրց հանգեաւ, և եդաւ մօտ առ Գրիգորի և ընդ հարս իւր։

ш, 14. Բայց յայնժամ դեռ ևս կենդանի էր ծերունին սուրբն մեծն քորեպիսկոպոսն Դանիէլ այր սքանչելի։ Աշակերտ եղեալ էր սա մեծին Գրիգորի, վերակացու և գլխաւոր Եկեղեաց նահանգին Տարօնոյ... Արդ... խորհուրդք խորհեցան, հաւանեցուցին զթագաւորն ածել զծերունին զԴանիէլ յիւրեանց բանակն, զի... նստցի նա յաթոռն հայրապետական... Եւ իբրև մտանէր առաջի թագաւորին Տիրանայ քորեպիսկոպոսն մեծն Դանիէլ, անդէն ի ձեռն առնոյր զկշտամբութիւն յանդիմանութեանն։ [Слѣдуетъ пространное обличительное слово Даніила на царя, стр. 38—41].

...Այլ զի կոչեցէք զիս ելանել գալ առ ձեզ, զա՞յս ամենայն կամէիք լսել դուք յինէն։ Եթէ իմ չէր զայս ամենայն պատմե[ա]լ ձեզ, սակայն այս ամենայն լինելոց էր ձեզ վասն սպանման արդարոյն մեծին մանգանն Յուսկան... Եւ եղև իբրև զայս ամենայն լուաւ (թագաւորն Տիրան), բորբոքեալ ի բռնաւորութիւն... տայր հրաման անդէն խեղդամահ առնել զնա... Ապա բարձին զմարմին նորա սուրբ սիրելիք իւր աշակերտք... և գնացին տարան եդին զմարմինն ի տեղւոջն, ուր յառաջագոյն էր կայեանք խցկանն իւրոյ յերկրին Տարօնոյ... որ անուանեալ կոչի Հացեաց դրախտ...



f) Возвращеніе Зоры отъ Юліана и истребленіе его со всѣмъ его родомъ.

**М. Хоренскій. III, 15.**

Եթէ զկարգ Զօրայ [1]) առեալ զզօրս Հայոց դարձաւ ի Յուլիանոսէ և սատակի ազգաւ...

Թուղթ Յուլիանու առ Տիրան։ Ինքնակալ Յուլիանոս, ծնունդ Խոսրովայ [2]), Արամազդայ որդի և ճակատագրեալ յանմահութիւն, Տիրանայ մերում գործակալի խնդալ։ ...Արդ եթէ ոչ ի քոյ կամացդ արար նա զայն, սատակեսցես զնա (զԶօրայ) ազգաւխմբ՝ առ ի չթողուլ նմա մնացորդ. ապ՝ եթէ ոչ, երդուեալ ի Ռաս, որ զթագաւորութիւնս շնորհեաց մեզ, և յԱթենաս՝ որ զյաղթութիւնն, զի ի դառնալն մերում անպարտելի յօրութեամբս վանեսցուք զքեզ և զաշխարհդ։—Տիրանայ զայս լուեալ և յոյժ զարհուրեալ, առաքէ զմարդպետն կոչեցեալ հայր՝ հանդերձ երդմամբ և կոչէ առ ինքն զԶօրայ... Եւ միայնացեալ Զօրայ, գայ առ արքայ յոչ կամաց. և արքայ զԶօրայ ի բուռն առեալ, ունի և զամուրն նոյին զԱղթամար, և բառնայ զամենեսին սատակմամբ։ Բայց զմանուկ մի, որդին Մեհենդակայ եղբօր նորա, փախուցեալ դայեկացն ապրեցուցին։ Իսկ արքայ փոխանակ նորա կարգէ զՍաղամուտ տէր Անձևացւոյ։

**Ф а в с т ъ.**

ш, 18. Բայց յայնմ յանմիտ թագաւորութեանն ժամանակի ոչ միայն թշնամիք թշնամեաց, եւ բարեկամք բարեկամաց... դաւաճանութիւնս մատնութիւնս սկսան յարուցանել ի մէջ Հայաստան երկրին... Բայց քան զամենեսին աւելի այր մի անօրէն եւ պսամուտ, որ աւելի ընդ ազգս նախարարացն գրգռէր զթագաւորն Տիրան։ Այս ինքն որ ունէր զպատիւ մեծի տէրութեանն, այր ներքինի... որում Հայր կոչէին... Մանաւանդ աւելի զերկու տոհմն զաւագս տայր իւրով չարախօսութեամբն հանել ընդ սուր եւ անունդ առնել միահաղոյն, զտոհմն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց... Յայնմ ժամանակի ի գայթակղի գտանէին ի դայեկաց հանկարծ փախուցեալ. Տաճատ որդի Մեհենդակայ Ռշտունւոյ, և միւս ևս Շաւասպ որդի Վաչէի Արծրունւոյ...

IV, 50. ...յետոյ եկաց յարքայէն Հայոց (Արշակայ) և աշխարհն Կաղբից. եթող զարքայն Հայոց և գնաց Սաղամուտ տէրն Անձևացեաց և ընդ նմա իշխանն մեծի Ծոփաց, և գնացին առ թագաւորն Յունաց...

---

[1]) Объ этомъ имени см. выше, въ I ч. настоящаго изслѣдованія, стр. 222—223.

[2]) См. тамже, стр. 224.

g) Смерть сыновей Іусика. Престолъ его занимаетъ П'арнерсехъ.

### М. Хоренскій. III, 16.

Բայց ի Տիրանայ խնդրեն նախարարքն Հայոց այր արժանի՝ կացուցանել յեպիսկոպոսութիւն փոխանակ Յուսկանն։ Քանզի որդւոցն նորին ոչ գովելի վարս ստացեալ, անարժանք եղեն առաքելականին այնորիկ աթոռոյ. այլ և մահ ևս հասեալ նոցա յաւուրսն յայնս՝ յոյժ աճապին և սարսափման լուղայ արժանի, ի միում տեղւոջ շանթահար եղեալ երկոցունցն, որոց Պապ և Աթանագինէս կոչէին անուանքն. ոչ թողլով զաւակ հասակեայ, պատշաճ այնմ, բայց միայն մի որդի Աթանագինեայ, որում Ներսէս անուն ճանաչիւր, որ ի Կեսարիա էր ի հրահանգս, և զայնու ժամանակաւ գնացեալ ի Բիւզանդիոն՝ առնուլ կին զդուստր Ասպիոնայ որումն իշխանի մեծի։ Եւ վասն ոչ կալոյ այր յազգէ Գրիգորի, ընտրեցին զՓառներսեհ ոմն յԱշտիշատից Տարօնոյ, կացուցին քահանայապետ ի տասներորդ ամի Տիրանայ. որ կալաւ զաթոռն ամս չորս։

### Фавстъ.

III, 15. Ապա (յետ մահուան Յուսկան) խորհուրդ արարին մատուցանել զորդի ս. Յուսկան ի քահանայութիւն հարցն վարդապետութեան... զի կալեալք ակամայ առեալք զձեռնադրութիւն սարկաւագութեան՝ հարկեցան Պապ և Աթանագինէս... բայց յայնմ ժամանակի ոչ ոք գոյր, որ առաջնորդէր նոցա զքահանայապետութիւնն...

III, 16. Յայնմ ժամանակի համարեցան արժանի զՓառէն ոմն երէց, ի գաւառէն Տարօնոյ... Եւ նստաւ Փառէն յաթոռ հայրապետական սակաւ ժամանակս...

III, 19. Այլ որդիքն Յուսկանն, Պապն և Աթանագինէս, յաստուածատեցութեանն զկեանս իւրեանց վարեցին... Եւ բազում հատեալ յարբշռութիւն զԱստուծոյ զտաճարաւն այպն առնէին... Եւ մինչ էին յուրախութեան մեծի, բազմեալք էին ի ներքս եպիսկոպոսանոցին ուտէին և ըմպէին, յանկարծակի հրեշտակ Տեառն երևեցաւ ի նմանութիւն փայլատական, և հարեալ սատակէր զերկոսեան զեղբարսն միանգամայն ի բազմականին անդ... Բայց մնաց Աթանագինէի որդի ի Բամբշնէ, ի քեռէ թագաւորին, և անուն նորա Ներսէս, որ եկաց յաթոռ հայրապետացն առ յապա ամենայն երկրին Հայոց... (IV, 3) ...Սա (Ներսէս) լեալ էր ամուսնաւոր [1]) յաշխարհական կեանս նախ յառաջ մանկութեան. ի տղայութենէ սնեալ և ուսեալ ի Կեսարիայ քաղաքին Գամրաց ընդ հաւատարիմ վարդապետօք... Այլ ի ժամանակին յայնմիկ էր ի վարս զինուորութեան ի գործակալութեան, սիրելի սենեկապետ արքային Արշակայ...

[1]) Ср. *Житіе Нерсеса* („Սոփերք", VI, стр. 19): „...Ներսէս... ի տղայութենէն սնեալ և ուսեալ ի Կեսարիայ քաղաքին... Եւ էր անուանացեալ վասն ժառանգութեան աթոռոյն. և ընդ համեստ ամուսնոյ իւրոյ կացեալ ամս երեք, որ էր յազգէն Մամիկոնենից, անուն նորա Սանդուխտ. և ի նմանէ լինի Սահակ։ Եւ իբրև վախճանեցաւ ամուսին իւր, եկեալ յազգական իւր յԱրշակ արքայ..."



h) Тиранъ, обманутый Шапухомъ, идетъ на зовъ его и ослѣпленъ имъ.

### М. Хоренскій. III, 17.

Յետ այսր ամենայնի ամբարիշտն Յուլիանոս ըստ արժանի խորհրդոցն վէր ընկալեալ ի փորոյն [1]) սատակի ի Պարսս։ Եւ զօրացն դարձեալ, թագաւոր ունելով զՅոբիանոս, որ ի ճանապարհի վախճանեալ՝ ոչ ժամանեաց ի Բիւզանդիոն։ Իսկ արքային Պարսից Շապհոյ զհետ նոցա կրթեալ, և խաբկանօք կոչէ զՏիրան, գրելով թուղթ այսպէս։ Մազդեզանց քաջ և բարձրագոյն աստուածոց Շապուհ արքայից արքայ, ի բարւոջ մերում յիշեալ եղբայր սիրելի Տիրան Հայոց արքայ, ողջոյն շատ։ Ճշմարտիւ ի վերայ հասաք, եթէ զսէրն մեր հաստատուն պահեցեր, ոչ գալով ընդ կայսեր յաշխարհս Պարսից... ուստի և մեր պահապանք գնդին վատասրտեալ ի բաց եկին, զքեզ պատճառելով, վասն որոյ մեր ցասուցեալ, սալարի նոցա զլուխ արկանել տուաք [2])։ Եւ քում թագաւորութեանդ ոչինչ վնասեցուք, երդուեալ ի Միհր մեծ աստուած. միայն փութա տեսանել զմեզ, զի խորհել ինչ մարթասցուք վասն հաստատութեան սիրոյն։—Զայս տեսեալ Տիրանայ, խելագարեալ գնաց առ նա. քանզի արժանն տանէր զնա ի տեղի հատուցմանն։ Զոր տեսեալ Շապհոյ, կշտամբեաց զնա բանիւք յանդիման զօրաց իւրոց, և զաչս նորա կուրացոյց՝ որպէս Սեդեկիային ի հնումն. թէև արդեօք վրէժ ընդ սըրբոյ առնն այնորիկ պահանջեցաւ, որով լուսաւորէր աշխարհս, ըստ աւետարանին ձայնի՝ գոլ լոյս աշխարհի, յորմէ խաւարեցոյց Տիրան զՀայս. խաւարեցաւ և ինքն, կալեալ զթագաւորութիւնն ամս մետասան։

### Фавстъ.

III, 20. ...Ապա իբրև զայս ամենայն լուաւ Վարազ Շապուհ Ատրպատական մարզպան ի կատաղախօս ի շնաբերանն Փիսակայ, վաղվաղակի նամակ ամբաստանութեան գրեալ Վարազայ յարքայէն Հայոց մատուցանէր Ներսեհի արքային Պարսից։ Եւ այնչափ զայրացոյց... զթագաւորն Պարսից ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրաման ի նմանէ... որսալ ըմբռնել զարքայն Հայոց... Ապա եկն եհաս Շապուհ Վարազն երիւք հազարօքն և յանդիման եղև թագաւորին (Տիրանայ) յերկրին Ապահունեաց. և մեծապէս մեծարեցաւ ի նմանէ... Եւ ի ժամանակին յայնմիկ այնպէս դիպեցաւ, յայնմ ժամանակի զօրավարք չէին անդ, այլ սարտուցեալ էին... սոյնպէս և զօրքն արքունի յիւրաքանչիւր տունս... դադարեալ էին։ Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այրեձի. բայց միայն սակաւ սպասաւորօք... և տիկնաւն հանդերձ և արքայորդի մանուկն Արշակ... Եւ իբրև ոչ ինչ բազում աւուրք ընդ մէջ եղեն, յընթրիս կոչէն (Վարազ Շապուհ) ի հաց հրաւիրեալ զարքայն... Ապա իբրև ընդ գինիս մտին, քաջ արբեալ լինէին թագաւորն և որ ընդ նմայն էին, զօրն զարանակալ... զնոսա յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականի ի վերայ հասեալք ըմբռնէին, և վահանափակ շերտաւորացն պատէին զթագաւորն Տիրան։ Եւ կալեալ կապեալ զոտս և զձեռս նորա... խաղացուցին յերկրէն Ապահունեաց։ Իբրև եկին հասին ի գեւղ մի, որում անուն Դալարիս կոչէին... Եւ ասէ Վարազ. Աղէ՛, տեսէք ածուղ, որով երկաթ շողացուսցուք, զի զաչս խաւարեսցուք զարքայիս Հայոց։ Եւ անդէն բերին ածուղ, որով խարէին զաչս Տիրանայ։ Ապա ինքնին խօսել սկսաւ Տիրան և ասէ... Այլ ինձ յուշ եղև և գիտեմ՝ թէ այն զի խնդրեցաւ յինէն վրէժ չարեաց մեղացն իմոց, փոխանակ զի խաւարեցուցի ես զաշխարհս, որում թագաւորեալ էի՝ յերկուց լուսաւոր վարդապետացն, և կարծեցի շիջուցանել զլոյսն ճշմարտութեանն քարոզութեանն երկուց հաւատարմաց, վասն այսորիկ խաւարեցաւ լոյս տեսանելեաց աչացս իմոց...

### Каллисөенъ.

с. 49—50. Ապա պատահեցին նմա հրեշտակքն Դարեհի թուղթս բերելով նմա... և պարզեալ զթուղթն Աղեքսանդր ընթեռնոյր. Թագաւոր թագաւորաց և աստուածոց ազգակից, աթոռակից արեգական աստուածոց Միհրեայ, և ծագողի ընդ արեգական, ես ինքն աստուած Դարեհ Աղեքսանդրի իմում ծառայի...»

с. 85—86. ...և Դարեհ ժողովէր զզօրագլուխս իւր և խրատ խնդրէր... բայց եկայք խորհեսցուք զօգուտն հաստատուն և պատասխանի արասցուք...

[1]) Ср. у *Назіанзина* (I облич. слово на Юліана, рук. вѣн. мх., № 217, стр. 186a): „...Եթէ ոչ գեղեցկապէս կերակրեաց արեամբն այնորիկ և վիրաւն, զոր ի փորոյին ընկալաւ (Յուլիանոս)..."

[2]) Ср. у *Евсевія* (Chron., II, 102): „Մինչդեռ՝ փախուցեալ թագաւոր, արկեալ զլուխ որբ և մեռաւ"։

## ГЛАВА XIII.

# Объ Аршакѣ II.

a) Шапухъ воцаряетъ Аршака и дѣлаетъ нападеніе на Грецію. b) Св. Нерсесъ и его полезныя учрежденія.

**М. Хоренскій. III, 18, 20.**

III, 18. *Բայց Շապուհ թագաւորեցուցանէ փոխանակ Տիրանայ զորդի նորա զԱրշակ, ածեալ ի զօրացն Հայոց, զի մի խափան ինչ առաջի արկելոց իւրոց գործոցն լինիցին... ինքն գնաց երթեալ յունական զօրացն, և հասեալ ի Բիւթանիա, նստեալ ամիսս յոլովս...*

III, 20. *Յերրորդ ամի թագաւորութեանն Արշակայ եկաց եպիսկոպոսապետ Հայոց մեծն Ներսէս, որդի Աթանագինեայ, որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանայ, որդւոյ ս. Գրիգորի։ Եւ ի Բիւզանդիոյ դարձեալ է Կեսարիոյ և եկեալ ի Հայս, զամենայն կարգս ուղղութեանց հարցն իւրոց նորոգեաց, այլ և առաւել ևս. բանզի զբարեկարգութիւնն, զոր ետես ի Յունաց աշ-*

**Ф а в с т ъ.**

III, 21. *...Ապա դառնէր հրովարտակ թագաւորն Յունաց Վաղէս առ արքայն Պարսից. նախ դու, ասէ, դարձուցես զգերութիւն առեալ յերկրէն Հայոց, և զթագաւորն Տիրան ինքնին դըլխովին... Եւ իբրև լուաւ զայն հրաման արքայն Պարսից, վաղվաղակի զիրսն կատարէր. հանէր զկապեալն Տիրան ի տանէն բանդի... զի թագաւորեցուսցէ զնա... Ապա տուեալ պատասխանի Տիրանայ, եթէ անօգուտ է ինձ եւ անպատշաճ է կուրութեամբ... ունել զթագաւորութիւն. բայց փոխանակ իմ թագաւորեցո՛ զԱրշակ որդի իմ։ Յայնմ ժամանակի թագաւորեցուցանէր զԱրշակ որդի նորա ի վերայ աշխարհին Հայոց...*

IV, 3. *...Ապա յականէ յանուանէ խնդրեցին աշխարհաժողով զօրքն բազմութեան զայն, որ անուանեալ կոչէր Ներսէս, զորդի Աթանագինէի, զթոռն քահանայապետին Յուսկան, որդւոյ Վրթանեայ, որդւոյն Գրիգորի մեծի...*

IV, 4. *Ապա գումարեցին զիշխանս մեծամեծս, զի առցեն զցանկալին Ներսէս և գնասցեն ուր սովոր էին զհայրապետսն օծանել... Եւ ինքն երթեալ հասանէր ի կողմանս Տարօն գաւառին. և ժողովէր առ ինքն զամենայն եպիսկոպոսունս Հայոց աշխարհին... և խորհուրդ բարեաց ի մէջ արկանէին, կատարել անդ աշխարհաժողով կարգս*

**Житіе св. Нерсеса.**

„Սոփերք“, VI, с. 19. *...Ապա յականէ յանուանէ խնդրէին աշխարհաժողով բազմութիւնն զմանուկն Ներսէս զորդի Աթանագինեայ որդւոյ Յուսկան որդւոյ Վրթանիսի որդւոյ որդւոյն Գրիգորի...*

с. 32. *Եւ իբրև ձեռնադրեցաւ մեծն Ներսէս ի Կեսարիա, և եկեալ ի Հայս նորոգէր զգահս իշխանացն Հայոց...*

с. 39—42. *Եւ տայր հրաման շինել եպիսկոպոսանիստս և եղբայրանոցս մեծամեծս եւ փոքունս, եւ հրամայէր ի շէն տեղիս եւ յանցս ճանապարհաց եւ*



**М. Хоренскій.**

*խարհին, մանաւանդ ի թագաւորեալ քաղաքն, ի սմա նկարագրէ։ Ժողովարարեալ եպիսկոպոսաց և համօրէն աշխարհականօք, կանոնական սահմանադրութեամբ հաստատեաց զողորմածութիւն, խլելով և զանգթութեանն արմատ, որ բնաբար սովորութեամբ էր յերկրիս մերում։ Քանզի զմեռեալս հոլովեալ լինէին, իբր պիղծ համարեալ յօրինաց. և զբորոտս փախստեայս առնէին, զի մի՛ ի նոյանէ յայլս փոխեսցի ախտն. որոց դադարք՝ անապատք և ամայիք, և ծածկոյթ՝ վէմք և մացառք, ոչ յումեքէ գտանել մխիթարութիւն թշուառութեանցն։ Առ այսոքիկ և հաշմ անդամովք ոչ խնամեալ լինէին, և հիւրք անծանօթք ոչ ընդունէին, և օտարք ոչ ժողովէին։ Իսկ նորա հրամայեալ ըստ քաղաքաց գաւառաց շինել աղքատանոցս ի խորշս և ի զերծ տեղիս, զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինիցին ի մխիթարութիւն մարմնոց վըշտացելոց։ Եւ բաժանեաց ի նոսա գաւառս, և ագարակս, պտղաբերեալ յարդեանց անդաստանաց և ի կթից արօտականաց և ի գեղմանց. զի պաշտեսցեն զնոսա հարկաւ բացէ ի բաց, և նոքա մի՛ ելցեն ըստ բնակութեան իւրեանց։ Եւ յանձն արար Խադայ, որ էր ի Մարաց Կողմանց սարկաւագ իւր։ Հրամայեաց և յամենայն գիւղս*

**Ф а в с т ъ.**

*եկեղեցւոյն ...Յայնմ ժամանակի կարգեցին կազմեցին կանոնեցին... և արարին զամենայն ժողովուրդս երկրին Հայոց իբրև կարգ միաբանութեան վանականաց համաշխարհի... առ հասարակ զնոյն օրինակ առնել հրամայէր յամենայն աշխարհս և ի գաւառս և ի կողմանս կողմանս, ի կոյս կոյս, ի խորշս խորշս սահմանացն Հայոց. յայտ արարեալ զպատեհ պատեհ տեղիս զատուցանել, շինել աղքատանոցս... օթևանս և դարմանս և ռոճիկս... և մի՛ ելանել ի մուրացն տառապանս... այլ արժան է զի ամենեքեան առ հասարակ ողորմածութեամբ և երկիւղիւ տարեալ նոցա զդարմանն... բազում կարգս կանոնաց հայրենիս կարգէր... եւ զի մի՛ զմահ մարդկանն առանց դարձի միսանդամ կենդանանալոյ համարիցին, և անյուսութեամբ ի վերայ դնացելոցն օձիս պատառեսցեն լալեացն կոծոյն... և փախչել աւելի ի մերձաւոր և յազգին տոհմակից խառնակութեան ամուսնութենէն... Եւ բազմացոյց զկարգս եկեղեցեաց ի շէնս և յանշէնս. սոյն օրինակ բազմութիւնք կրօնաւորաց... Այրեաց և որբոց և չքաւորաց հանգիստ եւ դարման առնէր... այլ կաղք և կոյրք... հաշմեալք և ցանկանալք... ի նորա ակլմբի դարմանէին բազմեալք...*

V, 31. *...յամենայն ի շէնս եւ իգեղս յամենայն կողմանս Հայոց առ հասարակ ի հրամանէ քահանայապետին (Ներսիսի) էին շինեալ օտարատունք, հիւանդանոցք, աղքատանոցք...*

IV, 12. *Այրս այս Խադ բուն էր սա ի Կարին գաւառէ ի գեղջէ Մարբաց. ձեռնասուն էր սա եպիսկոպոսապետին Ներսիսի... ապա աղքատաց ևս տեսչութիւն ի ս. Ներսէսէ սմա հաւատացաւ...*

**Житіе св. Нерсеса.**

*իգլուխս լերանց պանդոկս շինել եւ հիւրանոցս ի քաղաքս և յագարակս... Եւ բաժանեաց յեկեղեցեաց գեօղս և դաստակերտս ի մխիթարութիւն նոցա. և ոչ որ տեսանէր յաշխարհին Հայոց մուրացիկ յաւուրս Ներսիսի։ Եւ այլ անուղղայ կարգս և անօրէնս մոլահաճոյս յերկիրս Հայոց ի բազում ժամանակաց ունէին, զոր եբարձ ս. Ներսէս. զի զբորոտս՝ որ պիսակս անուանի և զուրուկս հալածէին յանբնակ տեղիս, զի մի՛ յայլս փոխեսցի ախտն. և նոքա հեռանային յընտանութենէ եւ յեղբայրութենէ եւ ի հարց եւ յամուսնոց. եւ լինէր տագնապ սաստիկ վասն այսր պատճառի, եւ բազումք լինէին գազանակուրք, գետավէժք, ձիւնախեղդք և անգիւտ կորնչէին։ Ապա մեծն Ներսէս ածէր զնոսա յիւրաքանչիւր տունս եւ ոչ տայր զնոսա հալածել որպէս զառաջինն... Դարձեալ զի և այլ հեթանոսական օրինօք վարէին Հայք. զի ի վերայ մեռելոցն անյուսութեամբ ցտէին զերեսս եւ արեամբ ապականէին եւ այնպէս յուղարկէին զմեռեալս։ Եւ վասն զի ընդ ընտանիս եւ մերձաւորս արեան ամուսնանային յա-*

| М. Хоренскій. | Фавстъ. | Житіе св. Нерсеса. |
|---|---|---|
| վանս շինել զի լինիցի օտարանոց. և տեղի սնըն-դեան որբոց և ծերոց, և անուանողաց տածումն։ Շինէ և յանապատս և յանմարդ տեղիս եղբայ-րանոցս և մենաստանս և յառականձնականս խըր-ճիթս. և հայր և վերակացու նոցա կացոյց զՇաղիտայ և զԵփրեմ և զԳինդ՝ որ յազգէն Սըլ-կունեաց և զայլս ոմանս։ Եւ զերկուս զայսոսիկ յաղագս նախարարացն բանից. մի՝ զմերձաւորաց խնամութիւն, զոր վասն ագահելոյ ընչ-ականն ազգականութեանն առ-նէին. և միւսն որ ի վերայ մեռելոցն գործէին ողբս ըստ հեթանոսական սովորու-թեանն։ Եւ էր այնու-հետև տեսանել զաշ-խարհս մեր՝ ոչ որպէս բարբարոս պանդխտա-կեալս, այլ որպէս զքա-ղաքացիս համեստա-ցեալս։ | v, 25. Սրբ երկու կրօնաւորք անապատաւորք… անուն միում Շաղիտա, և էր սա ազգաւ ասորի… և միւումն անուն Եպիփան, և էր սա ազգաւ յոյն…<br><br>v, 26. Շաղիտայս այր սուրբ, էր լեալ աշակերտ մեծին Դանիէլի և ի տղայութենէ իւրմէ սնեալ էր համակ յանապատս և ընդ անապա-տաւորս խոտաճարակ լեալ էր…<br><br>v, 27. Այլ երանելին ս. Եպիփան էր ընդ ս. Շաղիտայի աշակերտ եղեալ մեծին Դանիէլի. եւ սա ի մանկութենէ սնեալ էր յանա-պատի…<br><br>vi, 16. Եւ էր Գինդ այս ի Տարօն գաւառէ, եւ լեալ սա աշակերտ մեծին Դանիէլի. եւ յետ նորա էր գլուխ արեղայից, եւ վարդապետ միանձանց եւ առաջնորդ մենա-կեցաց, եւ վերակացու վանե-րայից, եւ ուսուցիչ ամենայն անա-պատաւորաց, եւ վերակացու ամենեցուն։ | ղագս եպիսկոպոսական առա-ջնորդութեան եւ հայրե-նեաց. իսկ Մեծն Ներ-սէս եբարձ զայն ի Հա-յոց եւ հրամայեաց մինչեւ ի հինգ ազգն ոչ ամուսնանալ… |



c) Умерщвленіе Трдата, брата Аршака. Св. Нерсесъ отправляется въ Византію и возвращаетъ заложниковъ.

| М. Хоренскій. III, 21. | Малала. | Фавстъ Византійскій. |
|---|---|---|
| Սաստիկ և յոյժ ահաւոր էր ի վերայ անիրաւաց Վա-ղենտինիանոս. որով եւ զՔաղ-կեդոնացին վասն յափշտակութեան աւ-տաւելեաց, և զՊրոկոպիոս անուն Ներ-քինապետ արքունի կենդանւոյն. բանզի երիցս հրամայեաց, և ոչ գտեալ յափշտակութեան ընչից նոցա այրեաց։ Եւ ի նմին աւուր հասեալ այնց հրեշտակաց, զոր ի Հայոց առաքեաց, ցասուցին զնա առաւել զրուցաւ՝ յԱրշա-կայ խրախտանալոյն։ Եւ վասն զի ի ժամուն յայնմիկ ի ձեռին [вар. Ламбр. сп. ...] ...[1]), հրամայէ սպանանել զՏըր-դատ զեղբայրն Արշակայ զհայր մանկանն Գնելոյ։ Եւ Թէոդոսի զօրածանու ե-լեալ ի վերայ Հայոց զինեալ, և հասեալ ի սահմանս հա-յոց, զարհուրի Արշակ և առաքէ ընդ առաջ նորա զՄեծն Ներսէս. և ի հաշտու-թիւն մաղթեալ, տայ լինել զխափանեալ հարկսն, եւ պայծառ պատարագօք ընդ նմին իսկ առաքէ զՄեծն Ներ-սէս։ Որոյ երթեալ եւ ի հաշտութիւն զԹագաւորն շարժեալ, մեծարի ի նոյանէ յոյժ. նաև զպատանդսն խնդրեալ առնու և դառ-նայ։ Եւ կոյս մի անուն Ոլոմ-պիադայ յազգէ կայսեր, կին առնէ Արշակայ։ Բայց կայսերն բարերարութիւն արարեալ մանկանն Գնելոյ՝ յաղագս սուր ի նոյանէ մահուանն Տրդատայ հօր նորա, տայ նմա զպատիւ հիւպատոսու-թեանն և գանձս յոլովս։ Ընդ որ խանդացեալ Տիրիթ, խորհէր նմա ի չա-րիս հանապազ սպասելով նմա դիպող աւուր։ | p. 339 и сл.<br>Ὁ δὲ θειότατος βασιλεὺς Βαλεντινιανὸς πολλοὺς συγκλητικοὺς καὶ ἄρχοντας ἐπαρχιῶν ἐφόνευσεν, ὡς ἀδικοῦντας καὶ κλέπτοντας καὶ ἁρπάζοντας. Τὸν δὲ πραιπόσιτον τοῦ παλατίου αὐτοῦ ὀνόματι Ῥοδανόν, ἄνδρα δυνατώτατον καὶ εὔπορον καὶ διοικοῦντα τὸ παλάτιον ὡς πρῶτον ὄντα ἀρχιευνοῦχον καὶ ἐν μεγάλῃ τιμῇ ὄντα, ζῶντα ἔκαυσεν .. ὁ γὰρ πραιπόσιτος αὐτοῦ Ῥοδανὸς ἥρπασεν οὐσίαν ἀπό τινος χήρας γυναικός… | IV, 11. …Սորա (Մեծն Ներսէս և այլ իշխանք) չոգան դեսպանութեամբ ի սէր միաբանութեան առ կայսրն Վաղէս։ Իսկ թագաւորն Վաղէս արգել աքսորեաց զՄեծ քահանայապետն Ներսէս, և փոխա-նակ սորա արձակեաց զեղբօրորդի[ս] զթագաւորին Արշակայ զԳնել և զՏիրիթ. և քանզի քաղումս եւ անթիւս վասն զմիտս հաճել թագաւորին Արշակայ… Եկին հասին դեսպանքն երթեալք ի կայսերէն առ… Արշակ. և մատուցանէին նմա զհրովարտակն կայսեր և ընդ նմին գիր տրտնջելոյ եւ ամբաստանութեան։ Զի գրեալ էր կայսրն զս. Ներսիսէ… թէ նա սպան զորդին իւր զմիամօր, վասն այսորիկ արգելաւ աստէն… Իսկ թագա-ւորն Արշակ իբրեւ լուաւ և ետես զայս ամենայն, անչնորհ առնէր զտայլսն եւ զբերելինս կարասոյն։ Ի ցասումն մեծա-պէս բարկութեամբ ընդ կայսերն նիւ-թեաց, եթէ զխա՛րդ իշխեաց արգելուլ զայնպիսի այր զմեծ եւ զպատուական, զգլուխ և զվարդապետ… Տայր հրաման Վասակայ իւրում զօրավարին զօր ժո-ղովել… եւ աւար առնուլ զկողմանս Գամրաց… մինչեւ ի քաղաքն յանկուրա-ցւոց. զվեց ամ զմիմեանց զհետ աւերէր զաշխարհ սահմանացն Յունաց…<br>IV, 13. Այլ իբրեւ սատակեցաւ կայսրն (Վաղէս), դարձան ամենայն հովիւքն ե-պիսկոպոսքն՝ որք աքսորեալք էին… Յայնժամ դարձաւ եւ ս. Կաթողիկոսն Ներսէս յանապատ ի կզզւոյ…<br>IV, 15. Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ… նաչապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կո-չէր… Ապա Գնելպատանեակն եղբօրոր-դին արքային էառ զնա ի կնութիւն իւր… Ապա առ համբաւ ցանկութեան անուանն տռփեալ լինէր մին եւս հօրեղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կո-չէր… Եւ յորժամ կարացն տեսլեանն՝ որում ցան-գայր, այնուհետեւ հնարս խնդրէր առն կնոջն կորստեան…<br>IV, 15. Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպա-նելոյն (Գնելոյ) զՓառանձեմ… Ապա իբրեւ կինն ի նմա ոչ յանգոյց զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յեր-կիրն Յունաց և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգէ, զի անուն էր նորա Ոլոմպի… |

[1]) Ср. у *Каллисѳена*, стр. 173: „…վասն որոյ պատանին ի մօտոյ առ յետս առնելով զբար-կութիւն՝ խնդութեամբ լուաւ գործել զանօրէնութիւնն…“

## М. Хоренскій.

III, 25. *Իբրև եղև խաղաղութիւն Շապհոյ ի Հիւսիսականաց ազգաց, և պարապ առեալ ի պատերազմացն, յայտնեաց զցասումն, զոր ունէր առ Արշակ, վասն ոչ նմա՝ այլ կայսեր հարկելոյ զայնքան ամս։ Սակս որոյ առաքէ առ նա Արշակ զՏիրիթ և զնորուն սիրեցեալն Վարդան արժանի պատարագօք, խնդրել զհաշտութիւն... Եւ իբր բարկացեալ Տիրիթայ, ընկենու զնա ի պատուոյն, որպէս զի թէ ի նորա հրապուրանացն եղև այն՝ յաղագս ատելութեանն զոր ունէր առ Յոյնս։ Եւ առաւել ևս գրգռէր զարքայ Վասակ զհնակիր նորա, նախանձ պահելով ընդ եղբօրն վասն աղջկան միոյ հարճի։ Վասն որոյ նախատեաց զնոսա արքայ ամօթալի բանիւք ևս կսծեցուցանողօք։ Որում ոչ կարացեալ այնպիսի վատթարութեան և պարսաւանաց տանել, դէմ եդեալ գնացին առ Շապուհ հատուած։ Ընդ որ առաւել ևս զայրացեալ Արշակ, հրամայէ նոյն Վասակայ զհետ նոցա կրթել բազմաձեռն գնդաւ, զի ուր և հասցէ՝ սպանցէ զնոսա. զոր ոչ հեղգացաւ կատարել Վասակ, թէպէտ և եղբայր էր նորա Վարդան։ Եւ խնդրեցաւ անպարտ արիւնն Գնէլայ յամբարշտէն Տիրիթայ ըստ անիծիցն Ներսիսի, և ի Վարդանայ՝ ի հարազատ եղբօրէ իւրմէ մեռանել։*

## Фавстъ Византійскій.

IV, 25. *Ապա զօրաժողով լինէր Արշակ արքայ Հայոց և կռուէր առ ինքն զօրս բազումս... Ապա անդր Վասակ զգունդն Հայոց և զհոնսն հանդերձ Ալանօքն կոչել յօգնականութիւն, և հասանէր դիմէր յօգնականութիւն թագաւորութեանն Հայոց ի վերայ Պարսից...*

IV, 18. *Իսկ Վարդան, Մամիկոնեան տոհմին տանուտէրն, գայր հասանէր հրեշտակութեամբ յարքայէն Պարսից առ արքայն Հայոց Արշակ. և մատուցանէր զհրովարտակն առաջի նորա։ Եւ պատմէր նմա ի նմանէ բանս խաղաղութեան և զհաշտութեան և զերդմանցն հաստատութիւն... Իսկ Արշակ թագաւորն սիրով ունէր և սիրով լսէր պատգամին և հաւանէր զասացելոցն։ Եւ խաղաղութեամբ արձակէր զմեծ նահապետն (զՎարդան)... Ապա յետ այսորիկ եկն Վասակն և գրգռէր զթագաւորն ընդ իւրում եղբօրն երիցու, ասելով՝ թէ Վարդան է, որ մատնէ զքեզ թագաւորին Պարսից և կամի կորուսանել զքեզ, եթէ ոչ աճապարեսցես վաղագոյն սպանցես զնա, դու կորնչիս և աշխարհս Հայոց։ Ապա և կին թագաւորին (Փառանձեմ) ևս գրգռէր զթագաւորն սովին բանիւք և զբանս զօրավարին Վասակայ հաւատարիմ առնէր նմա... զի նենգութեամբ... սա այս Վարդան կոչեաց զԳնելն զայր նորա, յորժամ սպանանէր զնա թագաւորն Արշակ... Ապա երթեալ (Վասակայ) գտանէին զնա (զՎարդան) յիւրում դաստակերտին ի Տայս... (և) անդէն ի կողի սպանանէին զնա։*



### h) Пораженіе Шапуха въ Тигранакертѣ. i) Взятіе Тигранакерта и совершенное его разрушеніе.

## М. Хоренскій. III, 26, 28.

III, 26. *Շապուհ գայ հասանէ ի Տիգրանակերտ [1] մեր քաղաք. եւ ընդդէմ նորա արք քաղաքին հանդերձ զաւրաւոր գնդաւ. քանզի Անտիոք նահապետ Սիւնեաց, որ էր աներ Արշակայ և վերակացու քաղաքին, հրամայեաց աղխել ընդդէմ Շապհոյ։ Եւ ոչ միայն զմուտն արգելլ, այլ և ոչ հրեշտակս արտաքսոյ առ նա և ոչ զնորայն ընկալաւ։ Եւ հզօր կռուոյ եղելոյ, զհաւաքումս ի Պարսիցն սպանին. և ի պատերազմին հարկանել գնդին Շապհոյ, փախեաւ անդրէն ի Մծբին. և հանգեալ առեալ և արձակեալ յաղթութիւնսն, խնդրէր առնուլ զՏիգրանակերտ. և ոչ թողացուցին յառաջախաղաց գունդք և լռեսք՝ պատաղել նմա զայնու, իբրու թէ Յունացն խանգարեսցի գործ։ Եւ Շապհոյ յառաջ անցեալ, գրէ առ նոսա թուղթ սպառնալից. «Մազդեզանց քաջ Շապուհ արքայից արքայ, Տիգրանակերտեաց՝ որք ոչ եք անուանելոց ի մէջ Արեաց և Անարեաց։ Ես կամիմ ի ձէնջ սկսեալ յամենայն առաջիկայ քաղաքս խաղաղութեամբ և ողջութեամբ զհանգիստ առնել. և եթէ դուք Տիգրանակերտեայք, որ առաջին էք, ոչ հաստատութեամբ ասէք, այլ ի մտէ ստերութեամբ, ընդդէմ կայք ինձ, ի յէնջ առցին և այլք կրթին առնել։ Այլ ի դարձին մերում, բարկութեամբ այնպէս վանեցից զձեզ, զի կրկին եղիջիք օրինակ խրատեալ տառապելոցն։»*

III, 28. *Իսկ Շապուհ եկեալ ի Տիգրանակերտ, դարձեալ աղխեցին ընդդիմանալ. և եկեալ ի պարիսպն աղաղակէին. Գնա՛ ի մէնջ, Շապուհ, զի մի՛ չարիս յերկրորդումս ընդ քեզ առաւել ևս քան զառաջինն անցուցանիցեմք պատերազմաւ։ Եւ նա պատասխանեաց. Ո՜վ թափօղ ի Հայոց, որք զանձինս արգելեալ փակեցէք ընդ Տիգրանակերտի պարսպովքդ, և արդարև յոյժ արժանի սպանանելոյ. զի թաղ արդեօք է յորժամ թշուառ և յապաւ տեղւոջ հասանել, և խառնաց գործ է արգելեալ փակել զին-*

## Псевдо-Каллисѳенъ.

стр. 47—48. *...Եւ անդուստ (յԱսորւոց) զօրաժողով արարեալ հզօր՝ գայ հասանէ ի Տիւրոս։ Կայ ընդդէմ նորա Տիւրացիքն ոչ տուեալ անցանել ընդ քաղաք իւրեանց ըստ հին հրամանաց պատասխանւոյն յաստուծոյ ուրեմն որ տուաւ նոցա... Եւ հզօր կռուոյ եղելոյ զհաւաքումս սպանին ի Մակեդոնացւոցն. և ի պատերազմին հարկանէ զօրն Աղեքսանդրու, և փախեաւ թագաւորն անդրէն ի Գազա, և հանգեալ առեալ և արձակեալ զիւր զօրսն յաղթութիւնսն խնդրէր առնուլ զՏիւր և աւար հարկանել... Եւ առաքեաց դեսպանս հանդերձ թղթովք որ ունէր սպառնալից այսպիսի բանիւք։ Թագաւոր Աղեքսանդրոս Մակեդոնացւոց... Տիւրացւոց որք ոչ եք՝ ասէ։ Ես սկիզբն արարեալ յԱսորւոց յազգն կոյս հանդերձ խաղաղութեամբ և ողջութեամբ կամիմ զհանգիստ առնել։ Եւ եթէ դուք Տիւրացիքդ որ քաջ առաջին էք, ոչ քաղաքավարութեամբ ասեմ, այլ ի մոյ ստերութեամբ ընդդէմ կայք, ի յէնջ առցին և այլք զօրութեան որչափ կարեն Մակեդոնացիք՝ առ ձեզ կրեալ ընդվզեալ ամբարտաւանութեանդ։ Բայց է ձեր և տուեալն յաստուծոյ հրաման անսխալ, քանզի անցից ընդ քաղաքս ձեր. ողջ լերուք բարի խորհրդով, եթէ ոչ՝ ապականեցարուք թշուառանօք։*

стр. 53. *[Թուղթ Աղեքսանդրի առ Դարեհ]... քանզի ոչ աստուածոցն անուանք ի մարդիկ հասեալ մեծ ինչ զօրութիւն նոցա շնորհեսցեն կամ իմաստութիւն, այլ առաւել խրատեալ տառապելոցն...*

стр. 64—65. *Աղեքսանդրոս առեալ զզօրսն և ճանապարհաւ անցեալ գնաց ի Թեբայիս, և խնդրեաց ի նոցանէ զինուորս քաջս արս չորս հազար և զհարկսն։ Եւ Թեբայեցիքն աղխեցին զդրունսն և ոչ հրեշտակ անգամ արտաքսին առ նա, այլ դէմ յանդիման ճակատեալք զինեցան ընդդէմ Աղեքսանդրի։ Եւ եկեալ ի վերայ պարսպին զինուորք հինգ հարիւր ձայնեցին առ Աղեքսանդր և ասեն, եթէ կամ պա-*

[1] Ср. у *Фавста* (IV, 24): „...Եւ առին (Պարսիկք) աւերեցին զմեծ քաղաքն Տիգրանակերտ...“

| М. Хоренскій. | Малала. | М. Сократъ. | Жит.св.Нерсеса | Ист. император. |
|---|---|---|---|---|
| [вар. въ Четьи-Мин. Սուրբն Ներսէս ի Հայոց մեծաց], Գրիգորիոս Նիւսացի, Գելասիոս [вар. Բասիլիոս] Կեսարու, Գրիգորիոս Նազիանզու, Ամփիլոքիոս [1] Իկոնիոյ եւ այլ եպիսկոպոսք, միանգամայն հարիւր և յիսուն հարք, որք նզովեալ մերժեցին զՄակեդոն եւ զամենայն հոգեմարտսն։ | Ἡλιουπόλεως [τὸ τοῦ Βαλανίου, *Chron. Pasch.*, p.303 D.] τὸ μέγα καὶ περιβόητον τὸ λεγόμενον Τρίλιθον. | մեծարանօք մինչեւ հանապազ օրհնեցաւ ի ժողովն։ Եւ ժողովեցան հարիւր և յիսուն եպիսկոպոսք։ | զածին՝ ըստ հոգեմարտին Մակեդոնի, որ ոչ Տէր խոստովանէր զՀոգին սուրբ և ոչ երկրպագելի և ոչ փառաւորեալ ընդ Հօր, և ոչ էութենէն անճառ, այլ օտար ի բնութենէ Աստուծոյ Հօր, և օտարական և ծառայ և պաշտօնեայ և արարած էին։ | նադրեալ ի ժողովյն... Եւ նզովեցին զՄակեդոն յետ մահուն իւրոյ... |

[1]) Ср. у *Б. Сократа*, стр. 420: „...և Գրիգոր Նիւսացի Բասիլի (sic!) եղբայր Կապադովկեցւոց և այս քաղաք, եւ Յոթիկոս որ ի Հայս Մելիտինեայ զհայրապետութիւն ժառանգեցին։ Իսկ Ասիականին հասանէին Ամփիլոքիոս որ է Իկոնիոն...“



ч) Аршакъ невольно отправляется къ Шапуху и не возвращается болѣе. г) Бѣдствія, постигшія Арменію отъ Шапуха и смерть Аршака.

### М. Хоренскій. III, 34, 35.

III, 34. Դարձեալ պարապ առեալ Շապհոյ ի պատերազմացն, առաքէ ի վերայ Արշակայ զԱլանայոզան ոմն պահլաւիկ հզօր գնդաւ, որ էր ազգակից Արշակայ։ Յորմէ խոյս տուեալ Արշակայ, թափուր ի բազմաց մնայր նախարարաց. որոց չեւն տուեալ նախարարքն յԱլանայոզանն, կամաւ երթային առ Շապուհ, տաղտկացեալ յխուրեանց արքայէն Արշակայ. եւ մեծարեալք ի նմանէ, դառնային յաշխարհս մեր... Ապա աղաչեալ յոյժ նեղեալ Արշակ, յղէ խնդրել երթալ առ Շապուհ, եւ չէ պահեալ լինի ի նմանէ. և բռնութեամբ հարկաւորեալ գրէ, զի Փառանձեմ կին նորա եկեսցէ ի դուռն։ Եւ Շապուհ հրամայէ ամենայն մեծամեծացն, զի ընդ Փառանձեմայ եկեսցեն։

III, 35. Իբրև գիտացին նախարարք Հայոց, այնք՝ որ նախ քան զԱրշակ ձեռն տուեալ էին ի Շապուհ, թէև զնոցա կանայսն խնդրէ, որպէս զայնոցիկ՝ որք առ Արշակայ միամիտք էին, և զայն եւս տեսին՝ եթէ գնաց Ալանայոզան, և գունդ փոքր է՝ որ վասն այնր է եկեալ, միաբանեալ հալածեցին զնոսա. և իւրեանց առեալ զկանայս և զորդիս՝ փախեան յաշխարհն Յունաց։ Նա և ոչ դշխոյն Փառանձեմ գնաց ի կոչ առնն իւրոյ, այլ հանդերձ գանձիւք անկաւ յամուրն Արտագերից. Լուր առնելով առ որդին իւր Պապ, յուսայր ապրել ի ձեռաց Շապհոյ։ Ընդ որ զչարացեալ Շապուհ կապէ զայր Արշակայ երկաթեղէն շղթայիւք, և տայ տանել յերկիրն Խուժաստանի յԱնյուշն ամրոցն։ Եւ բազում զօրս գումարեալ ի ձեռն Մերուժանայ Արծրունւոյ եւ Վահանայ Մամիկոնեայ ուրացողաց զՔրիստոս, արձակէ յաշխարհս Հայոց. որք եկեալ նստան յԱրտագերից։ Եւ թէպէտ շուրջ պատեալ Արտագերից։ Եւ թէ-շուրջ զբերդաւն Արտագերիցն առնել նմա պէտ ոչ ինչ կարէին առնել նմա վասն անմատչելի ամրութեանն,

### Фавстъ Византійскій.

IV, 38. Իսկ Ալանայոզանն, որ Պարթեւ էր ի տոհմէն Արշակունեաց, որ նա խռովեալ առաջի Շապհոյ թագաւորին Պարսից, եւ գնայր դայր հասանէր ի սահմանս Հայոց։ Ապա այս վաղագոյն ազգ լինէր թագաւորին Հայոց Արշակայ. սոյնպէս եւ սա զիւր զօրքն կալմէր ի ձեռն Վասակայ իւրոյ սպարապետին։ Եւ զամենայն նախարարսն Հայոց ընդ նմա գումարեալ, գայր հասանէր ընդ առաջ զօրացն Պարսից. հարկանէր կոտորէր զամենեսեան առ հասարակ եւ զմնացեալսն փախստեայս առնէին յերկիրն Պարսից...

IV, 50. Յաղագս քակելոյ և քայքայելոյ թագաւորութեանն Հայոց, թէ ո՛րպէս ապստամբեցին բազումք ի նախարարացն Հայոց, եւ չուեալ գնացին ի Շապուհ արքայն Պարսից... Ջերեսուն և չորս ամս եղեւ պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին Պարսից, եւ յետ այնորիկ ձանձրացան պարտեցան լքան աշխատեցան երկրքին կողմանքն։ Եւ սկսան սորսորել գնալ ի բանակէն Հայոց թագաւորին, թողին զիւրեանց արքայն Արշակ...

IV, 53. ...Յայնժամ խորհեցաւ, թէ կամաւ կամաւ և թէ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զդայեակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից... անդրէն ի նոյն գունդ փուշտիպանաց եդուն զԱրշակ արքայ ի պահեստ։

IV, 54. ...Ապա տայր հրաման Շապուհ... բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս եւ ի ձեռս նորա երկաթս, եւ խաղացուցանել զնա ի յԱնդմըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի...

IV, 55. Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն հինգ հարիւր բիւրով, զի եկեսցեն բրեսցեն քանդեսցեն զաշխարհն Հայոց... Ապա իբրև եւտես տիկին աշխարհին Հայոց կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ զզօրս թագաւորին Պարսից... դիմեաց եմուտ ի բերդն Արտագերից... Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն նստէին... Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսս երեքտասան եւ առնուլ զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին։ Աւերեցին աւարեցին զերկիրն ամենայն... Իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց

**М. Хоренскій.**

բայց բարկութիւնն Աստուծոյ էր ի վերայ Արշակայ. մարդիկ ամրոցին ոչ անսացին մնալ համբաւոյն Պապայ, այլ անձնատուրք եղեն ի կամաց և ոչ ի բռնութենէ: Զորս քերելով հանդերձ գանձիւքն և զկանանս փոխանակ խաղաղութեան է յԱտրպատան. և անդ ընդ աշտարակս հանելով՝ ստակեցին: Ի նմին ժամու եհաս հրաման Շապհոյ, զի քանդեսցեն աւերեսցեն զամրութիւն ամենայն քաղաքաց և զՀրեայսն խաղացուսցեն ի գերութիւն, եւ զայն Հրեայսն՝ որ նոյն հրէութեան օրինօքն կային ի Վանն Տոսպայ, զոր ածեալ էր Բարզափրանայ Ռշտունւոյ յաւուրս Տիգրանայ. զորս բնակեցոյց Շապուհ յԱսպահան: Գերեցին և զայն Հրեայսն՝ որք յԱրտաշատ և ի Վաղարշապատ, զորս ածեալ էր նոյն Տիգրանայ արքայի, որ յաւուրս սրբոյն Գրիգորի եւ Տրդատայ հաւատացեալ էին ի Քրիստոս. ընդ որս և զԶաւէն երէց Արտաշատու: Յայնժամ մատուցեալ առ Շապուհ Մերուժան և Վահան չարախօսէին զԶուիթայ երիցուէ Արտաշատու, եթէ յայն սակս եկն ընդ գերութիւնն, զի խրատեսցէ զնոսա պինդ ունել զօրէնս քրիստոնէութեան: Վասն որոյ Շապուհ հրամայեաց չարչարել զԶուիթայ, զի թողցէ զհաւատ քրիստոնէութեան. որում ոչ հաւանեալ, կատարեցաւ: Զայս ամենայն աղէտս թշուառութեանց լուեալ Արշակայ, սասուղարար արար ընդ անձին իւրում. որ թագաւորեաց ամս երեսուն:

**Фавстъ Византійскій.**

զխպեցաւ... Իսկ յերկիրն Հայոց սաէպ տարեբին գեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ՝ զի ժուժկալ լինիցի բերդին և մի ձեռս տացէ ի Պարսիկս... Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոյ՝ որ յԱստուծոյ հասին ի վերայ զաղթականին բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա... Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին երկու նաժշտօք... Իսկ զօրքն պարսից իբրև եսես՝ եթէ միայն մնացի, երայ զգուռն բերդին եւ թողայցյ զօրսն Պարսից մտանել ի բերդն... Ելանէին ի բերդն ի վեր զօրավարն Պարսից, քերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին... հանդերձ տիկնաւն խաղացուցին: Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ եւ առին զնա... Եւ խաղացուցին ի յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ Հրէայս, զոր ածեալ էր քերէ Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացւոց... Առնուին և զՎաղարշապատ քաղաք... Առնուին և զմեծ քաղաքն Երուանդաշատ ...Առին և զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոսպայ... եւ խաղացուցանէին անտի երկու հազար Հայ և ութ և տասն հազար երդս Հրէայս... և ինքեանք զտիկինն փառանձեմ առեալ հանդերձ գանձիւքն և բազմութեամբ գերեօքն յերկիրն Պարսից խաղացուցանէին... Եւ հրամայեաց (Շապուհ) ի հրապարակին իմն առնել հրապարս մերկոյ, որով հրամայեաց զկինն արկանել եւ արձակել տիկնոջն Փառանձեմայ ի խառնակութիւն պղծութեան անասնական պղծութեանն: Այսպէս սատակեցին զտիկինն փառանձեմ: Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱտրպատան, որ յերկրին Խուժաստանի:

IV, 23. ...Յանկարծօրէն այրացուեր զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մերուժանաւ, զորս տային ի կոխումն փղաց և զկանայս ընդ ցից ատեց հանէին...

IV, 56. Ապա իբրև չոգան տարան յերկիրն Պարսից զամենայն գերութիւն Հայոց, և զԶաւէն երէց Արտաշատ քաղաքի ունէին կապանօք առաջի թագաւորին Պարսից Շապհոյ... Եւ ելին ոտնիկանք արքունի հարցանել եթէ իցէ՝ յանձն առցէ պաշտել զօրէնս մոգութեանն, ոչ մեռցի: Իսկ նա ոչ առնոյր յանձն, այլ կամեցեալ մեռանել խնդութեամբ վասն Աստուծոյ...

V, 7. ...Վա՜յ ինձ Արշակայ (ասէ Արշակ ցԴրաստամատ). այսպէս և այս և յայսմ չափու և այս անցք անցին ընդ իս: Եւ զայս ասացեալ զդանակն զոր ունէր ի ձեռին... եհար ի սրտի իւրում, և անդէն... մեռաւ...

---

# ГЛАВА XIV.

## О Папѣ и Вараздатѣ.

а) Бѣдствія, постигшія насъ отъ Меружана. Воцареніе Папа въ Арменіи.

**М. Хоренскій. III, 36.**

Յետ մահուանն Արշակայ գումարեաց Շապուհ զօր բազում ի ձեռն Մերուժանայ, եւ արձակեաց ի Հայս, ի նա հաւատալով զաշխարհս: Երդուեալ նմա կին տալ զՈրմիզդուխտ, և հրովարտակս բազում շինից և դաստակերտաց ի Պարսից աշխարհին, և խոստացաւ տալ նմա զՀայոց թագաւորութիւնն, միայն թէ զնախարարսն նուաճելով ի դէն մազդեզանց զաշխարհս դարձուցէ: Որոյ յանձն առեալ եւ եկեալ, եւ զբազումս ի նախարարաց կանանց կալեալ՝ ի բերդս տայր պահել, զդարձ արանցն յուսալով: Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել: Զեպիսկոպոսս եւ զքահանայս կահարկաց պատճառաց պեալ՝ յերկիրն Պարսից տայր տանել: Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, եւ հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ պարսիկ. եւ մի որ իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենեւին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն եւ հաղորդութիւն սիրոյ. այլ ճշմարտին՝ խափանել զքրիստոնէութեան ուսումն: Զի

**Фавстъ Византійскій.**

IV, 50. ...Եւ Վահան եղբայր Վասակայ սպարապետին, ի Մամիկոնեան տոհմէն, անկաւ ի բանս հրապուրանաց նա և Մերուժան Արծրունւոյ քեռորդւոյ իւրոյ: Եւ սա ապստամբեաց յԱրշակայ արքայէն Հայոց և չոգաւ եկաց առաջի թագաւորին Պարսից Շապհոյ: Եւ հաճեաց զմիտս նորա, եւ նախ ուրացաւ նա ի կենաց իւրոց՝ զոր ի Քրիստոսն ունէր և յանձն առ... ուրանալ զօրէնս քրիստոնէութեան... Եւ եղև նա այնուհետև սիրելի Շապհոյ արքային, և ետ նմա զքոյր իւր զՈրմիզդուխտ կին. և շնորհեաց նմա բարձ և զպատիւ՝ որ նոյուն լեալ էր նախնեաց եւ մեծարիմ փեսայ արար զնա իւր թագաւորն... և խոստացաւ նմա կեանս մեծամեծս առնել...

IV, 58. ...Եւ եթող յաշխարհին զՋիկն եւ զԿարէնն զնոցա իշխանս զօրօք բազմօք. և զիշխանութիւն միաւորդացն ետ ի ձեռս Վահանայ և Մերուժանայ և ինքն գնաց յԱտրպատական:

IV, 59. Այնուհետեւ Վահանն Մամիկոնեան եւ Մերուժանն Արծրունի, սորա երկոքեան արք պիղծք անօրէնք էին, ապստամբեալք էին յուխտէ աստուածպաշտութեանն և զանաստուածն մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս զտեղիս աղօթից քրիստոնէից... Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի ձեռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն եւ ի պաշտօն դառնալ մազդեզանցն: Եւ յետ այսորիկ տային հրաման Վահանն եւ Մերուժանն, զամենայն կանայս փախուցելոցն նախարարացն... ի բերդսն զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել յօրէնս մազդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն սատակեսցեն զամենեսեան չարաչար... Իսկ Վահանայ էր քոյրաթիւ ի Մամիկո-

## М. Хоренскій.

յայնժամ գիր գրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականաւն վարէին եկեղեցւոյ կարգք։ Արդ իբրև լուաւ մեծն Ներսէս զչարիսն ամենայն, որ հասին ի վերայ Հայոց, և զմահն Արշակայ, աղաչեաց զկայսրն Թէոդոս, խնդրելով ի նմանէ օգնականութիւն։ Եւ թագաւորեցուցանէ զՊապ որդի Արշակայ. և ընդ նմա գումարեաց զօր բազում ի ձեռն քաջ զօրավարին Տերենտիանոսի։ Եւ մեծին Ներսիսի առեալ զամենայն նախարարսն, որք կամակից էին ընդ տէրութիւնն Պապայ և որք ոչ, և զապրեալ Կամսարականն Սպանդարատ, սոցա միաբանութեամբ ածէ զՊապ յաշխարհս Հայոց։ Եւ եկեալ գտանեն զամբարիշտն Մերուժան պետացեալ կալեալ զերկիրս Հայոց. և հալածական արարեալ՝ յինքեանս թագաւորեալ զաշխարհս։ Բայց Մերուժան հրամայէ պայականն՝ զբերդից պարսպացն խնել զկանայս նախարարացն, մինչև մեռանին. և թողուլ նոյնպէս ի խաչափայտին շքեղակունսն, զի լուծեալ անկցին դէշ կերակուր լինել թռչնոց։

## Фавстъ Византійскій.

նեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի... Իսկ անօրէնն Վահան և Մերուժան հրաման տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն, եթէ ոչ առցէ յանձն զօրէնս մազդեզանցն, տայր հրաման կախել զբարձր աշտարակէն և սպանանել... և այնպէս մեռաւ ի կախաղանին... մինչև կողոպտեցաւ ամենայն մարմինք մեռոյն.

V, 1. Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն... և չոգաւ հանդերձ նորօք առ թագաւորն Յունաց։ Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց և զամենայն անցս տառապանաց, որ անցեալ էր ընդ նոսա, եւ խնդրեաց ի կայսերէն զՊապ զորդին Արշակայ ի վերայ Հայոց աշխարհին։ Մեծ թագաւորն Յունաց թագաւորեցոյց զՊապ զորդին Արշակայ ի վերայ աշխարհին Հայոց... և մեծապէս թիկունք լինէր արքայն Յունաց և զՏերենտ անուն զօրավարն և զԱդէ ոմն կոմս արձակէին ընդ արքային Պապայ յերկիրն Հայոց վեց հազար բիւրու... Իբրև գայր առաջապահն հասանէր ի միջնաշխարհն Հայոց, սպանանէր Մուշեղ զզօրագլուխ[ս]ն Պարսից զԿարէնն և զԶիկն եւ զամենայն զօրսն արկանէր ի սուր սուսերի իւրոյ... Եւ եկն եմուտ թագաւորն Պապ յերկիրն Հայոց... եւ թագեալ յինքն զամուր ամուր բերդիցն... Եւ զօրսն Յունաց... բաշխէին ընդ ամենայն գաւառսն. բայց միայն Մերուժանն չարագործ փախչէր միաձի...



b) Большое сраженіе, данное на Дзиравскомъ полѣ. Околѣваетъ нечестивый Меружанъ

## М. Хоренскій. III, 37.

Այդ արարեալ Մերուժանայ յերկիրն Խորասանայ առ Շապուհ զամենայն օգնականութիւն Թէոդոսի՝ զոր արար առ Պապ, ելանէ հրաման ի Շապհոյ՝ ամենայն զօրաց Պարսից երթալ ընդ Մերուժանայ ի Հայս ի պատերազմ։ Նոյնպէս ազդեն ինքնակալին Թէոդոսի Պապ և Տերէնդ զՇապհոյ, թէ ամենայն զօրացն հրամայեաց ելանել ի վերայ մեր, բայց ի դրանկացն։ Ապա Աւգոստոսն Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոր թողուլ՝ զոր ոչ առցէ. այլ և զհետևակս պահապանս քաղաքացն, որք զմտաքսեայսն ունէին զվիշապս։ Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին, որ կոչի Ձիրաւ, եւ մատեան ճակատ առ ճակատ։ Եւ տանուտէրն քաջ նախարարացն Հայոց ինքնակամ նահատակեալք, մտին ի մէջ ճականացն առաջնորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ Ասպետի, որդւոյ Բագարատայ, որ յազգէն Բագրատունեաց։ Ելին և ի զօրացն Պարսից համատիք նոցա, եւ խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիր ընդ ցիր լինէր։ Եւ ի դառնալ տանուտերանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն զհետ նոցա, օրինակ իմն որպէս փոթորիկ յանտառէ տերևաթափ, այնպէս եբաց յերիվարացն առեալ նիզակօք, դի ցուրտ յերկիր ընկենուին, ոչ կարելով նոցա յիւրեանց ճակատն մտանել։ Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին, նոքա ի վահանաւորացն Յունաց իբր յամուր տեղւոյ մտանէին՝ առ ոչինչ համարելով։ Քանզի այնպէս արար Գորգոսելոյ նոս իշխան հետևակ զօրուն, իբր պարսպաւ պատեաց վահանօք զճակատն Պապայ։ Քանզի զօրքն Յունաց վառեալ էին ի զէնս ոսկւոյ և արծաթոյ, եւ երիվարք նոցա նոյնպէս զարդու։ Եւ էր տեսանել իբրև զլեառն ինչ, յորոյ յոլովք ի ջրղեայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան վիմաց բերէին երևոյթս. եւ ի վերայ նոցա անխալամ դէսք նշանք արձակեալք իբր զաղարթ ինչ հովանաւոր ծառոց։ Բայց զմեծամեծացն տա-

## Фавстъ.

V, 2. Ապա Մուշեղ որդի Վասակայ, սպարապետն Հայոց մեծաց, ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս ազատս ազգայինս քառասուն հազար... Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպայականի. եւ Մերուժանն առաջնորդ գնդին բանակի նորա...

V, 43. Եւ զտանուտէրն Արտաւազդ, որդի Վաչէի, ընդ կանանին տայր հրաման երթալ Մանուէլ. իսկ նա ոչ հաւանէր, չառնոյր յանձն... Իսկ նա առ նորա ականէ գնաց ընդ նոսա. բայց ապա յետոյ վառեալ կազմեալ պատրաստեալ զկնի պատերազմին...

V, 5. ...Եւ լեգէոն զօրուն բազմութիւնն, այսինքն Յունաց զօրացն սպարակիրն, սոյնպէս եւ Հայոց սպարակիրն զթիկունս ունէր զօրացն Հայոց, վահանաւոր փակեալ զինքեամբք՝ իբրև պարիսպ ինչ ի թիկանց լինիցի։ Յորժամ տարածանէին ինչ զօրքն Պարսից զզօրսն Յունաց եւ կամ զգունդ նիզակաւորացն Հայոց, ի լեգէոն վահանաւորացն Հայոց կամ ի սպարակիրն Հայոց իբրև իբերդ մտեալ հանգչէին... և նոցա զվահանափակն բացեալ, զնոսա իբրև ի քաղաքորմ պարսպաւոր ամրացեալ ընդունէին...

V, 4. ...Իսկ թագաւորն Պապ և եպիսկոպոսապետն Ներսէս կային ի վերայ Նպատ լերինն, և ս. Ներսէս զբազուկսն հանապազատարածսն համբարձեալ յերկինս

## М. Сократъ.

с. 479—483. ...Եւ հասեալ (Թէոդոս կայսեր) ի Գաղիայ յոլովք ի բարբարոսացն գան առ Թէոդոս մարտակից լինել ընդ նմա ընդդէմ բռնակալին (Եւգինեայ)... և խմբեցաւ պատերազմ առ գետովն որ կոչի Փռիգդոն... Իսկ բարեպաշտըն Թէոդոս ետեսպարտեալ և լքեալ զայլազգիսն, որ մարտակիցք նորա էին, ի մեծի հանդիսի լեալ ընդէց լինին [я читаю: զինքն, какъ у Б. Сократа] ի գետին եւ մեծաւ հառաչանօք և արտասուօք յաղթանակ[illegible] կոչէր զԱստուած... անդէն յերեւեալ եղեն ի վերայ զօրութենէն [illegible] թագաւորին։ Զի Բակուրիոս զօրավար թագաւորին... պատառէր զռազմ մարտին և [illegible] ի փախուստ զմարտուցեալսն. եւ բազում մահս և վիրաւորս առնէր ի [illegible]։ Բայց լինէր և այլ զար-

## М. Хоренскій.

Նախալին՝ ապստամբեալ է թագաւորեալն ըստ Կոստանդեան հաւատոյ: Զայս լսելով Պապայ, վարկուցեալ յերկարել պսպխուցս խռովութեան, արհամարհեալ նշկահեաց. և գլըրգռեալ զնա կորստեանն իւրոյ, հալածեաց զՏերենտիանոս հանդերձ զօրուն, եւ սկսաւ պատրաստել ի պատերազմ: Եւ հասեալ հրաման ի մեծէն Թէոդոսէ, ընդ կրունկն դարձաւ բաջն Տէրենտիանոս: Եւ ըստ իւրում պատահման բախտին յանկարծակի անկեալ ի բանակն, զոմանս կոտորեալ սրով և զոմանս փախստեայս արարեալ. ուր սաստկապէս նահատակեալ բաջութեամբ ընդդիմամարտ լինէր Գնէլ նահապետ Անձևացեաց եւ սպարապետ Պապայ արևելեան զօրուն. զոր յաղթողին Տերենտիանոսի իւրովի արարեալ ստամբա կխակտուր զգլուխ նորա, ըմբռնեաց զԹագաւորն Պապ: Եւ Պապայ յաղերս աղաչանաց անկեալ, զի մի մեռցի, այլ յանդիման լինել արքայի. և բաջին Տէրենտիանոսի գթացեալ՝ շնորհեաց նմա զմաղթանսն: Եւ երկաթեղէն կապանօք երթեալ առաջի մեծին Թէոդոսի, ըստ իւրում անզգամութեանն ախտով վըճարի, թագաւորեալ ամս եւթն:

## Фавстъ Византійскій.

տանել ի Կեսարիա ի ձեռնադրութիւն...

v, 32. Եւ շրջեաց զմիտս իւր թագաւորն Պապ եւ խոտորեաց զսիրտ իւր ի թագաւորէն Յունաց եւ կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից... Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. եւ անուն իշխանայն՝ միումն Տերենտ, միւսումն Ադէ: Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր սպանանել զթագաւորն Հայոց զՊապ... Ապա զօրավարն Յունաց հաց մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ կոչեցին զմեծ թագաւորն հայոց զՊապ... Իբրև ընդ գինիս մտին... եւ լեգէոն սակրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոսկիկմբէ վահանօքն՝ յանկարծօրէն կից ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին թագաւորին Պապայ. մի կշիռ զուլն հարկանէր ամբարտն, եւ միւս եւս սակրաւորն գաջ թաթ ձեռինն՝ որ կայր ի վերայ դաստապանի նրանին՝ հարկանէր, կորէր և ի բաց ընդենոյր... Ընդ շփոթելոյ տաճարին խռովութեան՝ Գնէլ տէր գաւառին Անձևացեաց յոտն կացեալ յիւրմէ բազմականէն, հարեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի լեգէոնաց անտի սպանանէր յայնցանէ, որ հարին զթագաւորն: Ապա Տերենտ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ ածէր, տարակաց ի գլխոյն Գնելոյ զսկաւառակն գլխոյն ի վերայ աչացն ի բաց ընդենոյր...

## Малала.

μετ' αὐτοῦ στρατιωτικοῦ πλήθους διὰ μιτᾶτα ταράξαντος τὴν πόλιν, ἐστασίασαν καὶ ὕβρισαν τὸν βασιλεὰ οἱ Θεσσαλονικεῖς. Καὶ θεωρήσας ἱππικὸν ἐν τῇ αὐτῇ πόλει γέμοντος τοῦ Ἱππικοῦ ἐκέλευσε τοξευθῆναι· καὶ ἀπώλετο πλῆθος χιλιάδων δεκαπέντε.



### е) Царствованіе Вараздата. Заключеніе его въ оковы.

## М. Хоренскій. III, 40.

Բայց Աւգոստոս բարեպաշտն Թէոդոս, որ եւ մեծ, ի քսաներորդ ամին իւրում թագաւորեցոյց Հայոց փոխանակ Պապայ զՎարազդատ ոմն ի նոյն տոհմէ Արշակունեաց: Այս Վարազդատ էր տիոք տանուէ, սրտեայ, անձնեայ, ուժեղ, չէ ամենայն գործովք արութեան, և յոյժ կորովի նետաձգութեամբ: Որ ի ժամանակի փախստենէն Շապհոյ գնացեալ ի դուռն կայսեր նահատակեցաւ, նախ ի Պիսայ զբռնամարտիկն յաղթելով, դարձեալ յԱրեգ քաղաքի Ելլադացւոց յօր հասարակի կոտորեաց առեւծս, յորում փառս Ողոմպիացւոց խաղուն հանդերձ յըմբշամարտկացն երեւի և յարգի... Որ եկեալ թագաւորութեամբ յաշխարհս մեր ի յիսուն և հինգ ամին Շապհոյ, առաջին մարտին պատահեաց աւազակաց ոմանց Ասորւոց ի դժուարս Դարանաղւոյ, եւ փախստեայս արարեալ՝ հետամուտ լինէր: Իսկ նոցա անցեալ ընդ նեղուցս Եփրատայ կամրջին, ընկեցին զփայտն զկնի իւրեանց. այլ նորա հասեալ, վաղեաց զԵփրատաւ առաւել քան զՂախոնացին Քիոնէս[1] վազեալ տասն և երկոտասան կանգնոյ չափ: Եւ անդ էր տեսանել նոր զոմն Աքիլլէս ընդ Սկամանդրոս գետ վազելով... Յաղագս որոյ արքեալ ի մանկութեանն արութիւնս, առ այսօրինակ և թագաւորութեանն, ոչ հնազանդէր խրատու վերակացութեան զօրացն Յունաց: Վասն որոյ առաքէ հրեշտակս առ Շապուհ, զի տացէ ի դստերաց իւրոց նմա կնութեան, և սա դարձուսցէ առ նա զաշխարհս Հայոց... Իսկ կայսրն Թէոդոս հրամայեաց զնա ունել, եթէ ոչ իւրովք կամօք երթիցէ ի կոչ ինքնակալին: Վասն որոյ հարկեալ երթայ կամօք իւրովք, յուսացեալ իսուտ հանել զԱւգոստոսն: Իսկ կայսրն և ոչ տեսութեան արժանի արար, այլ երկաթի կապանօք ետ տանել ի Թուղիս կղզի Ովկիանու, որ թագաւորեաց ամս չորս...

## Фавстъ Византійскій.

v, 34. Եւ եղև յետ մահուն Պապայ... Թագաւորեցոյց թագաւորն Յունաց զՎարազդատ ոմն ի նոյն տոհմէն Արշակունի ի վերայ աշխարհին Հայոց: Եկն բազում շքով եմուտ յերկիրն Հայոց եւ թագաւորեաց յերկրին Հայոց: Եւ էր նա տանուէ յաւուրց, չէ արութեամբ, կորովի ձեռօք, քաջ սրտիւ, և ի միտս թեթև, մանգաբարոյ, ողջահանճար մանկամիտ... Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց...

v, 35. ...Այլ Բատ, որ նահապետն էր ազգին Սահառունեաց, դայեակ սնուցիչ թագաւորին Վարազդատայ, կամեցաւ նա զգործ զօրավարութեան սպարապետութեանն Մուշեղայ յինքըն յափշտակել ի նմանէ: Վասն այսօրիկ սկսաւ քսիս մատուցանել զնմանէն առ թագաւորին Վարազդատայ... Եւ եղև յաւուր միոջ հրաման ետ Վարազդատ... ընթրիս մեծ գործել... և կոչել... զմեծամեծս և զզօրավարն Մուշեղ... Եւ անդէն Բատ Սահառունի... զնրանն՝ զոր յիւրում ազդերն ունէր՝ հանեալ անցոյց ընդ փողս զօրավարին Մուշեղի...

v, 37. ...Թագաւորն Վարազդատ եւ սպարապետն Մանուէլ զնիզակս առեալ, միմեանց յարձակեալ ախոյեանք ելանէին... Եւ արքայն Վարազդատ ի փախուստ դառնայր յերեսաց զօրավարին Մանուէլի...

*Ibid.* Եւ զթագաւորն Վարազդատ հալածեցին ի յերկրէն ի սահմանացն Հայոց, չոգաւ գնաց ի յերկիրն Յունաց. անդ եկաց որչափ եւ եկեաց, եւ անդէն մեռաւ:

## Каллисѳенъ.

с. 23—24. Եւ Աղեքսանդրոս... ասէ. հա՛յր, աղաչեմ ըզքեզ հրամայեա ինձ նաւել ի Պիսաս: Ասէ Փիլիպպոս. կամի՞ս տեսանել զհանդէս ողոմպիացւոց... զի ոչ կռիւս ոչ բռնամարտիկս հանդէս եւ ոչ այլ ինչ կրթութիւն վարժից գիտես: Աղեքսանդրոս ասէ. կառավարել կամիմ, հայր...

с. 60. Եւ տեսեալ զՍկամանդրոս գետ ընդ որ վազեաց Աքիլլէս, զի եւ հինգ կանգնոյ ոչ էր լայնութիւն..

---

1) Ср. у *Евсевія* (Chronicon, I, 135): Յունաց Ողոմպիադք. ԻԹ. Քիոնիս Ղակոնացի ի ստադին, որոյ մի վազ էր ԻԲ կանգուն:

# ГЛАВА XV.

## Объ Аршакѣ III и раздѣленіи Арменіи. О Хосровѣ III и Врамшапухѣ.

a) Царствованіе Аршака и Ваҳаршака.

**М. Хоренскій. III, 41.**

*Ապա փոխանակ Վաղարշակայ թագաւորեցոյց Հայոց Թէոդոս մեծ զերկուս որդիսն Պապայ՝ զԱրշակ և զՎաղարշակ. այսպիսի ինչ խորհեցեալ՝ որպէս թէ ոչ միաբանեսցին երկորին յապստամբութիւն։ Եւ անդէն պսակելով զմայր մանկանցն, արձակէ զնոսա հանդերձ վերակացուօք յիւրեանց, արամբք հաւատարմօք և զօրու։ Որ եկին կալան զաշխարհս, և տիրեցին սմա արիաբար մարտիւք ընդ Պարսս։ Եւ առին իւրեանց կանայս, Արշակ զդուստր Բաբկան Սիւնեաց նահապետի, և Վաղարշակ զդուստր Սահակայ ասպետի, որ ի նմին ամի վախճանեցաւ։ Բայց յերկրորդ ամին Արշակայ եհաս յեպիսկոպոսապետութիւնն Հայոց Ասպուրակէս ամս հինգ, ազգական Շահակայ և Զաւենայ։ Իսկ մեծն Թէոդոս ելեալ է պատերազմ ի Մեդիոլանոն* [вар. *Միգդոնոն*] *հիւանդացեալ մեռանի, թողեալ զթագաւորութիւնն որդւոց իւրոց...*

**Фавстъ Византійскій.**

v, 37. ...*Եւ սպարապետն զօրավարն Հայոց Մանուէլ նուաճեաց զաշխարհս, և զամենայն մեծամեծսն և զնախարարսն Հայոց առ ինքն ժողովէր... Եւ զկինն Պապայ արքայի զԶարմանդուխտ տիկին հանդերձ որդւովք Արշակունովք, առեալ զնոսա՝ ի տեղի թագաւորի կալեալ ի պատիւ շրջեցուցանէր...*

v, 44. *Ապա յետ այսր ամենայնի զօր արարեալ զօրավարն սպարապետն Մանուէլ, հանդերձ Արշակունի տիկնաւն եւ մանկամբքն երկոքումբք՝ Արշակաւն և Վաղարշակաւն հանդերձ ամենայն բանակաւն Հայոց... հասանէր ի գաւառն Կարնոյ, և ամենայն տանուտեարք ընդ նմա։ Եւ տայր սպարապետն Մանուէլ զդուստր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունւոյ և փեսայ իւր առնէր զնա։ Առնէր հարսանիս և եղբօր նորին Վաղարշակայ և տայր նմա զդուստր ասպետին Բագրատունւոյ, ի Սպեր գաւառէ, որ թագաւորձն* [я читаю: *թագաւորչն*] *թագակապքն լեալ էին ի բնմէ ազգին թագաւորութեան Արշակունեաց... և թագաւորեցոյց զմանուկն զԱրշակ երկրին Հայոց և զՎաղարշակ երկրորդ նմին...*

vi, 4. *Ապա յետ մահուն Շահակայ եպիսկոպոսի (որ եկաց գլուխ եպիսկոպոսաց փոխանակ Զաւենայ) եհաս գլուխ եպիսկոպոսաց Ասպուրակ ոմն ի գաւառէ Աղբիանոսի... և առաջնորդեաց գրանն Խոսրովու...*

**Малала.**

p. 348. Ὁ δὲ αὐτὸς Θεοδόσιος βασιλεὺς ποιήσας πρόκενσον ἀπιὼν ἐπὶ πόλεμον, ἐν Μιζουλάνῳ ἠρρώστησε καὶ τελευτᾷ...



b) Раздѣленіе Арменіи на двѣ части.

**М. Хоренскій. III, 42.**

*Յաղագս բաժանելոյ Հայոց ընդ երկու... Իմացեալ Շապհոյ՝ թէ թերուղիղ է Արկադ, խօսի ընդ նմա խաղաղութիւն... վասն որոյ հաւանեալ՝ կամաւ յանձն առին բաժանել զՄիջագետս եւ զՀայոց աշխարհս կրկին սահմանադրութեամբ։ Վասն որոյ բարձեալ Արշակայ զբուն թագաւորութիւն հարց իւրոց զԱյրարատ և զամենայն տան բաժինն Պարսից, փոխանակ տիրել արևմտեայ կողմանց աշխարհին մերոյ, որ է տան բաժինս Յունաց. ոչ միայն մօրն աղագաւ, որ էր ի կայսերական քաղաքէն, այլ և հաւատացեալ նուաղ կողմանն տիրել և ծառայել քրիստոնեայ թագաւորին, և ոչ յօժարել իշխել և մտանել ընդ լծով հեթանոսաց։ Գնացին զհետ նորա հանդերձ կանամբք և որդւովք նախարարութիւնք՝ որ ի բաժնի Շապհոյ... Զայս լուեալ Շապհոյ՝ թագաւորեցոյց ի վերայ Հայոց ի բաժնի իւրոյ զԽոսրով ոմն ի նոյն ազգէն Արշակունեաց...*

**Фавстъ Византійскій.**

vi, 1. *Ապա յետ մահուն Մանուէլի զօրավարին Հայոց ոչ ինչ կարաց հաստատել ի վերայ աշխարհի թագաւորութեանն Արշակայ. այլ բազումք ի Հայոց նախարարացն անտի ելեալ զատեան գնացին առ թագաւորն Պարսից և մատնեցին նմա զաշխարհն Հայոց, և խնդրեցին ի նմանէ թագաւոր Արշակունի։ Եւ նորա յանձին կալեալ մեծաւ խնդութեամբ... գտանէր ի նոյն տոհմէ մանուկ մի անուն Խոսրով և կապեաց թագ ի գլուխ նորա, և ետ նմա կին զքոյր իւր զԶրուանդուխտ... Իբրև ետես Արշակ արքայ զնոսա, մերժեցաւ տեղի ետ չոգաւ գնաց ի սահմանս Յունաց. և էին թիկունք Արշակայ թագաւորին Հայոց, և Խոսրովու՝ թագաւորն Պարսից։ Ապա եկին զօրքն Յունաց թագաւորին ի թիկունս. և թագաւորն Արշակ զԵկեղեաց գաւառաւ և զօրքն Պարսից և արքայն Խոսրով յԱյրարատ գաւառին։ Ապա դեսպանք եւ հրեշտակք երկուց թագաւորացն, Յունացն և Պարսից, միմեանց առ միմեանս երթեւեկէին... Եւ հաստատեցին զայս խորհուրդ. ընդ երկու զաշխարհն բաժանեսցեն։ Բաժին կողմանն Պարսից էր թագաւորին Խոսրովու, և բաժին տանն Յունաց էր թագաւորին Արշակայ...*

**Лазарь П'арпскій.**

c. 19. *Եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունեացն յերկուս առ ի հնազանդեցուցանել զկողմն արևմտից աշխարհին Հայոց՝ թագաւորին Յունաց՝ ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, զկողմն արևելից խոնարհեցուցանելով դառն և բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից...*

c. 22. *Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր՝ լքեալ մերժեալ բոլոր զբարի և զբնիկ ժառանգութիւն նախնեաց իւրոց զգաւառն Այրարատ...*

c. 29. *Յաղագս որոյ յուղի անկեալ գնայր յԱյրարատեան գաւառէն որպէս ի գերութիւն Արշակ թագաւորն Հայոց. և հաւատացեալ երթայր զհետ սուղ սակաւ բաժնի յերկիրն հաւատացեալ և կալ ի հնազանդութիւն Յունաց թագաւորին, քան թէ կալ ի փափուկ գաւառի այսպիսի վայելչութեանց և տեսանել հանապազօր զայպանումն հաւատոյ... յամբարհաւաճ իշխանացն Պարսից տէրութեանն..*

c) Сурэнъ, Ваханъ и Ашхадаръ съ сокровищами Аршака приходятъ къ Хосрову. d) Побѣжденный Хосровомъ Аршакъ умираетъ отъ болѣзни.

**М. Хоренскій. III, 45, 46.**

III, 45. *Սուրենայ Խոռխոռունւոյ եւ Վահանայ Ամատունւոյն եւ Աշխադարայ Դիմաքսենւոյ գտեալ ժամ պատեհ, զի էր հանեալ զգանձսն Արշակայ յամրոցէն Հանւոյ՝ տանել յաշխարհն Ծոփաց. զոր յափշտակեալ և կամեցեալ անցանել առ Խոսրով, ոչ ժամանեցին։ Քանզի աճապարեալ Սամելի Մամիկոնենի մտերմի Արշակայ,* յուղարկեալ զնոսա զհետ հասեալ փախստեայս արկանէ յանտառ այրս *ի գաւառին Մանանաղւոյ,* յոր հնար ոչ գոյանէր. Բայց է խոռոչանէ պորչն եւ էին առ ի բնաւ. և առաջի դրան այրին՝ նստեալ էր ուղղորդ մարտիւ. *և ի վերուստ* պարանօք *քուււոր, որ հայի յանդունդս խորաձորոյն… Վասն որոյ տարակուսեալ Սամէլ վարանէր առ անհնարութիւն տեղեացն։ Եւ այգ արարեալ Արշակայ,* հրամայեաց արկղ փորձել երկաթեայ և բաղ արանց ի ներքս հրամանել. և այնպէս շղթայարող իջուցեալ ի վերուստ ի վայր իջուցանել ի դուռն այրին…

III, 46. *Թէպէտև և ոչ եղեն ձեռնտու Շապուհ և Արկադ Խոսրովայ և Արշակայ, լինել զօրավիգ օգնականութեան՝ առ ի տալ ընդ միմեանս պատերազմ, սակայն և ոչ արգելլին զնոսա… Գնաց և Խոսրով ի բանակէն իւրմէ առ ծովուն Գեղամայ, զոր Մասուն կոչեն, ընդ առաջ Արշակայ, զի մի՛ ի սահմանս իւր իջցէ.* եւ ոչ այնուհետ ստացեալ ախոյեան *մինչև եգիտ զԱրշակ իջեալ յիւր սահմանն,* ի գաւառն Վանանդայ։ *Եւ պատահեն միմեանց ի դաշտին* որ կոչի Երեւել[1])։ *Եւ տան պատերազմ ընդ միմեանս սաստիկ յոյժ. Հարկանի զօրն Արշակայ, մեռանի և սպարապետն նորա Դարա Սիւնի ի պատերազմին, եւ փախստական լինի Արշակ սակաւուք… եւ գնաց Արշակ յԵկեղեց. և հիւանդացեալ անդ* հաշտութեան արարեալ ընդ երանւոյն հիւանդանայ…

**Іосифъ Флавій.**

Ant. Jud., XIV, 15, 5. Ὑπὸ δὲ τὸν αὐτὸν χρόνον Ἀντώνιος μὲν ἔτριβεν ἐν Ἀθήναις, κατὰ δὲ Συρίαν Οὐεντίδιος Σίλωνα μεταπεμπόμενος ἐπὶ τοὺς Πάρθους ἐπέστειλε πρῶτα μὲν Ἡρώδῃ συλλαμβάνεσθαι τοῦδε τοῦ πολέμου, ἔπειτα δὲ καὶ δ'ἐπὶ τὸν σφέτερον καλεῖν τοὺς συμμάχους. Ὁ τοὺς ἐν τοῖς σπηλαίοις λῃστὰς ἐπειγόμενος Σίλωνα μὲν ἐξέπεμψεν Οὐεντιδίῳ, αὐτὸς δ'ἐπ'ἐκείνους ἐξώρμησεν. Ἦν δ'ἐν ὄρεσι τὰ σπήλαια τελέως ἐξερρωγόσι καὶ κατὰ τὸ μεσαίτατον ἀποκρήμνους ἔχοντα τὰς παρόδους καὶ πέτραις ὀξείαις ἐμπεριεχόμενα. Ἐν δὴ τούτοις μετὰ πάντων τῶν οἰκείων ἐφώλευον. Ὁ δὲ βασιλεὺς λάρνακας ἐπ'αὐτοὺς πηξάμενος καθίει ταύτας σιδηραῖς ἁλύσεσιν ἐκδεδεμένας διὰ μεχανῆς ἀπὸ κορυφῆς τοῦ ὄρους, μήτε κάτωθεν ἀνιέναι διὰ τὴν ὀξύτητα τοῦ ὄρους δυναμένων, μήτε ἄνωθεν καθέρπειν ἐπ' αὐτούς. Αἱ δὲ λάρνακες πλήρεις ὁπλιτῶν ἦσαν ἅρπας μεγάλας ἐχόντων, αἷς ἔμελλον τοὺς ἀνθεστῶτας ἐπισπώμενοι κτείνειν καταφερομένους.

**Филонъ.**

(См. *Акад. Слов.* II. с. *տապակել*.)

ու այնուհետ ապակեայ ամբարտաւանել. *De Prov.*, p. 68.

*Եւ զՓիլոն* հաշտարայական ախոյեան, *քանզի կրկին է յաղագս նորա բան,* զերանելհեթ-ԴԻՏԻ, *կամ զի յարայ մահենին կորնչել այրելով։*

[1]) Ср. у *Фавста* (IV, 22): „…Ապա գայր սպարապետն Վասակ, գտանէր զառաջին առաջն զօրացն Պարսից զՀազարաւուխտն, զի հասեալ էին, և զոտառն Վանանդայ, ի տեղւոջն որ կոչէր յԵրեւել…“



e) Возвращеніе къ Хосрову нахараровъ, бывшихъ у Аршака. f) Хосровъ заключенъ въ оковы. Наслѣдуетъ его корону братъ его Врамшапухъ. g) Саакъ В. отправляется въ Тизбонъ и возвращается съ почестями и дарами.

**М. Хоренскій. III, 48, 50, 51.**

III, 48. *Տեսեալ նախարարացըն Հայոց, եթէ ոչ կացուցին Յոյնք ի վերայ նոցա թագաւոր, և դժուարին վարկուցեալ զանառաջնորդն լինել, խորհեցան կամաւ հնազանդել թագաւորին Խոսրովու։ Նմին իրի գրեն առ նա թուղթ… Բայց* Սամուէլ Մամիկոնեան *յինքն ըմբռնեալ զթուղթն Խոսրովու և զպատճէն թղթոց նախարարացն, զատուցեալ ի նոցանէ՝ գնաց առ կայսրն Արկադ։ Քանզի էր սպանեալ նորա* զհայր իւր Վարդան՝ *յաղագս ուրացութեանն* և զմայր իւր *Տաճատուհի, երկնչելով ի Պարսից և ի քեռեաց իւրոց Արծրունեաց, ոչ իշխէր զատչել ի Յունաց…*

III, 50. *Բայց* Շապուհ *էր ցասումն ընդ Խոսրովայ ի բարեկամանալն Արկադեայ անձամբ եւ* անհրաման *կարգել* յեպիսկոպոսութիւն *զմեծն Սահակ. վասն որոյ յղեալ մեղադրութիւն՝ հանդերձ սպառնալեօք, ըմբոստացաւ Խոսրով… Եւ իսկոյն խօսեցաւ* ընդ *Արկադայ… նոյնհետայն առաքէ զորդի իւր զԱրտաշիր զօրու մեծաւ ի Հայս… Իսկ Արտաշրի* ընկեցեալ զնա *ի տէրութենէն, փոխանակ կացուցանելով* զՎռամշապուհ եղբայր նորին *ոչ զմեծն Սահակ եւ ոչ զոք ի նախարարացն կարգելոց Խոսրովայ եթող, այլ վրդովեաց* [Ламбр. и другіе списки имѣютъ чтеніе: *Խոսրովայ վրդովեաց*] *ի պատուոյ իւրաքանչիւր… Եւ թողեալ գունդ ստուար ինքն ի Տիզբոն փութայր հասանել ի ծերութենէ հօրն ակն ածելով. ընդ իւր ունելով* զԽոսրով *դնել յԱնուշն կոչեցեալ բերդի. որոյ թագաւորեալ ամս հինգ…*

**Фавстъ.**

IV, 59. *Այնուհետև Վահան* Մամիկոնեան *եւ Մերուժան Արծրունի, սոքա երկոքեան արք պիղծք… սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս… Ատրուշանս շինէին ի բազում տեղիս… և զորդիս և զազգայինս իւրեանց տային յուսումն մազդեզանց։ Ապա որդի մի Վահանայ, անուն* Սամուէլ, *եհար սատակեաց* զՎահան զհայր իւր, *եւ զՈրմիզդուխտ* զմայր իւր՝ *զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին, եւ ինքն փախստական լինէր յերկիրն Խաղտեաց։*

**Лазарь П'арпскій.**

с. 346. …*Բայց յղէր (արքայն Պարսից Պերոզ) առ երանելի կաթողիկոսն Գիւտ, թէ մինչև ցայժմ քո իշխանութիւնդ առանց իմ* հրամանի *կալեալ է, և ծառայ մարդիկ են, որոց քեզ զայդպիսի մեծ գործ տուեալ է, և ոչ ինչ յինէն ունիս վստահութիւն։ Բայց այժմ եթէ զիմ կամս առնես և զիմ օրէնս ունիս… զքեզ պատուով արձակեմ… Ապա թէ յամառեալ չհաւանիս կատարել զկամս իմ, զեպիսկոպոսութիւնդ ի բաց առնեմ ի քէն…*

с. 30—33. *Իսկ յետ ժամանակի ինչ անցելոյ բերեալ ատելութիւն նախարարացն Հայոց, որ ընդ Պարսից իշխանութեամբն էին, ընդ թագաւորին իւրեանց Խոսրովու… երթեալ այնուհետև առնէին բանսարկութիւնս առ* Շա-

**Разр. спис.**

## М. Хоренскій.

Շապհոյ, զօրէն անպիտանի ուրուք[1]) զնետ ջնարահար փողահարին[2]) կնոջ կրթէր։ Ընդ որ ցասուցեալ Շապհոյ, հրամայէ ունել զնա ի դահլճին պահել. այլ նա է վաղակատարն հրապուրեալ[3]) զմիտ... յիւր տունն անցեալ գնայր...

III, 56. Զքառեամ անարգաբար թագաւորեալ Շապհոյ, հասանէ նմա համբաւ հիւանդութեան հօրն, և գնայ փութանակի, թողում տեղակալին հրամայելով զօրագլխի՝ ունել զմեծամեծս Հայոց և տանել ի Պարսս։ Իբրև եղև հասանել Շապհոյ ի Տիզբոն, մեռանի հայրն նորա Յազկերտ, թագաւորեալ ամս մետասան։ Ի նմին ամի և նա սպանանի ի դրանէ մարդկանն ն ե ն գ ե ա լ սպանանելոյն։ Իսկ ի ձեռն քաջին և բարեբախտին Ներսեհի Ճիճրակացւոյ զօրագլուխ եղելոյ ժողովեալ նախարարացն Հայոց հանդերձ զօրօք իւրեանց տան ընդ գնդին Պարսից պատերազմ... Ուստի աղմկաւ և բազում խռովութեամբ մնացեալ աշխարհս մեր յանիշխանութեան ամս երիս... Ընդ նոյն աւուրս լինէր Թագաւորեալ Պարսից Վռամ երկրորդ, և զքէն վրիժուց խնդրեաց ի մերմէ աշխարհէս. խաղաղութիւն առնելով ընդ Յոյնս՝ ոչ ի բաժին նոցա հպի։

## Лазарь П'арпскій.

նոյ) և յօրինացն։ Եւ սորա խորհելով զայս այսպէս, զմիտս զբան սուրբ հոգւոյն՝ որ ասէր, թէ Տէր ճանաչէ զխորհուրդս մարդկան, զի են ընդունայն։ Որ փութանակի եւ արգեամբք վճիռ ետուն զրեալքն՝ իւրացն եղելոցն. քանզի չէև ևս յերկարեալ ի թագաւորութեանն՝ մեռանէր Յազկերտ. է նմին ամի և զորդի նորին զՇապուհ՝ զոր ի տեղի Արշակունոյն թագաւորեցոյց ի վերայ աշխարհիս, անդէն դ ա ւ ո վ յարքունիքն սպանանէին։ Եւ յետ մահուանն Յազկերտի, որդւոյ Շապհոյ թագաւորին Պարսից, թագաւորեաց Վռամ որդի նորա ի վերայ աշխարհին Արեաց...

[1]) Ср. у *Филона* же (тамъ же, p. 150): „Իսր թէ դարձեալ ի խառնակութիւն վարարել զօրէն անպիտանի ուրուք զհետ երթայ (արու կոկորդիլոս զիգին)։“

[2]) Ср. у *Филона* же (*in Exod.*, II, 34): „Երաժշտանալ զդաշնակաւորն և զփողահարն։“

[3]) Ср. у *Григорія Нисскаго* (тамъ же, стр. 1): „Բայց թէ արդեօք զթագաւորական զձեռն զգեցեալ... և է պատկան վաղակատարն հրապուրել զմին...“



j) Построеніе города Карина, названнаго Θеодосіополемъ.

## М. Хоренскій. III, 59.

Անատոլեայ զօրավարի ընկալեալ զհրամանն արքունի, եկեալ յաշխարհս մեր եւ շրջեալ ընդ բազում կողմանս մեր, հաճի է գաւառին Կարնոյ իբրև ի միջոցի շինել զքաղաքն արգասաւորահող, չափաջուր[1]) և բերրի. իբր միջոց վարկուցեալ զվայրսն, ոչ կարի ի բացեայ ի տեղեացն, ուր Եփրատայ մասինն ինչ բղխեն աղբիւրք ականց, և հանդարտ գնացիւք յառաջացեալ ծովանան մօրաբար երևութիւք. յորում անբաւութիւնք ձկանց եւ զանազան հաւուց ճարակաւորաց, յորոց ի ձուոց միայն կերակրեալ լինէին բնակիչքն։ Եւ զեզերբ մօրին շամբք և բազմութիւն եղէգանց. և դաշտն ունէին զխոնջութիւն խոտոց և զբաջարեբութիւն սերմանաւոր պտղոց։ Եւ լերինքն լի են երէովք եղջերաքաղաքաղաք և որսոցովք. Նա և զանասուն պաճարս բազմացուցանեն, մեծահասակս, քաջամարմինս և յորս ցուցանեն համակեալս է ծնընդեան։ Եւ առ ստորոտով մի գեղեցկաձևոյ լերինն գտեալ բազում աղբիւրս ականակիտս և մանունս բղխեալ անդ. տեղագրեաց զքաղաքն, զորով շրջափակեալ խոր փոսիւ, անդնդակէր հաստատեաց զհիմունս պատուարին. և ի վերայ բարձրաբերձ աշտարակս ահագինս շինեաց յորոց զառաջինն Թէոդոս անուանեաց ի պատիւ Թէոդոսի։

## Лазарь П'арпскій.

с. 22—27. ...զգաւառն Այրարատու, զհոյակապն և զհռչակաւորն... զամենարոյսն, զամենաբուղխն... զդաշտս մեծատարածս և որսալիցս, զլերինս շուրջանակի գեղեցկաձևս և պարարտարօտս, զհօտեալս երէովք եղջերաքաղաղաքաղ և որսոցովքն... յորոց ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք... մատակարարէ անբաւ բազմութեամբ յատանն... զանուշահոտ զմեղրահամ քաղցրութիւն բանջարացն և զզանազանութիւն իւղաբուղխ սերմանցն... Թանձրախիտ անձմունք խոտոյն՝ զանթիւ արօտականս ընդանի իշանց և զանհամբոյր բոլս վայրենի էրէոցն յագեցուցեալ, թանձրաթաղանթս, առողջաւակս, ս ո ն ք ա ց ե ա լ ս ճարպաթեամբ զընաւ տարօրինակ ցուցանէ... Եւս և գետոյն գնացք բազմակերպ ձկամբք մեծամեծօք և փոքումբք զանազանեալ համովք... Նոյնպէս յինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զառաւելութիւն հասոյն... սորամուտ երամս կաքաւացն և սալամբացն և կամ եղէգնարնակ թփամուտ մացառաղօղ պ ա ր ա ր տ ահարժին զանուշահամ ազգ ազգաց վայրենեաց... մեծ ա ն ձ ո ւ ն ք և յ ա ղ թ ահարժին հաւք... և բազմազան վայրենի հաւուց ձագս և ձուս ի կղզեաց գետոյն՝ բերեալ մատուցանեն ընծայս իշխանացն...

## Прокоп. Кесс.

De Aedif., III, 5. ...ἡνίκα Θεοδόσιος ὁ Ῥωμαίων βασιλεὺς τὴν Ἀρσάκου ἐπικράτειαν ἔσχεν, ἥπερ μοι ἐναγχος δεδιήγεται, φρούριον ἐπί τινος τῶν λόφων ᾠκοδομήσατο τοῖς προσιοῦσιν εὐάλωτον, ὃ δὴ Θεοδοσιούπολιν ἐπωνό·

[1]) Ср. у *Филона* (Жизнь мудрец., стр. 68): „Արգասաւորահող և չափաջուր էր գաւառն։“

| М. Хоренскій. | Лазарь | Прокопій Кессарійскій. |
| --- | --- | --- |
| Եւ ի նմանէ և անդր շինեաց աշտարակս ծայրաւորս եհեր- ձեալս և առանցս ձե- ձևալ եղջևրս՝ որք ընդդէմ Հային լերինն: Սոյնպէս և ընդդէմ դաշտին հիւսիսոյ. իսկ ընդդէմ արևելից և արևմտից կանգնեաց աշտարակս բոլորաձևս: Եւ ի մէջ քաղաքին ի բարձրաւանդակ վայրի մթերանոցս բազմապատիկս շինեաց և Աւգոստիոն անուանեաց ի պատիւ Աւգոստոսի: Եւ այլ ջուրս ընդ յոլով տեղիս ածեալ մուծանէ անյայտ գնացիւք: Եւ ելից զինս և պահապան գնդեր զօրաց և անուանեաց Թէոդոսուպօլիս, զի յիշատակաւ քաղաքին անմահ լիցի անունն: Եւ ի վերայ ջերմ բղխեալ աղբերացն յարկս ի վիմատաշ քարանց շինեաց: | | μασε. Τοῦτο Καβάδης τότε ὁ Περσῶν βασιλεὺς, ἡνίκα δὴ Ἀμίδης εὐθὺ ἴετο, παριὼν εἷλεν. Ἀναστάσιος δὲ ὁ Ῥωμαίων αὐτοκράτωρ οὐ πολλῷ ὕστερον πόλιν ἐνταῦθα ἐδείματο τὸν λόφον ἐντὸς τοῦ περιβόλου πεποιημένος ἐφ᾽ οὗ δὴ φρούριον τὸ Θεοδοσίου εἱστήκει. Καὶ τὸ μὲν αὐτοῦ ὄνομα τῇ πόλει ἀφῆκεν, ἐξίτηλον δὲ τὰ Θεοδοσίου ποιεῖσθαι τοῦ πρότερον οἰκιστοῦ ἥκιστα ἴσχυσεν... τοῦτο δὲ Θεοδοσιουπόλεως τεῖχος εὐρύνετο μὲν ἱκανώτατα, οὐ κατὰ λόγον δὲ τοῦ εὔρους ἀνεῖχε. τὸ γὰρ ὕψος αὐτῷ ἐς τριάκοντα ἐξικνεῖτο μάλιστα πόδας... διὸ δὴ βασιλεὺς Ἰουστινιανὸς ἀντεμηχανήσατο τάδε. πρῶτα μὲν τάφρον ὡς βαθυτάτην ἐν κύκλῳ ὀρύξας, χαράδραις αὐτὴν ὀρῶν ἀποτόμων ἐμφερεστάτην εἰργάσατο. ἔπειτα δὲ χῶρον τὸν ὑπερπεφυκότα κατατεμὼν ἔς τι ἀνεκβάτους κρημνοὺς καὶ σήραγγας ἀδιεξόδους μετεστήσατο τὴν αὐτοῦ φύσιν... τὰς δὲ ἐπάλξεις ἀποσφίγξας ἐν στενῷ μάλιστα ὅσον ἐνθένδε βάλλειν τοὺς τειχομαχοῦντας δυνατὰ εἶναι... πύργον ἕκαστον φρούριον ἐχυρὸν τεκτηνάμενος. οὗ δὴ τὰς δυνάμεις ἁπάσας καὶ τὸν ἐν Ἀρμενίαις στρατηγὸν ἱδρύσασθαι καταστησάμενος κρείσσους τοὺς Ἀρμενίους διεπράξατο τὸ λοιπὸν εἶναι ἢ δεδιέναι τὴν Περσῶν ἔφοδον. |

# ГЛАВА XVI.

## О Врамшапухѣ и просвѣтительной дѣятельности Свв. Саака и Маштоца.

a) Блаженный Месропъ. b) Саакъ В. вступаетъ па первосвященническій престолъ. c) Письмена Даніила. d) Письмена Месропа, дарованныя черезъ посредство Божіей благодати. e) Письмена арменскія, иверскія и ахванкскія. f) Месропъ отправляется въ Византію. Копіи съ пяти писемъ. g) Ученіе въ западной части нашего отечества. Водвореніе общаго мира. Воцареніе Арташира. h) Месропъ вторично является проповѣдникомъ. Переводчики отправляются въ Византію.

| Хоренскій, III, 47, 49, 52, 53, 54, 57, 58, 60. | Корюнъ. |
| --- | --- |
| III, 47. Տեսեալ թէ ի վերջ հասեալ է թագաւորութիւնն Հայոց, և գլխովութիւնն նիւթ իւրոյ համբերութեանն գտեալ Մեսրոպայ, որ էր ի Հացեկաց Տարօնոյ, սնեալ և ուսեալ առ մեծին Ներսիսի, և յետ ելից նորա աշխարհէ՝ ի դրան արքունի կարգեալ քարտուղար. սա սիրեաց զճգնաւորութեան վարս. որպէս տեսաց ոմն, ինուահանգիստ փութայ նաւ խռովեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ, նոյնպէս և նորա փախուցեալ յաշխարհական զբաղմանց, և ընկեցեալ յետս զմարմնական պատիւն, զհետ ընթանայր երկնաւորին: Եւ երթեալ ի գաւառն Գողթան բնակէ, զճգնաւորութեան վարս ստացեալ: Եւ որ ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական, թաքուցեալ յաւուրսն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունեաց, զայն երարձ օգնականութեամբ իշխանին գաւառին, որում անունն էր Շաբիթ, Որ նշանէ աստուածայինք լինէին՝ որպէս առ սրբոյն Գրիգորի. Հալածական լեալ դևք մարմնաւոր տեսլեամբ անցանէին ի կողմանս Մարաց: Եւ ոչ ինչ յայնցանէ պակաս արարեալ գտանի և Սիւնեաց աշխարհին, օգնականութեամբ նորին իշխանին, որ կոչէր Վաղինակ: Եւ ի վարդապետել երանելւոյն Մեսրոպայ՝ ոչ փոքր կրէր վտանգս, քանզի ինքն էր ընթերցող և թարգմանող. և եթէ այլ ոք ընթեռ- | Изд. 1833 г., стр. 6—8... Աոն զոր ինախակարգ բանիս նշանակեմք... էր Մաշթոց անուն ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ: Ի մանկութեան տիոն վարժեալ հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանին առ հազարապետութեամբն աշխարհիս Հայոց Առաւանայ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհակաց կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն, և անդէն ուշ եդեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց... Եւ յետ այնորիկ ըստ աւետարանական չափուցն՝ ի ծառայութիւն Աստուծոյ մարդասիրին դարձեալ, մերկանայր այնուհետև զիշխանական ցանկութիւնսն ... և անդէն վաղվաղակի ի միայնակեցական կարգ մտանէր... Առեալ այնուհետև երանելւոյն զհաւատացեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան: Այլ և ընդ առաջ ելանէ նմա իշխանն Գողթան, այր երկիւղած... Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառաւն հանդերձ միամիտ սատարութեամբ իշխանին... Եւ յորժամ ինոսա զբանն կենաց սերմանեալ... նշանս մեծամեծս երևէին, կերպակերպ նը- |

### М. Хоренскій.

ընդ գիրս ասացեալ Նոցին սրբոց հարցն առաջնոց, թարգմանեալ ի մեր լեզուս բերցեն փութով. զի յետ այնր ի Բիւզանդիոն առաքեցին ի նոյն գործ։ Որոց ընկալեալ զհրապուրական թուղթս սուտակապասաց ոմանց, իբր թէ պատրաստին մեծն Սահակ և Մեսրոպ գալըս առաքել ի Բիւզանդիոն, վասն որոյ առանց հրամանի վարդապետացն իւրեանց նոյն ընդ նոյն չուեալ գնային ի Բիւզանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ուսմանց. և քաջ վարժեալ հելլէն դպրութեանս, յետ-նորդեցին ի թարգմանել և ի գրել։ Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղեւոնդ և Կորիւն կարգային, յիւրեանց կամաց ելին առ նոսա ի Բիւզանդիոն։ Ապա եկանեն անդր Յովհան և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և Մեսրոպայ, որոց յաջողեալ [1]) ուղեւորեալ և ծուլարար [вар. ծուլացեալ] դեգերեալք պատաղեցան ի Կեսարիայ։ Որոց ընդունելութիւն մեծապէս արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւզանդացւոց։

### Корюнъ.

լինէր նմա եկեղեցին Գարգարացւոց, որոյ խորս կոչէին... առաջի դնէր զանձն վարդապետին հանդերձ իշխանութեամբն իւրով... Իսկ նորա անցեալ դիմեալ ի կողմանսն, առ որում ինքնակալ Աշուշա անուն Բդեաշխեաց Վրաց, որոյ առաւելապէս պայծառուցեալ ծաղկեցուցանէր զվարդապետութիւնն. և նորա շրջեալ զամենայն աշակերտօք պատուիրեալ կալ ի ճշմարտութեանն։ Յայնժամ իշխանին Տաշրացւոց առն պատուականի և աստուածասիրի, որ անուանեալ կոչէր Աշոտայ, ի ձեռն տայր նմա զանձն ամենայն զաւառաւն իւրով... և յանձն արարեալ զնոսա եպիսկոպոսին Սամուէլի... ինքն դառնայր ի կողմանս Հայոց մեծաց։ Եւ եկեալ ի սովորական տեղին, զընդելական ողջոյնն ս. Սահակայ և ամենայն պատահելոյն տուեալ... Յետ այնորիկ ուշ եդեալ երկոցունց երանելեացն զիւրեանց ազգին շտեմարանին առաւել յարգել և զիւրացուցանել, յետոյ ի գործ արկանէր ի թարգմանել և ի գրել. մեծն Սահակ՝ ըստ յառաջագոյն սովորութեանն։ Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն յուղարկել ի կողմանս Ասորոց՝ ի քաղաքն Եդեսացւոց, զՅովսէփ, զոր ի վերոյն յիշեցաք, և երկրորդն Եզնիկ անուն՝ յԱյրարատեան գաւառէն ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյն զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս հայերէն գրեալս դարձուսցեն։ Իսկ թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն և (с. 21) կատարեալ զհրամանսն, և առ պատուական հարսն առաքեալ, անցեալ գնային ի կողմանս Յունաց, ուր և ուսեալք և տեղեկացեալք, թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին։ Ապա յետ ժամանակի ինչ ընդ մէջ անցելոյ դէպ լինէր ոմանց եղբարց ի Հայաստան աշխարհէս դիմել իջանել ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջնոյն անուն էր և երկրորդին Կորիւն, և մատուցեալ յարէին յԵզնիկն՝ իբրև առ ընտանեգոյն սննդակից ի Կոստանդինական քաղաքին և անդ միաբանութեամբ հոգևոր պիտոյիցն զխընդիրն վճարէին։

[1]) Ср. у *Филона* (De Provid., p. 114): „Եւ մինչև ցայսօր է տեսանել զայնոսիկ, որ ոչ յաջողեալ և ծուլացեալ բժշկել ձեռնարկեն։“



## i) Соборъ Ефесскій, созванный противъ нечестиваго Несторія.

### М. Хоренскій. III, 61.

Ընդ այն ժամանակս եկաց յաթոռ եպիսկոպոսութեան Բիւզանդացւոց անարժանաբար յաջորդեալ ամբարիշտն Նեստոր. և հրէական իմացմանց հետևեալ, հայհոյէր զամենասուրբ կոյսն Աստուածածին [1]) լինել և ոչ աստուածածին։ Քանզի ծնեալն ի նմանէ ասէր սկիզբն, այլ որդւոյն ասէր շնորհօք ի Մարիամայ [1]), և այլ որդի ի հօրէ յառաջ. որպէս զի լինել երկուս որդիս, որով Երրորդութիւնն չորրորդութիւն լինի։ Վասն որոյ ժողովեալ սրբոց հարցըն յԱսիա ի ծովահայեացն Եփեսոս դրաւորական վերծանութեամբ, Կելեստինոս Հռոմայ, Կիւրղոս Աղեքսանդրի, Յոբնաղիոս Երուսաղէմի, Յովհաննէս Անտիոքայ, Մեմնոն Եփեսոսի, Պաւղոս Եմեսու, Թէոդոտոս Անկիւրիայ, և այլ բազում, համանգամայն երկերիւր հարք, նզովեցին զՆեստոր, խոստովանեցին մի որդի Աստուածոյ զՏէր մեր Յիսուս Քրիստոս, և աստուածածին զամենասուրբ կոյսն Մարիամ։ Եւ վասն զի ոչ հանդիպեցան յայնմ ժողովի մեծն Սահակ և Մեսրոպ, գրեն առ նոսա Կիւրեղ Աղեքսանդրացի և Պրոկղոս Կոստանդնուպոլսի և Ակակ Մելիտինոյ եպիսկոպոսք, զգուշացուցանելով զնոսա. քանզի լուան, եթէ ոմանք ի չարալուան աշակերտացն առեալ զգիրսն Թէոդորոսի Մամեստացւոյ [вар. Մամսուեստացւոյ], զվարդապետին Նեստորի և զաշակերտին Թէոդորի, գնացին յաշխարհն Հայոց։ Ապա եկեալ թարգմանիչքն մեր՝ զորոց անուանքն յիշատակեցաք յառաջագոյն,

### Исторія императоровъ.

(Рукоп. моей библіотеки, стр. 30—32).

...Եւ էր հերձուած ի ժամանակին յայնմիկ Դիոդորի Տարսոնացւոյ և Թէոդորոսի Մամեստացւոյ և Նեստորի Անտիոքացւոյ... Իսկ Նեստոր Անտիոքացի, եպիսկոպոս Կոստանդնուպաւղսի, աշակերտ Պաւղոսի Մամեստացւոյ, ուսեալ զգընախաւսութիւնս Դիոդորի Տարսոնացւոյ՝ ասէ. ոչ ուրեք իշխեցին ասել հարքն թէ Աստուածն Բան ծնաւ ի կուսէն, այղ առ ի նըշանակ զանուանսն որ ցուցանեն զընութիւնս երկուս. քանզի Քրիստոսն և Որդին և Տէրն երբեմն զաստուածութիւնն զեկուցանեն և երբեմն զմարդկութիւնն, իսկ երբեմն զերկուս, եւ ոչ դարձեալ այղ Որդի և այղ միւս, այղ ինքն Որդի է ըստ բնութեանցն կրկնակի... ոչ խոստովանի զբանն Աստուածամարմնով երևեալ, այղ ի մարդ բնակեալ... զոր դիտացեալ Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի՝ գրէ երիցս անգամ առ Նեստոր դառնալ ի հայհոյութեանցն... իսկ Նեստոր զընդդէմ հակառակսն առնէր նմա պատասխանիս. վասն

### Корюнъ.

с. 21. ...Որոյ յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, և Նիկիական և Եփեսոսական կանոնօք դային եբերելով աշխարհին Հայոց և առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկեղեցւոյ սրբոյ։ Իսկ երանելոյն Սահակայ զեկեղեցական գրոց զումարութիւնն կանխաւ յունական բարբառոյն ի հայերէն դարձուցեալ եւ բազում ևս զհայրապետաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն [2]), դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն զյանկարծագիւտ զփութանակի զթարգմանութիւնսն հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք, և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանեցին։

с. 25. Յայնմ ժամանակի բերեալ երանելեացն Հայաստան աշխարհին գիրք սուտապատումք, ընդունայնախօս աւանդութիւնք

[1]) Ср. у *М. Сократа* (стр. 659): „...և զի ցասմամբ էր Կիւրեղ ընդ Նեստորի յաղագս նախանձու Քրիստոսի մարդկանալոյն, և վրէժխնդրութեան սրբոյ Աստուածածնին Մարիամու, զոր Աստուածածին ասէր և զծնեալն առ ի նմանէ սոսկ մարդ փոխարկեալ և ըստ շնորհի որդեգրութեան արժանաւոր լինել Որդի Աստուծոյ անուանի...“

[2]) Въ этомъ мѣстѣ я ставлю *запятую*, вмѣсто *точки*, какъ это принято въ обоихъ венеціанскихъ изданіяхъ.

## М. Хоренскій.

գտին զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, եւ մատուցին զԹուղթսն և զկանոնս ժողովոյն Եփեսոսի՝ վեց սահմանեալ կանոնաւ գլխով և զստոյգ օրինակս գրոց։ Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ դարձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն, փութանակի հանդերձ նորոք վերստին յօրինել նորոգմամբ։ Բայց քանզի անգէտք էին մերոյ արուեստի 1), ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր. վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ՝ ի լեզու պանծալի 2), ի ստոյգ յօդանալ ճեմարանին 1) վերաբանութեան։

## Исторія императоровъ.

որոյ հարկաւորի երանելին Կիւրեղ գրել առ թագաւորն, զի տայէ հրաման ժողովելոյ. և նորա հրամայեալ ժողովեցան յԵփեսոս ԺԱ. ամի թագաւորութեան նորա եպիսկոպոսք որոց էին գլխաւորք Յոբենաղիոս Երուսաղէմի, Կիւրեղիոս Աղեքսանդրի (որ և) գլուխ ժողովոյն, Մեմնոն Եփեսոսի, Յովհաննէս Անտիոքոյ, Պաղադիոս Եմեսիոյ, Թէոդորոս Անկիւրեայ, Ակակիոս Մելիտինէ, Պրոկղոս Կիւզիկեայ, Կեղեստինոս Հռոմայ, Նեստոր Կոստանդնուպաւղսի։ Եւ ժողովեալ նզովեն զՆեստորիոս, բայց ի Յովհաննէ Անտիոքացւոյ և որոց ընդ նմա եպիսկոպոսք Լ.

## Корюнъ.

առն ուրումն Թէոդոսեայ անուն։ Վասն որոյ սիւնհոդոսական հայրապետաց եկեղեցեացն սրբոց նշանակեալ աղգ առնէին ճշմարտահաւատ փառաւորչացն Սահակայ և Մաշտոցի...

1) Ср. у *Филона* („Объ аллегоріи въ Библіи", p. 107): „...քանզի որք ինչ միանգամ մերով արուեստիւ գործին, կատարեալք՝ կային..."—*Idem* (De animal., p. 128): „...Եւ բազմաց և այլոց դէպ է լեզու ճշգրիտ և ստոյգ յօդանալ և այնոցիկ որք ոչ յայտ ընդելք"։—*Id.*, (In Genes., ш, 16): „...Արիստոտելես և որք ի ճեմարանէն..."

2) Ср. также у *Гр. Назіанзина* (въ словѣ *Кесарію,* рукоп. вѣн. мхит., № 217, стр. 118а): „...ոչ զարդարի (կեսարոս) Պղատոնի և Արիստոտէլի... ոմամբք, որք ի պանծալի ճեմարանէն են և յԱկադեմեայ։"



k) Объ учителяхъ (своихъ), о самомъ себѣ, о путешествіи, предпринятомъ для собственнаго образованія съ уподобленіемъ небесному чину.

## М. Хоренскій. III, 62.

Յարահետեւողք իմաստասիրացն և վերահայեցողք չափաբերապէս մակադրութեանց՝ զաստեղս ի լուսնոյ առեն ընթացս և զլուսինն արեգակամբ լուսաւորել և զբոլոր արեգակնն յարփիայինն երկնէ. հիկէն արփւոյն հեղեալ զծագումն յիւրաքանչիւր գօտիսն, և զանգնիւր գոտիքն ի ձեռն աքեփալոնն ընթացին՝ ըստ դասի, ըստ բերման, ըստ ժամանակի։ Օրինակ իմն, այսպէս և մեք յաւետախաղաց շնորհիւ ցոլացեալ յիմանալի ճառագայթից հոգևոր հարցըն, ըստ հարազատին տասանցն պարգևաձևալ, յԵդեսացւոցն 2) հասանէաք քաղաք. Ընթանալք ընդ խորս գիւանին նաւել 1), անցաք ի սուրբ 2) տեղիսն երկրպագել, և մնալ վայրկեան ի պաղեստինացւոց հրահանգս 2)։ Եւ այնպիսով սաղապաձեմիւ մտաք յԵգիպտոս յաշխարհն համբաւաւէնչ, յանչափից հրաժարեալ ի ցրտոյ և ի տօթոյ, ի հեղեղաց և յերաշտից, ի գեղեցկումն մասին երկրի զդիրն ունելով, ամենայն պտղովք առլցեալ եւ անպարսպաբերձ պարզպեալ Նեղոսիւ։ Որ ոչ պահպանութիւն միայն, այլ և կերակուր նմա բաւական մատուցանել բնաւորեալ, և յինքենէ սահմանեալ տէր զոլ պատահել չորութեան և խոնաւոյ՝ առ երկրին գործաւորութիւն. և զանեղսն ի նմա դիւրածել ի գետոյն բերիւք, հանդիտակ կղզւոյ առատագիւտ առնէ, շուրջ պարունակելով և ընդ ամենայն հոսելով տրոհմամբ երկոտասանից վտակաց։ Յորում բարեյարմար մեծն Աղեքսանդրեայ է շինեալ քաղաք ծովեզերեայն 3) ի մէջ ծո-

## Филонъ.

О священникахъ, стр. 181. ...եթէ ոչ լոյս արեգական ընծայեր, զիա՞րդ մարմնոցըն անբաւ և անճառ որակութիւնք երևեալ լինէին...

In Exod., ii, 104. ...Իսկ աստեղացն յերեկորեայ մինչև յառաւօտ ընթացին...

Ibid., i, 9. ...քանզի չորեքտասաներորդին լուսաւորել (լուսինն) ի ժողովրդոյն զգայութեանն լինի լուսալիր...

Ibid., ii, 79. ...քանզի շարժումն նոցա (մոլորականաց) իբրու թէ մերձ առ մեր գօտիդ է...

Ibid., ii, 80. ...նոյն օրինակ և որ յաստեղս պայծառութիւն լուսոյն է, բնաւորեալ է յարեգակն լուսաւորութիւն ընդունել ի սրբագունէն։

Ibid, ii, 103. Որք ըստ տարևորական ժամանակսն կատարեն ի կենդակին չորք կարգն՝ այսպէս են. իւրաքանչիւր որք արփի ունի շուրջ զիւրեաւ...

О жертвенникѣ, стр. 201. Վայելչապէս կարծեմ և արժանապէս. վասն զի աստուծոյ շնորհին յաւէտագոյն խաղացեն և անպակաս...

## Каллисѳенъ.

с. 47. ...զիարդ իսկ ամենեին ըմբռնեալք եղերուք... պարզապէս անձնատրութեան ունելով ...քանզի գետք են շուրջանակի...

с. 36. ...շինեա՛ (ասէ Ամոն զԱղեքսանդր) քաղաք նշանաւոր դեր ի վերոյ Պրոտեոսեայ կղզւոյ, որոյ առաջնոյ անկեալ նորա յաւիտեան Պղոտոնեայ ինքն թագաւորելով հզօրագոյն գահաւորեալ ամենայն աշխարհաց պատեալ։

с. 39. ...ի վերայ լերին միոյ բարձու եկեալ բերին զնա (զԱղեքսանդր), այդ որ այժմ կոչի Պլուտոնի գերեզման...

с. 41. ...քանզի զքաղաքն դեռ ևս անդր լինելով Աղեքսանդրոս շինէր ի Տաբերի գետն և հնացեն և զնոյն ինքն զմեհեան օձին... եւ զոհք

1) Ср. у *Григорія Назіанзина* (въ словѣ *Василію,* рукоп. вѣнск. мхит., № 217, стр. 146 и 148): „Թեբնաւոցոյն նաւեր (Բասիլիոս) ընդ կենցաղոյս ծով։"

2) Ср. у *Ананіи Ширакаци* (Автобіографія, изд. К. Патканова, стр. 3): „...Եւ պարգևեաց Աստուած զխնդրուածս իմ [вар. рук. вѣн. мхит. № 30 = B: զհայցուածսն], գնացի [вар. B. գնաց] (յԱնտիոքայ) ողջացեալ ի [вар. B. սուրբ] քաղաքն Երուսաղէմ և [вар. B. արարեալ անդ ամիս մի] անտի յԱղեքսանդրեայ և [вар. B. ամս երիս կայր ի հրահանգի և ապա չոգաւ] անտի ի Հռոմ և կացեալ [вар. B. և արարեալ անդ տարևոր] ժամանակս, դարձայ [вар. B. գա] ի Կոստանդնուպօլիս, և գտի վարդապետ Աթենս իմաստասիրաց քաղաքին այր երևելի և կացի առ նա յուսմանն ամս ոչ սակաւ [вар. B. և գտանէ անդ այր երևելի, որ վարդապետ էր իմաստասիրաց քաղաքին և եկաց առ նմա... ոչ սակաւս]։

3) Ср. у *Гр. Назіанзина* („Առ որս," Ը.): „Զիա՞րդ ոչ ասես և զԲարեձևան գիր թողութեն։"

### М. Хоренскій.

վուն եւ ձեռագործ լծի կառուցեալ յորոց չորոյն բաղդատութեանն փչեցեալ, որ է լծին բերանք արդեանցն է ծովն, և որք է ծովէքն մօտելոյ [вар. տասն եղեւ] որ եղանեն առեալ առեալ սղոխք չորոյ՝ անօսրանք այն որ է ծովէն, և խանձանք որ է լծէն. որոց խառնուածն առողջութիւն հաստատութեան կենաց գործէ։ Սորա առաջին այժմ ոչ անցեալ նորին Պղատոնեանս հնգախորհուրդ տեղակութեանսն զանազան աշխարհս զարդեալ, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբն. և ոչ փիլիսոփայական նախոց գերեզմանք, այլ սրբոցն վայելչական վկայարանք։ Եւ ոչ է տասն և հինգն Տօթի տօնի աղձատանք զբեռնաբարձս պատուելով զբանս, և պաշտօն տանել լորոտոյ և օձերոյ առնել քաղխսոն, այլ ի մետասաներորդի Նորին Տուրի՝ յայտնութեան Տեառն կատարի տօն. զյաղթող նահատակսն գովել և ստարայ առնել ընդունելութիւն և յաղքատս տուրս։ Եւ ոչ զոհել չար դիւին Սարապեայ, այլ զՔրիստոսի զարիւնն մատուցանել պատարագ. եւ ոչ խնդրել հրաման պատասխանոյ ի սանդարամետապետէն [вар. ի սանդարամետէն] Պրոտէէսայ, այլ ուսանել զզօրութիւնս պէս պէս իմաստից ի նոր Պղատոնէն, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ արժան [вар. ոչ անարժան] դտայ աշակերտ. և ոչ անկատար վարժմամբ յանգեալ արուեստից ճշմարտաց։ Նաեւ յԵլլադայ կամելով, յԻտալիա բնութեամբ անկար հողմոց. և ողջունեալ ի հանգիստ սրբոյն Պետրոսի և Պաւղոսի, ոչ բազում ի Հռովմայեցւոցն 2) կացեալ քաղաքի, անցանելով ընդ Ելլադայ յԱտտիկէ, սակաւ ինչ մնացաք յԱթէնս 2)։ Եւ ի կատարման ձմերայնոյն՝ դէմ եդեալ ի Բիւզանդիոն 2) եկանել, փափաքելով մերոց հայրենեացն։

### Филонъ.

In Exod., II, 79. ...առաւկելով զմոլորակայն իւրաքանչիւր ըստ հարմարութեան տասանցն պարբերութեամբ։

О жизни мудрецовъ, стр. 68. Սողովմայեցւոց երկիրն ...բազում անիրաւութեամբք առլցեալ... ամենայն պարզոյ քաջարերութիւն...

О жертвенник., стр. 217. ...զշնչելեացս փող... ընտրեալ էր արտաքուստ ոռոգանել [вар. առոգանել].

Объ Іессеянахъ, стр. 12. ...Իսկ զառ ի յարգն բաղդատութեանն որ է լծին բերանք արդեանցն է ծովն, և որք է ծովէքն տասն եղեւ որ եղանեն առեալ առեալ սղոխք, անօսրանք այն որ է ծովէն, և խանձանք որ է լծէն. որոց խառնուածն առողջութիւն հաստատութեան կենաց գործէ։

Объ аллегоріи въ Библіи, стр. 107. ...որք մերով արուեստիւք գործին, կատարեալք՝ կայանան... իսկ որք... մակացութեամբ հանճարոյ Աստուծոյ յանգեալք լինին, դարձեալ շարժին...

О жертв., стр. 205. ...յորոց ամենեցունց ընտրեալ կայ մնայ, ոչ յեղյեղեալ.

Ак. сл. *п. с.* ինքնանալ. Ոչ ինչ որ զնի լուսնոյս է՝ ընտանեաց.

Ib. Կենդանեաց ազգք և տնկոց ընտանեան.

### Каллисѳенъ.

մատչին նմա իբրև Փիլիպպոսին. եւ պատիւն և զհրամանս ամենայն բերանաբարձս... եւ զոհս մատուցանել աստուածայինն, և պաշտօն կրել լորոտոյն՝ որ խնամ տանին տանն և քաղխոսն առնել օձերոյն։

с. 43. Եւ երևեցաւ նմա ի քուն յայտնագոյն Սարապիս եւ ասայ. Աղեքսանդրէ, մոռացմ՞ունք եղեն քեզ մինչ առնելով զոհս կացեր...

с. 46. ...և ի խնդրելն մեր զնա և յաղաչել զաստուածն, թէ՞ ո՞ւր արդեօք փախեաւ թագաւորն, նա ետ պատասխանի որ է սանդարամետս ի Սարապեան մեհենին աստուածն...

---

## ГЛАВА XVII.

## Объ Арташирѣ и паденіи Аршакидской династіи въ Арменіи.

a) Злосчастный союзъ армянъ, замышлявшихъ собственную гибель. b) Паденіе армянскаго царства по желанію самихъ армянъ. Униженіе первосвященническаго престола. c) Саакъ В. отпускается изъ Персіи съ совмѣстникомъ Шмуэлемъ. d) Дѣйствія Шмуэля, недостойнаго соправителя Саака Великаго.

### М. Хоренскій. III, 63, 64, 65, 66.

III, 63. Բայց թագաւորն Հայոց Արտաշիր անհաճոյ սկսաւ ողողանել յանառակ ցանկութիւնս մինչև տաղտկանալ ի նմանէ ամենայն նախարարացն։ Որոց եկեալ առ մեծն Սահակ, զբողոք բարձին՝ հրաւիրելով և զնա յօգնականութիւն իւրեանց, չարախօսել առ արքային Պարսից եւ ի բաց ընկենուլ զթագաւորն իւրեանց, և պարսիկ ածել ունող աշխարհիս։ Այլ նա ասէ. Ոչ առ սուտ ունիմ զձեզ. իմ իսկ լուեալ է զայդպիսի աղէտս ամօթալեաց և բազում անգամ յանդիմանեալ ուրացաւ։ Եւ արդ պարտ է փոքր մի տանել թեւութեան առնն, մինչև զեւս նորան խորհել մարթասցուք կայսերըն Յունաց Թէոդոսիւ, և ոչ անօրինաց տալ ի ձեռս և յայպանումն։ Եւ նոքա ոչ կամէին, այլ ջանային համախորհուրդ զնա իւրեանց առնել։ Այլ նա ասէ. Ինձ քաւ լիցի մատնել զգայլոց զիմ մոլորեալ ոչխար, և ոչ պատել զբեկեալն կամ զհիւանդացեալն, այլ զաղավէժ առնել։ Զի թէ էր հաստատեալ թագաւորն առաջի, փութայի և ոչ յապաղէի, յուսալով զկանգնումն զլորելոյն՝ այլ հեթանոսաց՝ յառաւել կործանումն, ոչ առնում յանձն, ըստ այնմ՝ թէ մի՛ տայցես գազանաց զանձն խոստովանողի քեզ 1)։ Բանզի գթացեալ է առաջնոյն, թէպէտ և անառակ է. պոռնիկ է,

### Лазарь П'арпскій.

с. 52—62. Եւ էր Արտաշէս այր մանուկ եւ իգամոլ եւ բազում անառակութեամբ վարէր զթագաւորութիւնն։ Եւ չկարացեալ տանել նախարարքն Հայոց ժողովեցան միահամուռ առ... ս. Սահակ... և ասեն զնա. Ոչ ևս կարեմք այսպիսի անօրէն և պիղծ գործոց թագաւորին համբերել... Եւ լուեալ զայսպիսի բանս ...Սահակայ ի նախարարացն Հայոց... ասէ. Իբրև ոչ եթէ նոր ինչ լուեալ այսօր ի ձէնջ ճանաչեմ զասացեալսդ ձեր... բայց արդ՝ որպիսի հնարիւք ըստ արժանի հոգևոր մարդկան պարտ է մեզ նորայդ գտանել՝ զայն արժանէ խորհել ամենեցուն և առնել։ Եւ նոցա առհասարակ պատասխանի տուեալ ասեն ցսուրբ կաթուղիկոսն Սահակ, թէ մեք և ոչ մի ինչ ելս այլ եւ հնարս իրացն գտանել կարող եմք, բայց բողոքել թագաւորին Պարսից՝ ի բաց բառնալ ի թագաւորութենէ այտի... Սահակ իբրև լսէր զայս ամենայն ի նախարարացն Հայոց, և ստուգիւ ճանաչէր եթէ ի նոյն միտս և ի նոյն խորհուրդս հաստատեալ են բովանդակ աւագանի աշխարհին, ի մեծ տրտմութիւն և յանմխիթար սուգ ընկղմեալ լինէր... հրաժարէր առնել պատասխանի բանիցն մինչև յաւուրս բազումս... Իսկ յետ բազում աւուրց դարձեալ ժողովեալ առ նա միաբան ամենայն ազատա-

---

1) Ср. *Псалмы*, LXXIII, 19: „Մի՛ տայցես գազանաց զանձն որ խոստովան առնէ առ քեզ։“

### М. Хоренскій.

թոռանց նորա զնոյն իշխանութիւն։ Այլ նա ոչ առնոյր յանձն. և ի բազում թախանձելոյ նոցա հարկաւորեալ՝ պատմեաց զտեսիլն [1]), զոր յառաջ քան զբազում ժամանակս երեւեցաւ նմա ի բուն ապագայից յայտնութիւնք։ Զոր լուեալ նախարարացն, և գիտացեալ՝ թէ յաստուածային հրամանէ դադարեաց յազգէ նորա քահանայապետութիւնն [1]), յորդորեալ հարկեալ աւաղելով զինքեանս՝ ըստ աւետարանին բանի, թէ հարկ է գալ գայթակղութեանն, բայց վա՜յ այնոցիկ՝ ընդ որ ձեռն գայցէ գայթակղութիւնն, թոյլ տուին նմա։

### Лазарь П‘арпскій.

հանուր կորուստ աշխարհիս Հայոց, զոր տեսանեմ աչօք մտացս ի զօրութենէ վերին ցուցակութեանն...

с. 102. ...Եւ լուեալ զայս ամենայն խօսս բազմութեան աւագանւոյն Հայոց... ի սուրբ Հայրապետէն Սահակայ, յորդորեալ հարկեալ զարհուրեցան...

[1]) О *Видѣніи* Саака см. выше, ч. I настоящаго изслѣдованія, стр. 357.



е) Представленіе изъ міра святого Саака и блаженнаго Месропа.

### М. Хоренскій. III, 67.

Զքսան և զմի ամ թագաւորեալ Պարսից Վռամ երկրորդ՝ մեռանի թողլով զտէրութիւնն որդւոյ իւրում Յազկերտի... Յայնժամ մեծին Սահակայ հասեալ հիւանդութիւն մահու, և առեալ աշակերտացն՝ տարան ի գեւղն որ կոչի Բլուր. որպէս թէ ի վայր ընդանեացն և զերծ տեղի մատուցեալ ի զօրացն Պարսից կատողաց զնոսա։ Ուր եհաս վախճան, կեցեալ եպիսկոպոսապետութեամբն ամս յիսուն և մի. սկսեալ յերրորդ ամէ վերջնոյ Խոսրովայ Հայոց արքայի, մինչև ցերկրորդ ամն երկրորդի Յազկերտի եղելոյ Պարսից թագաւորի, յելս ամսոյն Նաւասարդի, յաւուր իւրոյ ծննդեանն։ Որ հանգստացաւ ծնեալ, անհաս [1]) զիւրն յիշատակ եթող. պատուեալ զպատկերն, պատկառեալ ի խորհրդեանն [2]), փոխանորդեալ զնմանն... Բայց զպատուական մարմին նորա բարձեալ սարկաւագապետին նորին Երեմիայ՝ հանդերձ աշակերտակցօք և տիկնաւն Մամիկոնենից, նորին նուաւ, որում անուն էր Դստրիկ. կին Վարդանայ սպարապետի, տարեալ հանգուցին յիւրեանց գեւղն յԱշտիշատ, որ է ի գաւառին Տարօնոյ։ Եւ ցրուեալ աշակերտաց նորա կրօնաւորաց սպուդէից ի գաւառս իւրաքանչիւր, վանորայս շինեցին՝ ժողովեալ եղբարս։ Եւ զկնի ի վեց ամսոյ անցելոյ, յերեքտասաներորդ մեհեկանի, և երանելին Մեսրոպ փոխեցաւ յաշխարհէ ի Վաղարշապատ քաղաքի. գերագունեալ[3])

### Лазарь П‘арпскій.

с. 102–106 ...Եւ յայնմ հետէ ամփոփեալ զինքըն առաքինւոյն (Սահակայ) յամենայն աշխարհածուփ զբօսանաց, առօթից միայն պարապէր և վարդապետութեան... Եւ կացեալ ամս բազումս և հասեալ ի յերկար ծերութիւն՝ վախճանեցաւ խաղաղական հանգստիւ ի գաւառին Բագրևանդայ, ի գեւղն որ անուանեալ կոչի Բլուր, և ելեալ [Ս.] ամին երկրորդի Յազկերտի որդւոյ Վռամայ թագաւորին Պարսից, յամսեանն Նաւասարդի, որ օր երեսուն էր ամսոյն, յերրորդ ժամու աւուրն. որ և նոյն ծննդեան սրբոյն ի ստոյգ գիտողաց և ի պատմութենէ երանելոյ առն Կորեան՝ հաստատեալ գրեցաք լինել և նոյն օր ծննդեան սրբոյն, ի նմին ամսեան։ Եւ վասն զի ոչ գոյր իւր արու որդի՝ բայց միայն դուստր մի, զոր էր տուեալ կնութեան Համազասպայ տեառն Մամիկոնէից և Հայոց սպարապետի, որ ծնաւ ի Համազասպայ երիս արու որդիս, զսուրբն Վարդան և զա. Հմայեակ և զերանելին Համազասպեան, որոց եւ կընքեաց սուրբ այրն Աստուծոյ Սահակ զստա-

### К о р ю н ъ.

с. 25. ...Յետ այնորիկ դէպ լինէր նովին ճշմարտութեամբ՝ երանելոյն Սահակայ լցեալ աւուրբք երկայն ժամանակօք... յառաջնումն ամի Յազկերտի որդւոյ Վռամայ՝ թագաւորի կացելոյ ի Պարսից աշխարհին, ի Բագրեւանդ գաւառի, ի գիւղ Բլրոցաց, ի կատարել ամսեանն Նաւասարդի, որպէս եւ զօր ծննդեան երանելոյն յիշէին, յերրորդ ժամու աւուրն... զոր և առեալ փաղփաղակի ամենայն հանդերձելովք, ձեռնասուն աստուածասէր պաշտօնէիցն իւրոց, որոց գլխաւորին Երեմիա անուն ճանաչէր, այր սուրբ և բարեպաշտօն, հանդերձ աստուածասէր իշխանակնաւ միով, որ և վայելչացեալ անուանեալ կոչէր Դստրիկ. որ էր կին Վարդանայ, զոր ի վերնոյն յիշեցաք, եւ բազում ամբոխից սրբոց ժողովոց, բարձեալ զսուրբն... ի Տարօն հասուցանէին մինչ ի բուն իսկ գեւղն յԱշտիշատ։ Եւ անդ մարտիրոսական խո-

### Жит. св. Сил.

[1]) Ср. у *Филона* (In Genes., IV, 46): „...զհանգստեանսն կենացս անհասութեան փոխանակէր։“ рук. вѣн. мхит., № 217,
[2]) Ср. у *Гр. Назианзина* („Ի բանս եւ ի հաւատարեացացիչն“, ... „Եղիցուք մարուք Արարչին, պատուեսցուք զպատկերն, պատկառեսցուք ի խորհրդեն (въ
стр. 171*b*): (См. также отд. отт. моихъ оригиналѣ стоитъ ἡ κλῆσις = կոչումն), փոխադրեսցուք զնմանն։“ крит. статей объ арм. пер. *Ц. И.* Сократа, Вѣна, „Ազգ. Մատենադ.“, ԽԷ, стр. 22—23“).
[3]) Ср. сокращ. перев. *Житія св. Сильвестра*, стр. 698: „...Եւ հրաժարեցեալ և վայելչացեալ այրն (Սեղբեստրոս) ճանաչիւր ի ժառանգաւորս եկեղեցւոյն Հռովմայ...“

### М. Хоренскій.

տուն զամենայն, որք զայնու ժամանակաւ էին առաքինիք։ Քանզի առաքինութեանն և հարազատութեանն ի նորա [вар. առ ի նորա] վարս տեսչի ժառանգել երբէք ոչ կարացին, այլ հեզ և լաւակաց և քաղցրախորհուրդ գոլով և երկնայնոցն շնորհաց արժանաւորեալք շնորհս քաղցրս ցուցանէր։ Վասն զի գոյր տեսանել հրեշտակական, մտօք ծննդական, քաղցր պայծառ, գործովք ժուժկալ, տարփանօք առաքինացեալ, պարկեշտ անձամբ, խորհրդականութեամբ լի, հաստատուն ողջախոհ, յաղթող հաստատուն [вар. հաստատողական], սիրով աննկուն, անդադարանելով աղօթիւք [1]։ Այլ վասն զի շնորհս ողջախոհութեան նորա ոչ բաւական էի ասել, ի հանդիստ նորա նշխարացն դարձուցից զբանս։ Որպէս լուսոյ ի բազմաց և ի հաւատարիմ արանց, եթէ եկաց լոյս շողապէս ընդ աղօտ նշանախաչն ի վերայ տանն, ուր երանելւոյն կցորդին աւանդեաց. ոչ փոյթ ընդ փոյթ լեալ՝ էանց ծագումն, կամ սակաւուց տեսանելի, այլ ամենայն բազմութեանն, մինչ յոլովից մկրտել յանհաւատից։ Յայնժամ լեալ աղմուկ շփոթի յամբոխութեանն, բաժանեալ յերիս գունդս, վասն հանգուցանելոյ զպարծելւոյն կայն Տարօն և նախ տան զՏանն կրկնել ի Մշեալութեան [2]։ Կէսքն ա-

### Лазарь П'арпскій.

ցուածս գեօղից իւրոց և ագարակաց... Որոց առեալ զանգինչալի նշխարս սրբոյն՝ բազմութեամբ քահանայից և ազատաց տարան ի գաւառն Տարօնոյ ի բնիկ գեօղն իւր սեփհական՝ յանուանեալն Աշտիշատ. և անդ կազմեալ հանգստարան սրբոյն, պատեցին շուրջեղեալ Տարօնի արդարոյն ըստ արժանի կայանից ճշմարտին։ Ուր և շինեալ եկեղեցի մեծապայծառ ի վկայարան սրբոյն զարդարեցին պատուական և մեծագին սպասուք. հիմնացուցեալ կանոնեցին ի տեղւոջն վասն բազմութեան պաշտօնէից. կարգեալ դարմանս անպակաս պտղոց ի հանգիստ առաւելեալ եղբայրութեան... Եւ յետ վեց ամսոյ կատարման նորին տարւոյ հանգստեան ս. Սահակայ՝ վախճանեցաւ երանելին Մաշտոց ի Վաղարշապատ քաղաքի, զոր և Նոր քաղաք անուանեն, յերեքտասաներորդի

### К о р ю н ъ.

բանին յարկեղ սրբոյն... եղեալ և կնքեալ քրիստոսադրոշմ կնքովն և զօրինաւոր յիշատակն (с. 26) ի վերայ կատարեալ...Որոց և նոյնպէս ամի ամի զումարելովք ի նոյն ամսեան՝ զնոյն յիշատակն տօնախմբեն...

Յետ ամսոյ միոյ անցելոյ վախճանի երանելւոյն Սահակայ, լինէր հանդերձ սրբով վարդապետով բանակին Հայոց յԱյրարատեան ի Նոր-քաղաք եւ նովին հոգեկրօն վարուք հասանէր սրբոյն քրիստոսակոչ կատարումն, յետ սակաւ ինչ աւուրց հիւանդութեանն, յերեքտասաներորդի ամսեանն Մեհեկանի... Եւ անուանք գլխաւորաց աշակերտացն ժողովելոցն՝ են այս. առաջնումն Յովսէփ, զոր եւ ի սկզբան գրեցաք. երկրորդին Թադիկ. արք զգաստք՝ զգուշագոյնք հրամանաց վարդապետութեանն։ Ի զինուորական կողմանն՝ առաջնումն Վահան անուն յազգ-

### Жит. св. Сильвестра

(Пространное, стр. 698—699).

Երեսնամեայ ահայ ամաց էր, յորժամ ի սրբոյն Մեղտիադէ ի սարկաւագութեանն նախաձեռնարկեցաւ պատիւ ամենայնն ապա պատուով ուրախացեալ և բարեվայելչացեալ տան զբոլոր վիճակաւորսն։ Վասն զի առաքինութեանն և հարազատութեանն առ ի նորա վարս տեսչի ժառանգել ոչ ուրեք կարացին. այլ հեզ և բարեխաւս և քաղցրախորհուրդ գոլով և երկնայնոցն շնորհաց արժանաւորեալ շնորհս քաղցրս ցուցանէր. վասն զի գոյր տեսանել հրեշտակական, քանզի մաքրապայծառացեալ, գործովք սուրբ, տարփանօք առաքինացեալ, պարկեշտ անձամբ, խորհրդականութեամբ լի, հաստատուն ողջախոհ, յաղթող հաստատողական, սիրով անխզելի։ Այլ վասն զի շնորհս ողջախոհութեանն ոչ էր բաւական ասել, առ ի մասնաւորական նորա գործեցեալս դարձուցից զբանս։ Ս. Միլտիադոսի եպիսկոպոսի առ Աստուած գնացս առնելով...

---

[1]) Ср. у *М. Сократа*, стр. 498: „...անբաւ ի բանս առատութեան (Յոհան Ոսկեբերան), անդադար յառաջացանելն...“

[2]) Ср. у *Гр. Назіанзина* (Норайръ, Բանասէր, Բ., с. 60): „մանր ոսկերք և նախ տան ...ն կրկնեալ ի Մշեալութեան էան։“



### М. Хоренскій.

սէին տանել ի բնագաւառն իւր ի Տարօն, և ոմանք ի նախ աշակերտեալն Գողթն, այլքն անդէն ի Վաղարշապատ քաղաքի ի սրբոյն դիրս։ Բայց յաղթեալ բայցն Վահան Ամատունի, զի էր զօրաւոր հաւատովք և ճոխութեամբ մարմնաւորաւ. վասն զի ի ժամանակին յայնմիկ ի նա էր հաւատացեալ Պարսից զհազարապետութիւն Հայոց աշխարհիս. որոյ բարձեալ դադար զնա արժանի յուղարկմամբ յիւր գեօղն Օշական. և նոյն տեսիլ լուսեղէն խաչին ի վերայ երթեալ դադարեցն՝ յանդիման ամենայն ժողովրդեանն, մինչև ի հանգիստ զնա փոխեցին Վահան եւ Թադէոս նորին արբանեակք. և այս նշանն աներևոյթ լինէր։ Իսկ զաթոռ եպիսկոպոսութեանն տեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելւոյն Մեսրոպայ՝ նորին աշակերտ Յովսէփ քահանայ ի Վայոց Ձորոյ ի Խողոցիմ գեղջէ։

### Лазарь П'арпскій.

աւուր ամսոյն Մեհեկանի. զոր առեալ իշխանին Ամատունեաց Վահանայ՝ զմարմին առաքինւոյն տարաւ յիւր գեօղն, որ անուանեալ կոչի Օշական։ Եւ յոյժ մեծարանօք զգիր երանելւոյն կազմեալ, տօն յիշատակի առնէն ամենափոյթ պատուով ամենայն բազմութիւնք ժողովրդոց Այրարատոյ։ Զորոյ զհետ յաջորդեաց զաթոռ հայրապետութեան աշխարհիս Հայոց հրամանաւ երանելւոյն Մաշտոցի՝ սուրբն Յովսէփ, որ էր ի գաւառէն Վայոց Ձորոյ, ի գեղջէն որում անուն էր Խողոցիմ...

### К о р ю н ъ.

զէն Ամատունեաց, որ էր հազարապետ Հայոց մեծաց, եւ երկրորդին Հմայեակ ի Մամիկոնեան տոհմէն... Եւ մինչդեռ ձեռք սրբոյն ընդ երկինս կարկառեալ էին, տեսիլ սքանչելի խաչանման լուսաւոր շողաւոր ձև երևէր ի վերայ ապարանիցն, յորում երանելին վախճանէր... Զոր առեալ Վահանայ և Հմայեկի կազմութեամբ վախճանելոյ... և այնու խաչանշան լուսաւոր առաջախաղաց նշանաւն, յՕշական եկանէին և անդ ի մարտիրոսարանն մատուցեալ, զօրինաւոր յիշատակն կատարեալ, այս նշանն աներևոյթ լինէր, և նորա իւրաքանչիւր դառնային։ Իսկ յետ երից ամաց անցելոց յաջողեցան Վահանայ Ամատունւոյ քրիստոսասէր փութով խորան սքանչելի կանգնել՝ տաշածոյ վիմօք քանդակելով, և ի ներքսագոյն խորանին զսրբոյն հանգիստ յօրինեալ... ի հանգիստ խորանին փոխէ... Եւ զնորին աշակերտ Թադէոս անուն՝ զայր զգաստ և բարեպաշտօն հանդերձ եղբարբք երանութեանն հասելոց, սպասաւոր սրբոյն ի փառս Աստուծոյ կարգէին...

### Жит. св. Сил.

## М. Хоренскій.

զուարճութիւն, մասամբ ինչ յաղթահարեալ յորդւոյս։ Ո՞վ կարկեսցէ զյանդգնութիւնն ընդդէմ աստուծոյ վարդապետութեանն հոգևորական յորդորելոյն, որք ամենայն բանիւք քակտեալք և քայքայեալք՝ յոլով փոփոխեն վարդապետս և բազում գիրս, որպէս ասացումն ի հարցն. առ ամենայն բան նենգաւորս դժուարին և չար օրինակ գրեն զայն անյայտ՝ զձեռնարկեալն զմեղս և զարհամարհելն իւրեանց զանհնազանդութիւն և որ ոչ ինչ [вар. որ ինչ] պիտանացու ունիցին արուեստ։ Ո՞վ զնոսա ըմբերանեսցէ սաստելով և զմեզ սփոփեսցէ գովելով և չափ դնէ բանի և լռութեան։ Զմտաւ զայսոսիկ ածելով, հառաչանս յն է ներքս ընթանայ և արտասուք, և կամեցուցանէ բարբառել բան ողբական և աղէտից։ Եւ ոչ գիտեմ, եթէ զի՞արդ յարմարեսցից զողբերգութիւնս... Զհէքն իմ մանուկ և թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթար՝ ազգաւ ի բաց ընկեցիկն և նախ քան զժամ մեռելութեան անփառութեամբ... Զհա՞յրն իմ և զքահանայապետ... որ... զերաստանեալ է բանին առեալ[1]) ուղղէր զգէմն... Ո՞վ մեզ յայսոսիկ ճառակցէ հառաչելով տրտմութեանս և օգնեսցէ արտասուելով ասիցս կամ յարձանս փորագրել։ Զարթի՛ր Երեմիա, զարթի՛ր և ողբա հանդերձ մարգարէութեամբ... Վարդապետք տխմարք և ընդինքնահաճք...[2]) ուսկեսէրք... Կրօնաւորք կեղծաւորք, անձնացոյցք, սնափառք, պատուասէրք քան զԱստուածասէրք։ Վիճակաւորք հպարտք[2]), դատաւորք, զրաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից... Աշակերտք հեզք առ ուսուցանողն և փոյթ է վարդապետելոյ որք նախ քան զաշակերտութիւնն աստուածաբանեն։ Ժողովրդականք գէճք[2]), ստահակք... այրեցողք, վաշխակերք, փախչողք ի ժառանգութենէ։ Զօրականք անիրաւք... անձնամոլք[2]), կողոպտիչք... Իշխանք ապստամբք, գողակիցք գողոց... յափշտակողք, աշխարհաւերք, աղտեղասէրք... Դատաւորք

## Григорій Назіанзинъ.

**Слово Отцу** (рук. вѣн. мх., *l. c.*, стр. 126a). Եթէ պարտ իցէ զՍողոմոնին ասել պսակել, զհօր տարակուսեալ ի վայր անկեալ դժուարին. որքան լի տրտմութեամբ եւ տխրանօք. ով են ի տեղւոջ զալերոյ[2]) հանգուցեալ և ոչ է ջերմ հանգստեան սնեալ՝ խնդրէ զվախճանն մեռելութեան և ամայութիւնս...

**Слово, въ котор. онъ оправдываетъ удаленіе свое въ Понтъ** (рук. вѣн. мхит., *l. c.*, стр. 96 и слѣд.) ...Բայց զի՞նչ ասիցէ որ վասն սնափառութեան և կամ վասն իշխանասիրութեան զանիրաւութիւնն ի բարձունս խօսողացն... ո՞չ ընդդէմ Մովսիսայլ ճշմարտութեան զլինելոյ և ասողութեան վարդապետութեան հոգևորական յորդորելոյն, որք երրորդ մասինն անխրատութեան և որ զհետ նորին երթան խրատութեան յախուռն ամենայն բանիւ գիտեն վարալական ախտիւն և կոխեն զգեղեցիկ մարգարիտն ճշմարտութեան... Այլ երբեմն յայլմէ գանգատեալք եւ շրջեալք և ամենայն բանիւ դարձեալք և կոխեալք յոլով փոփոխեն վարդապետս և բազում գիրս. որպէս փոշի հողմովք դիւրագոյն ի բաց անկեալք և վաղջան տաժանին լսելօք և մտօք։ Ո՞վ անբանութեանս. առ ամենայն բան նենգաւորս դժուարին և չար օրինակ խորհեալ գրեն զայն. զ[ի] ձեռնարկեալն զմեղս և զարհամարհելն իւրեանց զանհնազանդութիւնս և որ ինչ աստուածագոյնս ունիցին, եւ զհաւատոյն զանցանեն անհանճարաբար յասողացն ի բանս...

Ibid., стр. 101a. ...որո՞վ սպառազինութեամբ առ ի չարին խարդախութիւնս զինեցայց, ո՞ր Մովսէս այսմ յաղթեսցէ... ո՞ր Յեսու յետ նորա զօրավարութեամբ աստուածային պատերազմացն հանդերձ մեք պատերազմեսցէ... ոչ և Յորդանան...

**Слово сестрѣ** (рук. вѣн. мх., *l. c.*, стр. 125a). ...Եւ այս սարսափումն իմն է ներքս

---

[1]) Ср. у *Филона* (In Exod., II, 115): „...զերաստանեալ է բանին առեալ արգելուլ զախտս“

[2]) Ср. *II Посл. Тимоѳ.*, 1—14: „Զայս գիտասջիր, եթէ յաւուրս յետինս եկեսցեն ժամանակք չարք. զի եղիցին մարդիկ անձնասէրք, արծաթասէրք, հպարտք, ամբարտաւանք... անձնայօժարք, վէտք, անբարեսէրք... ամբարհաւանք... ցանկասէրք մանաւանդ քան աստուածասէրք...“ — Ср. также апокрифич. *Видѣніе св. Меѳодія*, приведенное у Стеф. Орбеляна (гл. 31 по изд. Эмина).





## М. Хоренскій.

տմարդիք... խաբողք, կաշառառուք... Եւ ապա յանդիմանութիւն այսոցիկ զի՞նչ, եթէ ոչ անտես առնել Աստուծոյ, եւ դարձոյց փոփոխել զժամանակն[1])։ Գարունն երաշտացեալ, ամառն անձրևայոյզ, աշունն ձմեռնացեալ, ձմեռն սաստկասառոյց, մրրկալից, յերկարացեալ. հողմք բքարարք, խորշակաբերք. ամպք հրդեհելոյք, կարկտաբերք. անձրևք անժամանակք և անպիտանք. ցուրտ դառնաշունչք, եղեմնարկուք. ջրոցն առաւելուլն անօգուտ և նուազելն անհնարաւոր. երկրի անբերութիւնք պտղոց և անաճելութիւնք կենդանեաց, այլ եւ սասանմունք եւ դղրդմունք։ Եւ ի վերայ այսր ամենայնի խռովութիւն յամենայն կողմանց, ըստ այնմ՝ թէ չիք խաղաղութիւն ամբարշտաց[2])։ Զի թագաւորք տիրեալք խիստք եւ չարաչարք...

## Григорій Назіанзинъ.

ընթանայ և արտասուք միանգամայն յիշելով զսքանչելիսն...

**Слово Аѳанасію** (рук., *l. c.*, стр. 110b). ...Ո՞ր որք յԵրեմիա ողբասցէ զմեր խառնակութիւնս և զխաւարս, որ միայնն գիտէր հարմարեցուցանել զողբս աղէտիցն։

Изъ словъ **Назіанзина** (см. у Норайра, Քննասէր, Բ. стр. 60): Մանր ոսկերք և նախ քան զժամն կրթեալք ի մեռելութիւն։

Изъ словъ **Назіанзина** (Акад. слов., *n. c.* աստուածաբան:) Աշակերտք հեզք առ ուսուցանողն և փոյթ է վարդապետելոյ որք նախ քան զաշակերտութիւնն աստուածաբանեն։

---

[1]) Ср у *Ананіи Ширакаци* („О созвѣздіяхъ“, стр. 62—63 по изд. К. Патканова): „...Երկոտասանեքեան սոքա (կենդանատեսակք) շարժին չորիւք տարբերութեամբք՝ առ ի լինել մեզ տարեոր ժամանակի... եւ առնեն ջերմութիւն եւ ցրտութիւն, խոնաւութիւն եւ երաշտութիւն եւ իշխեն փոփոխմանց օդոց եւ ժամանակաց, բայց եթէ աստուածային ինչ հասանէ հրաման, վասն որոյ փոփոխեն դարձոյց բնութիւնս, թէ արդեօք յողորմութիւն կամ ի խրատ, որպէս զի լինել ի ձմեռնային ժամանակի ջերմութիւն, կամ յամառայինն ցրտութիւն, կամ ձիւնաբերութիւն եւ շնչումն առանձնանալոց, որ է արտաքոյ բնութեան ժամանակի եւ գիտելի նմա մերձենալ...“ — Ср. у него же („О движеніяхъ, происходящихъ между небомъ и землею“, с. 46—47): „...Ապա թէ լինիցի ինչ հետևանք չեասոց ի սաստիկ որոտալոյ, եթէ թէ կարկուտ եւ հրացանութիւնք, այս ի վերեւ ի բնութենէ ի սաստիկ ... է զերկիր Արարչին շնորհութիւն անզգամաց և ի խրատ այնոցիկ, որ զաւ և զերկիր ... եւ երաշտութիւնք զերկիր դալարայնինս իւրեանց։ Քանզի... անչափութիւն անձրեւոյ ողողանեն, եւ երաշտութիւնք զերկիր դալարայինս իւրեանց ... մինչև հարկանել մարդ եւ անասուն եւր ցամաքեցուցանեն, եւ ժանտախտ, սով, հիւանդութիւնս, մինչև հարկանել մարդ եւ անասուն առ հասարակ...“

[2]) Ср. *кн. Ис.*, LVII, 21: „Ոչ գոյ խաղաղութիւն ամբարշտաց, ասէ Տէր։“

ՀՀ Ազգային գրադարան
NL0845996